

954

h-75

A.B.C.


171

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՎԿԵՍԵՑԻՏԵԱՆ—ՄԵՐԳԵՐԵԱՆԵԱԿԱՆ

ԳՐԱԳԱՐԱՆ

Նուէր օր. Մարիամ Արամեանից՝ ի յիշատակ իւր հօր՝ բժ. Միսսիս Արամեանի.





3938

12004



4020

9(54)  
mu-75

78(-244)

ԹՈՎՈՒՄԱՆ ԻՕՂԱՄԱԿԱՆ

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԵՑԻՈՅ

ՊԼՏՄՈՒԹԵԼՆ ՆՆԳԿԸՑ

ՄԸՄՆ ԵՐԿՐՈՐԳ



ՄԸՄՆԵՒՈՐ ՍՐԵԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԶԱՆԻԻՔ

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԷ

Մ. Գ. ԹԵՂԻԳԵԼՆՑ Վ. Ը:



Ի ՏՊԸՐԱՆԻ

ԱԶԳԱՍԻՐԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Ի ԿԸՂԱԹԱ

1849.

58921  
4020

13099

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY


PHYSICS DEPARTMENT

PHYSICS DEPARTMENT

UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

PHYSICS DEPARTMENT



UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

PHYSICS DEPARTMENT

PHYSICS DEPARTMENT

ԳԵՐԱՊԱՏԻՒ ՏԻԿԱՅ

ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄԱՅ ՅԱԿՈՒ ԵՄՐ ՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՕՐԻՈՐԴ ԹԱԳՈՒՀԻՈՅ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՔԵՐՑ ՀԱՐԱԶԱՏԱՅ

ՄԱՐՑ ԱՐԻ ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԻԾ

ԵՒ

ԱՌԱՋԻՆ ԽՆԱՄԱԽՈՒՀԵԱՅ ՍՈՒՐԲ ՍԱՆԳՈՒԻՑ ԴՊՐՈՅԻ ՀԱՅՈՑ

Դ ԿԱԿԱԹԱ

ՋԱՅՍ ԴՈՒԶՆԱՔԵԱՅ

ՆՈՐՈՒԹԻՒՆ Դ ՀՆՈՒԹԵԱՆՑ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ

ՅԱՐՈՒՑԱՆԷ

Դ ՅԻՇԱՏԱԿ ԱՐԺԱՆԵԱՅ

ՆՈՑԻՆ ՏԻԿՆՈՒԹԵԱՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏ]ԵՒ ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ

Մ. Դ. ԹԱՂԻԿԱՆՑ

1848

THE

OF

AND

OF

BY

OF

OF

OF

OF

OF

OF

OF

OF

OF

UNIVERSITY OF CHICAGO



PHYSICS DEPARTMENT

The first part of the course is devoted to the study of the laws of motion and the principles of mechanics. The second part deals with the theory of heat and the properties of matter. The third part is devoted to the study of electricity and magnetism. The fourth part deals with the theory of light and the properties of matter. The fifth part is devoted to the study of sound and the properties of matter. The sixth part deals with the theory of heat and the properties of matter. The seventh part is devoted to the study of electricity and magnetism. The eighth part deals with the theory of light and the properties of matter. The ninth part is devoted to the study of sound and the properties of matter. The tenth part deals with the theory of heat and the properties of matter.

PHYSICS DEPARTMENT  
UNIVERSITY OF CHICAGO

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ՏՊԱԴԻՒՆ

Եթէ նա՝ որում շնորհեաց Աստուած զճօխութիւն ստացուածոց և գմեծութիւն մարմնաւոր՝ կերպարանել յերկրի զհասարակինամ՝ տեսչութիւն իւր, մատակարարելով կարօտաւորաց դատրուտան առօրեայ՝ իրաւունս ունիցի կոչելոյ «Նախախնամութիւն մարմնացեալ»,՝ ապա որքան ևս առաւելնա՝ որ աննախանձ ոգւով արդասիրութեան բորբոքեալ՝ անմահացուցանիցէ զմահացուն զկենաց • և դարուց ՚ի դարս կացունիցէ դնոսա ՚ի խօսուն խրատս բարեաց և ՚ի վարդապետութիւն բարուց՝ արժանի ոչ տեսանիցի փառաւոր վերադրութեանս՝ «Իմաստութիւն Մարմնացեալ» Երանի՛ թէ այսպէս հասկանային և կողմանքն • ոչ Իմաստութիւն զՆախախնամութիւնն, և ոչ նա զնա արհամարհելով • այլ աջակցեալ իրերաց, որպէս և կամք Աստուծոյ և հաճոյք՝ յառաջ աննիւն միշտ զօգուտն հասարակաց և զփառս մարդկութեան :

Յաւերժական յիշատակաց արժանի Հեղինակ զրոցս, զոր արդարև արժան է կոչել Իմաստութիւն Աստուծոյ մարմնացեալ՝ ժամանակակից թուի գոլ մեծահամբաւ Աղայ Պետրոսի Յարութիւննան՝ Հին Երևանցւոյ, և զբօր նորա՝ Գօրգին խանի, և Քաջացն հայկազունեաց՝ շուրջ զնոքօք : Որ ընթեանուողիտմունս Բօլտսի ուրումն Անգղիացւոյ զիւրօք կառավարութեան աշխարհիս հնդկաց, գտանելով գտանէ զնա՝ նախ նաւապետ ՚ի ծովու • և ապա՝ երևելի փաճառական ՚ի ցամաքի • որ և Անգղիա չոքաւ ամբաստան զբանակալութեանց Վէնտադայ փոխարքայի հնդկաց, և զամս բազումս տուայտեալ յատենի Օւերակուտին՝ անդր անց քան զամենայն աչառանս և զկողմնապաշտութիւն սղզին, և պարտաւորեաց օրինօք զապօրէն իշխանն տուժել իբաւանց իւրոց մերձ զհինգհարիւր հազարս դահեկանաց :

Մեք ընդ այս ոչ զարմանամք, բառ որում բուն Հոյոյ բընութիւն է քանդել և քանդել ՚ի վէճս՝ բազում անգամ ՚ի սնտոսի : Այլ երախտագէտ լինիմք մանաւանդ՝ որ ՚ի միջոյ այնքան զբաղանացն և պատաղմանց՝ որոշեաց զեռ զմասն աշխատանաց իւրոց վասն ազգին և զհնեաց : Դոր ոմն այս Մարտիրոս Աստիճացի՝ տեղեակ բուն պարսիկ, հնդկի և անգղիական բարբառոց՝ յամին 1768 մուտ նտխ ՚ի զիւան մեծագոր ինքնապալութեան հնդկաց, և հան անտի մեզ զհամառօտ՝ բայց և զհարադատ պատմութիւն հարստութեան Ազուանից, սկսեալ ՚ի Փիբուզայ ցԱլիզոհար Շահալէմ : Յինքն արծարծելով զողջիր և զազգասէր եռանդն անմահացեալ Աստիճոյ մերոյ պատմութեան՝ զՄոսխոսի Խորենացւոյ, հաւաքեաց աստի և անտի նիւթս, և եթող մեղ զանբաւութիւն ծանօթութեանց զպէսպէս զարանեաց աշխարհին : նա մանաւանդ՝ զարիտիան հանդիսից մերոց քաջարանց, որ առանց սորա՝ ՚ի խորս մուսուցութեան անհետացեալ զնային արդեօք :

Բուն ձեռագիր սորա գտաւ առ պարսն Օստուրի Յարութիւնեան՝ յԱզրա : որ գուրվ ՚ի վերայ չինացի թղթոյ՝ ցեցտակալ էր անդր քան զվերծանութիւն : զըր տեսեալ Երանելւոյն Պօղոսի Աստուանցւոյ եպիսկոպոսին Էջմիածնի ՚ի զընալն դեպ ՚ի Գուալիէր՝ բազում թախանձանօք խնդրեաց, առ ՚ի նմանէ, և ՚ի ձեռն Պարսն Գարբիէլի տէր Արդրեասեան՝ օրինակաց շղագիր՝ նոյնպէս ՚ի վերայ Չինացի թղթոյ : — Չոր բերեալ ընդ իւր ՚ի Կալիպթա յամի Տեառն 1822, մատոյց ՚ի վերծանութիւն Տիրացու Մարտիրոսի Մկրտչեան Գաւթեանց որ յայնմ ժամանակի հրատարակէր զամազգիին «Շահմարան» կոչիցեալ : Ար թէպէտե յօժարեցաւ սրբագրել, և ապագըրութեամբ ՚ի լոյս ընծայել, սակայն ձեռքն կարծ յօգնակաւնութենէ կարողաց պղքիս՝ լքան և լքին զգործն տարծանաւ որ : Տես յԷջ 763 — 9167 Շահմարանի նորա :

Մնաց գիրքն առ Երանելւոյն Պօղոսի Աստուանցւոյ եպիսկոպոսի Էջմիածնի, մինչև հասի նուաստս ՚ի Հնդկաստան

յամի Տեառն 1823, և արժանացայ շնորհ ընդունել զայն և ձեռանկ նորա : Անգէտ միւս այլ ամենայն լեզուաց աշխարհս՝ սկսայ յեղուլ զգործն բովանդակ և բարբառ Հայրենի . բայց խառն և խուռն կուտակութիւնք բանից , անյարիբ արամագրութիւնք , նորանոր սձք բանից , և այլն՝ ( զորոց մեծապէս զանգատէ և նախորդ մեր Տիրացու՝ ) շխտեցին զմիտս՝ քան թէ շեջուցին զծարաւ նորասկրութեան իմոյ :

Կամեցեալ ծովանալ պատմութեամբ շնորհաց՝ ջանադիր եղէ ուսանիլ զԱնգղիացին բարբառ . և նախ առաջին և ձեռքերի ոչ միայն զհնդիկնակութիւնս աղգին յայն նիւթ՝ այլ և զթարգմանութիւնս նոցա . զորս քանի շատ քննեցի , այնքան և սակաւ ինչ գտի յողագս . Քաջութեան աղգիս մերոյ : Չի նսքս հագիւ ուրիք թէ յիշէին զանուն աղգիս և շնորհատան :

Այժմ՝ երկու ինչ առիթ եղին ինձ և Կարգութիւնս սրուն . Մի՛ զի և ծնանիլ “Աղգասիրին” իբրև երեք ամօք յառաջ սկսայ կրկտել և ի լոյս հանել զՊատմութիւն զբաղիտութեան՝ Աոր Ջուզայ . յուսալով, զի պատուելի գրագիտունք նորա օգնելոց էին տկարութեան և հեռաւորութեան մերում՝ պէսպէս նշխարօք հնութեանց առ ի լոյս ձեռնարկութեանս իմոյ : Բայց մինչ ցարդ՝ և ոչ տող մի ի նոցանէ :— Երկրորդ՝ զի տարապարտ արտունջ յառնէր աստանօր , թէ Վուղայեցի փող մուրալով՝ տպէի զոր ինչ միայն իմ՝ Գրտեցեոյ . և պարծանս անձին և եթ : Այսն որոյ ջանացայ զի դարուց զանց արարեալն անկութեամբ Ջուզայեցոց՝ ի լոյս ընծայել զարգիս . որպէս զի՛ ծանխցեն իմ՝ սիրելիք թէ ոչ առ երես ինչ կեղծաւորիմ՝, այլ ճշմարտապէս և ի սրտէ սիրեմ՝ զանուն և զյիշատակս ամենայն Վուղայեցի աղգասիրաց :

Պատճառ Երկրորդն առնելոյս , սոսինքն՝ զերէցն և քեռուոյ զստերաց աստի՛ զառաջին հատորն թողլոյս՝ և վասն կրտսերոյ՝ Երկրորդ Հատորոյս՝ զծառայութիւն զայս ծառայելոյս , տեսմ՝ . նախ՝ զի բուսական միջոց առ ձեռն պատրաստ չունէի և ծախս երկոցուն միանգամայն . և երկրորդ՝ զի սա առաւել

լուսէր զազգային պատմութիւն մեր՝ քան զառաջինն . թէպէտ անդ ևս ոչ պակասին արժանի յիշատակաց՝ նշխարք ազգային անցից :

Յայսմ՝ աշխատութեան՝ սրբագրեցաւք միայն զտառս ինչ և զրառս , և ուր ուրեք պակասէր՝ եղաք զազգային ոճն , ջանացեալ ամենևին անխորտիս սահել զմիտս Հեղինակին ՚ի բարբառ իւր և ՚ի տրամադրութիւնս — յաւէտ ուշադիր զանուն և զանմահութիւն Եղբօրն յարուցանելոյ՝ քան զանձին շահ և համբաւ :

Պարունակութիւնք աստ՛ջնոյ հատորոյն են , Պատմութիւն Ազգան . թագաւորացն հնդկաց ՚ի Փիրուզոյ ցԱլիզոհար Շահալէմ 455 ամօք : Չափ ասրածութեան հնդկաց աշխարհի — թագաւորանիստ մայրաքաղաքաց — [ Կղուաց , — Երկոտասան պաշտելի զետոց , Տօնից կամ ջաթրայից , և Քրիստոնէութեան ազգին Մայրաքաղաքաց : Ուր և յաղագս հովուելոյ Հայոց զեկեղիցին Ատրուոց՝ որ ՚ի Քօչին , և սքանչելաց Ստեփանոս վարդապետի՝ յիշատակութիւնք բանից : Զորոց այսպէս զրէ թարգմանելն :

“Ո՛պէս” իմ սփոխ գիրս Բարգճմանուէն :

ԹԻԻՆ 1768 , Դամայ 15 . ՚ի թագաւորանիստ քաղաքն Էրաբաղ՝ ՚ի ժամանակի Շահ Ալէմին , ուր էր թագաւորիս մեծ Իլիւանն Խալսու (էր) անդ . որոյ անուն էր Ռաջա Սէրիբաթ . և միւսոյն՝ ռաջա Գրիբան , որք էին ինձ բարեկամք : Մեծաւ աղաչանօք և փափազանօք ՚ի սոցանէ ընկալայ , ՚ի միջի 12 աւուրց թարգմանեցի մի ըստ միտջէ ՚ի Փարսիացւոց զբեանցէ արքունուստ ՚ի բարբառ մեր , որ եղև աւարտ Դամայ 26 ու մն : Որ և աղաչեմ (՚ի) հանդիպողաց կամ կարգացողաց և թէ օրինակողացս՝ յիշէք զիս ՚ի յաղօթս ձեր ՚ի ՏԷՐ . և դուք յիշեալ լիջիք ՚ի նմանէ՝ որ է ԱՍՏՈՒԱԾ և Տէր ամենեցուն :

Նուստտ ամենեցուն և ծառայ  
ԹՈՎԹԵՍ ԽՕՋԱԲԼԵԱՆ  
ՆՈՐ ԶՈՒՂԱՅԵՅԻ ”

Իսկ պարունակու թիւնք Երկրորդ Հատորոյս են՝ թէ սրբէս տիրապետեցին Գաղղիացիք երկրին Կաքանայ. թէ զհարգ ըրանացան Անգղիացիք Ի վերայ նոցա . և ապա ընդ ձեռամբ զբառեցին զմեծ մասն Հնդկաստանի . թէ Հայք սրբէս զօրացան և տպա նուաղեցան , և թէ՛ Ակոսար շահ սրբէս որդեգրեաց իւր զորդի Զուղայիցի Պարոն Յակոբ շանին :—

Հաւատարմութիւն Հեղինակին մերոյ յայտնի երևի , որոց զիտիցեն զՊարսիկ և զԱնգղիական բարբառս , յորոց իւր Ի բուն աղբերաց հեղտնոսան վտակ հանեալ զայս իւր պատմութիւն՝ ոչ միայն անպատր պահէ զպարզութիւն և զստոնութիւն նոցա՝ զճշմարտութիւնն ասեմ՝ և զանաչառութիւն , այլ և ընդ երկիր բարի անցուցանելով զայն՝ յաւելու Ի վերայ և զախորժ իմն քաղցրութիւն՝ զլիապատում անցս մեծամեծ առաքինութեանց նախիկն Գաղթականացն մերադնէից և զմարդկօրէն մոլութիւնս նոցա :

Նրբամիտ Հեղինակն ոչ զանց առնու աւաղել զագղային պակասութիւնն յընթացս պատմութեան իւրոյ : Իրաւամբ զբարովէ զնոսա և Պարոն Մնացական Վարդանեան Ի Յորդորակի իւրում առ աղդն՝ վասն հաստատութեան ուսումնարանին Ի Վալիաթա , և աշալուրջ ընթերցօղն ոչ կարէ զսպիւ զարտասուս իւր ընդ աղէտալի օտարասիրութիւն և անմիարանութիւնն՝ որով՝ որպէս առարկայք պատմութեան՝ նոյնպէս և արդի հասարակութիւն մեր Ի Հնդիկս , արհամարհեն զերեսանցն , սրտակառւր առնեն , իրր ընդ անպիտանս մերժեն : Բայց ընդ հակառակն՝ երբ զօտար ոք տեսնեն՝ ծնրին առաջի որպէս թէ հրեշտակի յերկնից իջելոյ՝ որ ռոներն ամպաթաթանիս Ա՛վ ոչ զարմանայ և ընդ անձնասիրութիւնս նոցա , որք այնքան մեծութեան և իշխանութեանց հասեալ , ոչ զմասաւ սծին զարդ իւրեսանց և զսպազայս՝ թողուլ զկենաց զոնէ զօրճնութիւն յիշատակացն : Սոսկ անձանց ծնեալք զոզլեր , անձանց ապրեցան , և ունայնացան : Ա՛վ . ելանի թէ այժմ իսկ Ի մտառնուցուեն ամենայն անհատք ազգիս առ հասարակ , թէ մարդ

ինչ, և քաղաք ինչ: Թե՛ ընդէր զազանարար յամայնս անդր ո՛չ բնակիմք, անձանց միայնոց հայթհայթել զաղբուսան սակաւ տալէս: Ընդէր քաղաքս կառուցանիմք և ՚ի կողս իրերաց խցիկիմք, և թէ՛ վասն անձանց միայն ծննալք, և ո՛չ ազգի և աշխարհի: Խորհեսոյն ամենայն ոք, որ եթէ իւր իցէ անկանել զսզանիւնս, հանդերձել զկերակուր, շինել զտուն բնակութեան, և հոգալ զամենայն պիտոյիցն՝ զորս առօրին պահանջէ, ո՛ր զանաղանութիւն մնայր ընդ մէջ իւր և աղքատիկ մշակին: Տես որ հարուստ պէտս ունի ծառայութեան աղքատին, և աղքատն՝ խնամոց և բարերարութեան հարստին. և այս՝ կամօքն Աստուծոյ, սպաս թէ ո՛չ՝ կարգ աշխարհիս աղաւաղէր, մեծ ու պատիկ ո՛չ որոշէր, և Բարիլն խառնակութեան տիրէր ՚ի վերայ ամենեցուն. — Դու՛ որ սյոօր ունիս և կծծանաս առ աղքն, զուցէ վաղիւ ո՛չ ունիցիս. ընդէր սպան չվարիցիս այսպէս՝ որպէս կամիս թէ և այլք վարիցին ընդ քեզ: Աշխարհս վտու է: Ոչ ոք ՚ի վարթամաց տարաւ զդանձ իւր ՚ի գերեզման. և դու ևս ո՛չ տանիս. ապա ուրեմն զերկուս յայտնի երեւցուցանես ՚ի կծծութեան քում. մի՛ զի յարժաթքս առաւել յուսաս քան Աստուած՝ որ ետ քեզ զայն, Եւ միւս՝ զի անձին և եթ ծնեալ՝ ո՛չ զիտես թէ զինչ՝ ազգն իցէ, և զինչ պարտականութիւն քոյ առ նա: Արդ թէ առաջինն՝ արժաթապաշտ ես քան աստուածապաշտ, խկ թէ երկրորդն՝ լաւ ևս էր քեզ ընաւ ին ո՛չ ծնանել յաշխարհի: —

Եւ զինչ՞ արդեօք ճար կամ ճանապարհ ընդգէմ այոց և այսօրինակ մտլութեանց աղբիս յամենայն ուրեք, եթէ ո՛չ Գիտութիւն և Գործունէքութիւն՝ սիրով և միարանութեամբ յաւըղեալ: Ուր սեր և միարանութիւն լիցի ՚ի բարին՝ անդ և Աստուած է ամենայն փառօք իւրովք, և ուր Աստուած ներկայ լիցի ամենայն փառօք՝ չգիտեմ զի՛նչ այլ պակաս լինիցի:

Ճշմարիտ որքան և իցին գրեալքս ցոյս վայր՝ հետեւելով Հեղինակիս՝ և ամենայն աղղային Պատմարանից, դու ևս կան նկատելիք ինչ՝ որք ո՛չ միայն մեղմեն զկշտամբանս, այլ նա և

բարձրացուցանեն զպարծանս ամեներան Նախահարց :

“ Գաղով կտաւ չափողանին , որպէս զրեն Մարչմէն և այլք ՚ի պատմչոց անզղիացեոց՝ առանց սե իցէ կատարեալ կրթութեան և հրահանգաց , միայն բնական հանճարովք իւրեանց կարացին հրացանս և թնդանօթս թափել՝ ոչ ինչ ընդհատ յարուեստելոցն ՚ի Լանդոն :” Եթէ ազգն՝ անմտաղիբ արուեստից՝ չզիտիցէ զյարգ արարածոց նոցա՝ տակաւին կայ Մուշկէր , երբեմն մայրաքաղաք իշխանութեան Աստուծալիայ՝ որ իրբև զպաշտպան սրբոյ ուրուք , կամ զպահապան հրեշտակի առնու զանուն ԳՈՐԳԻՆ, խանի մերոյ՝ որ ուսոյց նոցա զարուեստն հրագինագործութեան , — Ի դառնալ իմում ՚ի հայրենիս իմ , զնեցի գհրացան մի Մուշկերացի և բարձի անդր : Ոչ միայն գիտունք արուեստին զինագործութեան , այլ նա և զօրութիւնք Ռուսաց՝ որ անդ , և զլիաւորքն ՚ի նոցանէ՝ ոչ կարացին որոշել եթէ անզղիազոր՝ արդեօք , թէ օտարագործ :

Այն մեծ պատիւ զոր տայ Ազգիս Անզղիացին՝ իրբև վարժապետի իւրում յարարս և ՚ի յաջողուածս աշխարհիս , նոցա խոհեմ և ամենահնար հանճարոց է արդասիք : — Հայեանց ՚ի մեծն Սահրազ , ՚ի բնակիչ Սուբաթայ , որ դեսպանութեամբ յաւեա՝ քան ընկերութեամբ դեսպանին անզղիացեոց չոքաւ առին քննալալն Մուղալաց , և եզիս նոցա զմեծ արածութիւնն ազաւ առի և արոյ յաշխարհիս այսմիկ : — Իմաստութեամբ և աչալընութեամբ Հայոց առաջնորդեալ Անզղիացեոց՝ գտին գլեմ զայս տէրութիւն : Եւ եթէ ուրանան զայն , սր այլ երախտիք է՝ զորս ճանաչեն նօքա , կամ՝ փոխարէն հատուցանեն :

Ասիցն ն իմաստունք յաշխարհագիտաց թէ՛ եթէ կարացին Հոյք պարգևել այլոց զայն քան մեծութիւն , ընդէր անծանց և գաւակացն չպահցին զայն :

Պատասխանեմ ՝ վասն զի հատեալք էին զլիովին ՚ի բուն արմատոց իւրեանց : — Համարեանց թէ ՚ի վերայ Հայոց յարձակէր Շիրազդպէա անհուն բազմութեամբ , և խնդր զամենեսին ՚ի բանս խաւարային , որպէս արար անզղիացեոց , սր նաւք Հայ-

աստանի պատրաստի կային փրկութեան նոցա • կամ որ զօրք՝ յարդար վրէժինդութիւն զրկանաց նոցա • Շաաաւ իղք անարմատք • եթէ այսքան և ս աճեցան • մեծ պարծանք են մեր հէր մնաց զի պողարերեցին մեզ նաև զանուն իմաստութեան և քաջութեան իւրեանց • և արեամբք իւրեանց զրեցին զմեզ Ազդ ճարտար և ամենահնար յաշխարհ ամենայն • — Արք անգոսնեն զնաքօք՝ թող զլու և ս անուն ինքեանք վաստակիցեն անձանց և զկնեացն՝ բովանդակ ուսմամբք և լուսովք իւրեանց • թող •

Երանի թէ ամենայն ոք հասկանայր • զի միտք մարդկան ՚ի ինամս չարին հաստատեալ՝ յօժարամբ առնէ զնոսա առ չարն՝ քան թէ առ բարին • Թէ՛ որք ՚ի միջոյ չարեացն անդամ կարիցեն արտաքս ցոլացուցանել զբարեգործութիւն ինչ՝ որպէս արիի համապայծառ ընդ պատառուածս թղբայորդ ամպոյ՝ զիս և ս սիրելիք են • զիս և ս պատուելիք են • զիս և ս երախտաւորք են • Անողորմն Պետրոսի մի ճաթն աղքատաց տուեալ՝ ծանր գտաւ ՚ի կշիւս երկնաւոր Արդարութեան • քան զամենայն կարծրութիւն քարատրտութեան նորա • Իսկ մերոց ամենագովելի նախահարց զիս և ս բարիք անբուք մեզ որք մինչ ցայսօր յարատեւն • Ապրախաք ապա ընդէր գոանիցիմք երախտեացն • զի՛նչ զօր ունիմք նոցայն չին • զի՛նչ զօրս վայելիմք ՚ի նոցանէ չին • անուն աղպի ասն • պատիւ • եկեղեցի • ուսումնարան և զորս ՚ի կարգին • Ո՞ր ՚ի մէնջ իւրով կառկանալովն շտարոտի ճղանաց և ճարճատանաց արժանացաւ տէրունական տօնից և հանդիսից մայրաքաղաքիս • Քաջ և Իմաստուն Ապրախիք մեր թողին մեզ զայս ամենայն • — վասնորոյ և ես պարտանձին համարեցայ զայս զուղնաքեայ Շիրիմ՝ յարուցանել արժանեաց անմահ Յիշատակի Աոցա • և մնալ ամենասիրելի Ազգիս •


Իւոնարճ Ժառայ

# ԹՈՎՍԵՍԱՅ ԻՕՐԱՄԱԼԵՆ

ՆՈՐ ԶՈՒՂԱՅ ԵՑԻՈՅ

## ՊԼՏՄՈՒԹԻՒՆ ՀՆԴԿԱՅ :

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ



ՆԵՐԱԾՈՒԹԻՆ

Վասն բէ յորո՞ճ Ժամանակի, իմս որդե՞ս էին Եւո՞քա՞ն  
«իւրքն ՚ի Հնդորան» :

ՔԱՆԶԻ ՚ի Հնու մն բազում Փիլիսոփայք  
կարծէին թէ ոչ գոյ բնակութիւնն ՚ի այրեցեալ  
գօտին՝ վասն սաստիկ ջերմութեան արեգական .  
որ մինչ յամի Տեառն 1499 Վասիօ դէ Պամայ,  
ազգէ Փուրթբէշի ոմն յոյժ վիլիսոփայ կառա-  
վարիչ նաւավարութեան ՚ի քաղաքէն Փուրթ-  
քալայ զննութեամբ արհեստիւ վասն ստուգու-  
թեան, և ստուգել զբանս՝ առեալ երկու նաւ  
եւ յերկրէ իւրմէ, որոնելով եկն մօտ ՚ի ցամա-  
քի՝ ՚ի կողմն արեմտեան աշխարհին | իբէտ-  
ցոյ՝ որ այժմս ասի Աֆրիկիա՝ նաւով, մօտ

'ի ցամաքն 'ի շաւիղն Հարաւոյ մինչև Հասեալ Հասարակածուն՝ որ է այրեցեալ գօտին .  
 և տեսեալ թէ ոչ այրէր՝ զոր նախ մտածէին .  
 կրկին գնացեալ առ 'ի ստուգել զվերջն երկրին  
 Ափրիկու մինչև Հասեալ 'եզըն նորին որ  
 է 54 աստիճանն 'ի Հարաւոյ լայնութեանն .  
 Տեսեալ զվերջն երկրին՝ (որ) կոչեաց զանունն  
 նորա՝ Բարի Յոյս , այնմիկ տեղոյն՝ որ ըստ  
 նոցայ բարբառովն՝ Բօնա Ասպրանսայ : Յետոյ  
 վերագառնայ 'ի տեղոյն 'ի կողմն Հարաւոյ . ապա  
 շրջեալ զգլուխ նաւին 'ի կողմն հիւսիսոյ . և  
 նաւով եկեալ Հասեալ մինչ 'ի նաւահանգիստ  
 արն Ա քրեացոց 'ի կողմն արևելեան ( ) վկիանոսի  
 ծովուն՝ որ ասեն Ս ասամբիք , և տեսեալ  
 զի բազումք նաւք գային և ձքեցին զխարխոխ  
 նաւին իւրեանց մնալով անդ առ 'ի ստուգել  
 թէ ուստից գան նաւքն , կամ որոյ յերկրէ եկեալք  
 են : Որք գնացեալք 'ի ցամաք՝ գտան  
 անդ բազում աղգէ Հնդկաց վաճառականք ,  
 Հաւատովք քրիստոնեայք 'ի սրբոյն առաքելոյն  
 Թաօմայէ և 'ի նորին շառաւիղացն Հաւատացեալք՝  
 եղեն յոյժ ուրախացեալ Բէ վաճառականքն  
 և թէ նաւավարքն , և յետ քանի աւուրց  
 առեալ Վուրթ քալցոցն խնդրեն ըզնաւ  
 վաճառականացն , և չու արարեալ նաւե

ցին 'ի կողմն հիւսիսոյ , որ է մէջ հիւսիս և 'ի  
 ցամաք 'ի քաղաքն Մալվարաց , որ կոչի Սա-  
 լիկօթ . որ է 11 աստիճանն 16 բոպէ 'ի հիւ-  
 սիսոյին լայնութեան . և ձգեալ զխարիսխ  
 նաւին և գնացեալ 'ի ցամաք 'ի քաղաքն նո-  
 ցայ , և տեսեալ զամենայն որպիսութիւնն  
 երկրի և զվաճառն նոցայ՝ մնալով անդ զս-  
 ւուրս ինն . և ապա ելեալ գնացեալ սակաւիկ  
 մի 'ի կողմն հիւսիսային լայնութեան 1¼ աս-  
 տիճան . և գտեալ 'ի ցամաք փոքրիկ կղզի մի  
 'ի յաւուրս տօնախմբութեան հրեշտակաց 'ի  
 Մեպտեմբերի 29, վասն այնորիկ անուանեցին  
 զանուան տեղոյն Անժուդիօ : Ասն նաւելոյ  
 'ի յերկրին իւրեանց ոչ էր եղանակ , մնացին անդ  
 մինչև փոխեալ հողմն հարաւոյ և կանգնեալ  
 'ի կողմն հիւսիսոյ : Ապա անտից նաւեցին  
 եկին 'ի յերկիրն իւրեանց՝ 'ի Պուրթուքալ :  
 Յորժամ զգալուստն սոցա լուաւ թագաւորն և  
 ազգն իւրեանց՝ ուրախ եղին յոյժ , տեղա-  
 կանալով որպիսութեան Հնդկաց , թէ ճանա-  
 պարէն , և թէ Հնդկաց ազգացն քրիստոնեայ  
 լինելն 'ի սրբոյն թոմայէ առաքելոյն : Ապա  
 պատրաստեցին բազում նաւս հանդերձ զօրա-  
 կանօք և ամենայն պատրաստութեամբ վերս-  
 տին դարձան եկին 'ի Հնդստան . մինչ հասան

'ի կղզին Անժուղիա , և անդ շինեցին ամրոց և  
 բազում բնակութիւն իւրեանց . և սկսան  
 առնել վաճառականութիւն ընդ ազգին հնդ-  
 կաց . սակաւ առ սակաւ բազմանալով բազմա-  
 ցուցին զվաճառն իւրեանց . մինչև լցեալ  
 եղև ամենայն ծովեզրն հնդկաց . և շինեցին  
 ամենայն տեղ բազում ամրոց և քաղաք : Որ  
 և շինեցին զմայրաքաղաքն մեծ և անուանի,  
 և կոչեցին անունն նորա Պուա . որ է տեղի  
 կողմնապետի՝ այսինքն Փուրթ քէշի արքային  
 իւրեանց . որ մինչև ցայսօր է 'ի ձեռս Փուրթ-  
 քէշաց : Եւ գոյ բազում քաղաք և բազում  
 զինուոր և շատ քահանայք աւել քանզ 2000 .  
 և քաղաքս է 15 աստիճանն հիւսիսոյ լայնու-  
 թեան , յետ բազմանալոյն սոցա՝ շինելով զամ-  
 րոց բազում , և սկսան նաւել վաճառական  
 կերպիւ յայլևայլ տերութիւն , թէ յերկիրն  
 Պարսից , թէ Արաբացոց , թէ ի Իբէա-  
 ցոց , և շինեցին ամենայն ծովեզրն նոցայ  
 ամրոց և արարին վաճառականութիւն : Ա-  
 սլա գնացեալ 'ի կողմն արևելեան յաշխարհն  
 Փէգուացոց , Մալայացոց , ուր գոյ բազում  
 ոսկի , և է մեծ թագաւորութիւն Չինաց . և  
 մեծամեծ կղզիք՝ որք են Սալայ . Սումատ-  
 րայ , Տիմօռ . Բոունէու . (որ է՝) Սելիան , բա-

զու՛մ կղզիք Մալբուխաց , Լակաղիւխաց և այլ  
 բազում կղզիք . և զամենայն թագաւորութիւնն  
 շրջելով շինեցին ամրոցս և առնէին վաճառա-  
 կանութիւն . Իւ փարթամացան յոյժ , որ ժողո-  
 վեցին բազում գանձս ՚ի սահաւում ժամանակի ,  
 առանց պատերազմաց . և անաշխատ զոր ինչ  
 կամէին և առնէին՝ յաջողէր նոցայ : Բայց  
 քանզի այնմ ժամանակի թագաւորութիւն շնդ-  
 կաց էր ՚ի ձեռս ազգին Ազվանաց , որք ոչ գի-  
 տէին զթագաւորութեան կառավարութիւնն ,  
 քանզի զոր ինչ ունէին բաւականէր նոցայ . և  
 ոչ ոք թագաւորք քրիստոնէից մինչև ցայնմ  
 ժամանակի կամեցեալ էին առնել վաճառա-  
 կանութիւն , թէ ոչ՝ միայն թագաւորն և ազգն  
 Փուրթբալաց . մինչ յամի Տեառն 1628 յետ  
 մեռանելոյ թագաւորին Փուրթբալաց՝ որ զամե-  
 նայն երկիրն յանձնեաց Սպանիացոց թագաւո-  
 րին : Բանզի ոչ ունելով զաւակ կամ թագաւո-  
 րազն , և թագաւորն Սպանիացոց անփոյթ առ-  
 նելով յանհոգութիւն մնալով վասն մեծի գան-  
 ձուցն իւր , և ունենալով պատերազմ ընդ ազ-  
 գին Լոթրանաց Սպանիզդի՝ յամի Տեառն 1640  
 Շոթանդացիքն բազում նաւօք զհետ Բրի-  
 տանացոց , այսինքն Ինկիզի , եկեալ կալան  
 զամենայն ամրոցն Լուսիտանացոց՝ այսինքն

Փուրթբէշի որք էին (Ի ԲԷ) մեծամեծ կղզեացն  
 Մալայեցոց և այլոց . և այլք թագաւորք  
 կալան իւրեանց տէրութիւնն զմնացեալն . և  
 միայն մնաց 'ի ձեռն Փուրթբէշաց այս կղզ-  
 զիքն՝ որ մինչև ցայժմ ոչոք կարաց առնուլ .  
 նախ Ղուայ , ամբոցն Անջոդիո , և ամբոցն  
 Հիւսիսային լայնութեան 'ի դաւառին (Ռո-  
 սամփոռայ) որ կոչի Ռասէն , 20 աստիճան և  
 30 բոպէ . և 'ի նոյն լայնութեան ամբոց մի՝ որ  
 կոչի Ղաման . և ամբոց մի 'ի աշխարհին (Թթէ,  
 'ի Բեռ , կղզոյ միոյ) որ կոչի Ղիոյ , որէ 22 աս-  
 տիճան Հիւսիսային լայնութեան . և ամբոց մի 'ի  
 թագաւորութեանն Չինաց՝ 'ի քաղաքին Ղան-  
 թամոյ մօտ , որ կոչի Մաքալ . և է յոյժ զհզե-  
 ցիկ և գոյ բազում եկեղեցիք ազգացն իւր-  
 եանց , և է 'ի վերայ միոյ կղզոյ 23 աստիճան  
 Հիւսիսային լայնութեան և է մերձ ցամաքին  
 Չինաց՝ որ կոչի Ղանջլայ . և 'ի նոյն ծովին  
 կայ ամբոց մի 'ի միջ կղզոջ՝ որ կոչի Տիմօն .  
 որ է 5 աստիճան հարաւային լայնութեան ,  
 Այս էր որ մնաց 'ի ձեռս Փուրթբալաց :

Եւ յորժամ եկին Սթրան ազգն Հօ-  
 լանդիզ և Ինգլիզն 'ի Հնդիկս . և տիրապի-  
 տեցին զկղզիքն և զամբոցքն 'ի ձեռաց Փուրթ-  
 քեշաց , ազգն Հնդկաց ոչ առային թոյլ Սթ-

բանայն վաճառականութիւն առնել : Յամբ  
 Տիտոն 1642 ազգն Ինդլիկաց գնացին 'ի քա-  
 ղաքն Շահանարադ առ թագաւորն Շահ-  
 ջան և խնդրեցին վասն հրամանի՝ զի արաս-  
 ցեն վաճառականութիւն 'ի քաղաքս Հնդկաց .  
 և թագաւորն ետ հրաման թէ “ եկայք և վա-  
 ճառեցէք խաղաղութեամբ :” Ար ել հրաման  
 ընդ ամենայն տէրութիւն իւր թէ՛ ազգն Ֆլ-  
 ոանկաց ամենեքեանն գան և առնեն վաճա-  
 ռականութիւն , որ միայն առնուցուք զհարկն  
 թագաւորական՝ այսինքն պրմիթ (W... ) կամ  
 ուղերձ : Այսպէս գնային և գային մինչ 1695  
 'ի թագաւորութիւնն Այամգիր ( ) վտանգերին ,  
 որ էր յայնմ ժամանակի վասն պատերազմու-  
 թեան 'ի յերկրին Պաքանայ . եկեալ գետպանն  
 Ֆռանգսիտաց և խնդրեցին զտեղի բնակութե  
 վասն վաճառականութեան , նոյնպէս և այլք  
 Եթրանցիքն հառն արդի թէ՛ ամենայն գա-  
 լառապետքն քոյ ոչ տան թոյլ , և ոչ տան տեղ  
 առ 'ի շինելոյ զբնակութիւն վասն վաճառա-  
 կանութեան , և կամ շինելոյ և պահելոյ զնաւս  
 մեր . յայնժամ թագաւորն ետ հրաման իւր ամ-  
 նայն տէրութիւնն , որ ամենայն Քի ազգին  
 Ֆռանկաց տան տեղի բնակութեան երեք հա-  
 ղար ձեռն , որ է 59 բիզայ . զի շինեսցեն քառան-

գիւնի իւրեանց զքնակու թիւն վասն վաճառա-  
կանութեան . և յորժամ ընկալան զհրամանն՝  
եկին շինեցին իւրեանց զքնակու թիւն , և ՚ի մօտ  
իւրեանց բնակեցուցին այլոց վաճառականաց ,  
Միայն 50 բիգայն էր առանց խաղինայ . և  
այլքն տային զմինին խաղինայ թագաւորին ,—

Սախ շինեցին ՚ի Բանկալա ՚ի վերայ Պանգոյ  
գետոյն ՚ի սարքարն Չաթիգամ մօտ ՚ի բերթի  
կամ փոքրիկ տեղոյ՝ որ յառաջուցն էր ՚ի ձեռս  
Լաթինացոց , և էր անդր մի մեծ եկեղեցի , որ  
անունն էր Բանդէլ . մէջ հիւսիս և ՚ի մէջ  
արեւել , որ այժմս ասի Հուգլի .— շինեաց Հօ-  
լանդիզն զտեղի իւր . և կոչեաց զանունն Չիչ-  
րա , որ է փոքրիկ գեղ :

Գրանսիան շինեաց զտեղի իւր զոր ընկալաւ ,  
մէջ հարաւ մէջ արեւմուտ , Չիչրուց մին մղոն  
հեռի , և անուանեաց զանունն նորա Չաննա-  
գար . որ հնդիկքն այժմս ասին Գռաշդանդա :

Գինամարքն կալաւ զտեղի իւր ՚ի հարա-  
ւամուտն Չաննագրոյ մին մղոն հեռի , և շի-  
նեաց զտեղի իւր և անուանեաց Տիմպրայ , որ  
այժմս նորոգելով անուանեաց Սիրամիուռ .  
Սոքայ ամենեքեանն են ՚ի կողմն արեւմտեան  
Պանգոյ գետոյն ,— բայց ազգն Բրիտանացոց  
այսինքն Ինկլիզն՝ ՚ի յարեւելս Պանգոյ գե-

տոյն Հեռի Հուղիւց 56 միլ կամ 12 մղոն , և շինեաց տեղի որ և կոչի Արկաթա , և իւրեանց բերթին անուանեն Փօռթ Ալիէմ :

Իսկ 'ի Ղաքանայ յերկրումն շինեցին Ինգլիզն յաշխարհին Արկաթու մեծ և սրտուական քաղաքն Մադրաս , որ է 'ի կողմն Հիւսիսային լայնութեան 15 աստիճան 20 րոպէ .— Ֆրանսիան 'ի կողմն Հիւսիսային լայնութեան 15 աստիճան 14 րոպէ . որ է Հեռի 'ի Մադրասէն 22 քօս կամ մղոն , 'ի տալիկն՝ որ անուանեաց զանուն նորայ Փոռնթիշէրի : Բայց Ղինամարքն կաշնով զտեղի իւր 'ի դաւառին Թանճահուրայ 'ի Հիւսիսային լայնութեան 10 աստիճան 15 րոպէ՝ անուանեաց զանունն Տրինիբար .— և Հոլանդացիքն կալան զտեղի իւրեանց 'ի նոյն դաւառին , որ է Հեռի 'ի Տրինիբարայ 'ի կողմն հարաւոյ Հինգ մղոն , որ կոչեցին զանունն նորայ Վեգփաթամ , որ օր աւուր աստ և անդ սակաւաւ սակաւ շինելով վաճառականութեան աղագաւ ամրոցս և այլն՝ ընդ ամենայն ծովեզրն՝ բազմանալով բազմացան , և ապա սկսան տիրել զերկիրն Հնդկաց յամի Տեառն 1750 : Պատճառն եղև այս ինչ կերպիւ . նախ Ղաքան , ապայ Հնդստան , որպէս սրտմեղոց եմ ընդհանուրն երկու գլխով յատուկ առ յատուկ :

## ԳՒ ՈՒԽՍ ԸՌԱՂՅՒՆ

Թէ «բլէ» տիրուղեթէն Յրեհիտը՝ ՚ի Դատմայ յերկրն :

ՅԼՄԻ Տեառն 1717 յորժամ մեռաւ Պաղա-  
տլի Խան վէզիրն ՚ի Պաքան, նստաւ ՚ի  
տեղի հօրն Նիզամ ըլ Մուլքն, որ սա էր այր  
յոյժ խելացի և կառավարիչ, Քանզի Պաքա-  
նայ վեց Սուրի քօլ (Բուր) աշխարհն սա կառա-  
վարէր, և սորա հրամանաւն նստէին աշխար-  
հապետքն և հարկ տային սմա և սա առաքէր  
առ Թաղաւորն, Յամի Տեառն 1752 ումն՝ զաշ-  
խարհն Արկաթու ետ սա այլ միում աշխարհա-  
պետի՝ որոյ անունն էր Պօստալի խան, աղբաւ  
(Օզրէկ) ՚ի քաղաքէն Բաղաշու, սա յորժամ  
ելիալ գնաց ՚ի Հէյրաբարատայ զօրօք իւրովք  
՚ի քաղաքն Արկաթ, յառաջէն քաղաքապետն,  
որոյ անունն էր Համադամի Խան, խաղա-  
ղութեամբ եթող զքաղաքն Արկաթու և գնաց  
՚ի գաւառն Տանձահուր, ՚ի մօտն Ասամէր  
ուաջին և ընակեցաւ անդ, քանզի վաղեմի բա-  
րեկամբ էին, մինչ յամի Տեառն 1755 վանն  
գարստեան Նաղրշահ արքային ՚ի Պարսից,  
վէզիր Նիզամ ըլ մուլքն բազում զօրօք չու ա-  
րարեալ ՚ի Հէյրաբարատայ գնաց ՚ի Շահճահ-

նաբոտ մօտ առ թագաւորն Մաճամմատ Շահ  
 վանն պատերազմելոյ զհետ Նադրշահին . և  
 յետ պատերազմելոյն և տիրապետութեանն  
 Նադրշահին, յորժամ լուան ամենայն քաղա-  
 քապետքն կամ գաւառապետքն զհարկն թա-  
 գաւորական չտալով արգելումն արարին, Հա-  
 մադամի Խանի խորհրդովն թանձահուրայ  
 աաջա Ասամէրն ևս ոչ ետ զհարկն, թէպէտ  
 աշխարհապետն Արկաթու Ռօստ Ալիսանն  
 բազում կերպ աղաչանօք խնդրեաց քանիցս՝  
 ոչ գտաւ, անձարացեալ առաքեաց զորդի իւր  
 զՀէյդար Խանն, և զփեսայ իւր՝ զՇնդա-  
 սհապն հանդերձ զօրօք. որք եկեալք ՚ի վերայ  
 թանձահուրայ երեք ամիս նստան ՚ի վերայ  
 բերթին, մինչ յորժամ լուան թէ յետ տիրա-  
 պետութեան Նադրշահին կրկին զթագաւորու-  
 թիւն Հնդստանայ յետ շնորհեաց Մաճամ-  
 մատ Շահին, և ինքն Նադրշահն գնաց ՚ի  
 Պարսս յերկիրն իւր, վէզեր Նիզամ ըլ Մուլ-  
 քըն կրկին յետ գոյ ՚ի Պաքան, Յայնժամ  
 Ռաջայ Ասամէրն սկսաւ խաղաղութիւն առ-  
 նել զհետ Ռօստայի Խանին, որ յղեաց ա-  
 ղերսանաց զիւր առ Հէյդար Խանն և առ նորա  
 որդին, և նոքա ոչ կամեցան խաղաղութիւն  
 առնելն՝ ասելով, թէ դու թող զերկիրդ և

դբերթն և գնա աստից . այսուհետ այլ ոչ  
 տաց քեզ ապստամբ անհաւատ , Ասրա անձար  
 մնալով ռաջին գաղտ առաքեաց զմի ոք ՚ի հա-  
 ւատարիմ՝ ծառայից իւրոց աղաչանաց գրով ՚ի  
 Վագփուռ . առ ազգն Սարաթացոց՝ առ Ուա-  
 ջայ Գասլի մօտ , խոստացաւ 25 լաք ռուփի ,  
 և խնդրեաց զօգնութիւն ՚ի նմանէ . որ և նա  
 2000 զօրք հեծելոցն այլ ճանապարհաւ առա-  
 քեաց , որ յանկարծակի ՚ի գիշերի եկին ՚ի  
 վերայ բերթին Թնձահուրայ , և պատերազ-  
 մեցան և սպանին զՀէյլար Խանն . և զօրացն  
 փախստական արարին , և ըմբռնեցին զիեսայ  
 Գաստալի Խանին զՉնգա սհապն և տարան  
 ՚ի Վագփուռ , որ ռաջայ Ուօգօջի Գասլէն ետ  
 ՚ի բանտի : Յետ այսր ամենայնի ռաջայ Ասա-  
 մէրն վասն բանիս պատահածին յերկբայու-  
 թեան և երկիւղի լինելով՝ պատրաստեաց բա-  
 զում ընծայս հանդերձ երկրի հարկօքն թաղա-  
 ւորական . և գրեաց աղաչանաց գիր և ետ ՚ի  
 ձեռս հաւատարմին իւրոյ և յղեաց առ վեղիբ  
 Վիզամ ըլ մուլքն , և ծանոյց նմա թէ Գաս-  
 տալի Խանն ընդ մեզ բազում չարչարանս և  
 չարութիւնս արար , և ընդհանուր երկիրն բու-  
 աւերակ արար . ոչ բարիօք կերպիւ կարէ առ-  
 նել զտիրապետութիւնն , Եսկ եթէ զերկիրն

կրկին ամառամի Խանին շնորհես՝ շատ բարի լինի . զի ինքն բարի և աշխարհաշէն անձնայ . մեք ևս հաւատարմապէս կծառայեմք : Եւ յորժամ ընկալաւ ընծայսն և զգիրն աղաչանաց՝ Նիղամ ըլ Մուլքն . մինչ էր՝ ի ճանապարհին Փաթանու . ի վերայ գետոյն՝ Նարբուզայ՝ կրկին շնորհեաց զքաղաքապետութիւնն Արկաթայ Համադամի Խանին . և առաքեաց հրովարտակս և ինքն չուարար զնայ . և յորժամ հասաւ ի Հէյդարբատ . յետ քանի աւուրցեա զերկրին Արկաթու զվեցերորդ սարքարի Ադօնի Ռաչիւր քաղաքն քուերորդւոյն իւրոյ . որոյ էր անունն Հերածմիդի Խան : Որսա ելեալ և եկն Ադօնի Ռաչիւր քաղաքն և բնակեցաւ անդ : Եւ առջա Ասամէրն՝ յորժամ ընկալաւ վեզիր Նիղամ ըլ Մլքէն զհրովարտաքան՝ ուրախացաւ յոյժ . զհետ Համադամի Խանին զօրածողով եղեալ գնացին ի վերայ բերթին Արկաթու . պատերազմեցան և սպանին զՂոստաալի Խանն . և զօրացն ի փախուստ գարձուցին . և կին Ղոստաալի Խանին և դուստրն նորա՝ որ էր կին Չնդա սհապին՝ հանդերձ ընտանեօքն ելին ի յԱրկաթայ՝ և գնացին ի Փանթիշէրի բնակեցան . քանզի յոյնմ ժամանակի քաղաքլս էր ի ձեռս Ֆրանսիաց . և նստաւ յԱր-

կաթ Համադամի Խանն , և եղև խաղաղու-  
 թիւն յերկրին , և առջայ Ասամէրն գնաց 'ի  
 յերկիրն իւր Տանձահուր : Եւ յետ 4 ամաց  
 մեռաւ Համադամի Խանն 'ի յերկիրն Արկա-  
 թու և նստաւ 'ի տեղի հօրն որդին Սնուր-  
 դի Խանն : Յամի Տերան 1749 մեռաւ վէզիք  
 Նեղամ ըլ Սուլքն և նստաւ 'ի տեղի հօրն եր-  
 կրորդ որդին՝ որում անուն էր Նասիրջանկ .  
 և Չնդայ սհարն փեսայ Ղոսոտայի Խանին  
 էր դեռ և ս 'ի բանդի 'ի Նարփուռ . յորժամ  
 սա լուեալ եղև զմահն վէզիք Նեղամըլ Սուլ-  
 քին՝ գնաց առ առջայ Ասոգօջի Ղոսուի մօտ .  
 և աղաչանօք խնդրեաց զազատութիւնն իւր՝  
 ասելով այս մօտ 12 տարի է , որ կամ 'ի քում  
 սպասու 'ի բանտի , ազատեա զիս . տուր հրաման  
 զի երթայց տեսանել զաւակացն իմոց . քան-  
 զի ուր որ իցեմ , ծառայ քոյ եմ . և ետ առ-  
 ջէն Սարաթացոց սմա զհրամանն . և յորժամ  
 ելաւ 'ի Նակփուռայ՝ ոչ գնաց 'ի տուն իւր .  
 այլ 'ի ծածուկ գնաց 'ի քաղաքն Ադօնիա-  
 աչիւր առ մօտն Հէրաթմիդի Խանին . և  
 խնդրեաց զօգնականութիւն 'ի նմանէ վասն պա-  
 տերազմելոյ և տիրելոյ քաղաքին Արկաթու .  
 խոստացեալ տալ 30 լաք ոռփի . ասելով  
 ցնա՝ թէ “դու ինքնին քաջ զիտես , որ վէզիք

Նասիրջանկն ոչ ունի զհետ քոյ բարեկամու-  
 թիւն , երկիրդ քեզանէ յետ կուպահանջէ .  
 եթէ մեք երկուքս միասին միմեանց օգնելով  
 չտամք . և նա ոչ կարէ մեզանէ պահանջելն :”  
 Յայնժամ պատասխանեաց Հերամմնդի խանն  
 թէ “ բարի է , ես ինքնին երթայց և տաց քեզ  
 զքաղաքն Արկաթ .” և ապա զօրաժողով եղև ,  
 եկին յանկարծակի ՚ի վերայ քաղաքին Արկա-  
 թու . շրջապատեցին և արարին պատերազմ ՚ի  
 բազում աւուրս . և Ս՝ նուրուդին կամ Անվա-  
 րուդին խանն Արկաթու ՚ի ծածուկ առաքեաց  
 զգիր աղերսանաց առ Հէյդարաբատ և յայտ-  
 նեաց զամենայն զլուրն , որ յաղագս գալոյ  
 Հէթրամնդի խանին , Եւ վէզիր Նասիր-  
 Ջանկն յոյժ աւուր , յորժամ հասաւ սուրհան-  
 դակն՝ դեռ և ս էր ՚ի միջի սգոյ մահուան հօրն .  
 որ տայր սղորմութիւն աղքատաց . քանզի սովու-  
 րութիւն էր նոցա որ՝ յետ մահուան հօրն 40  
 օր առնեն սուգ , և ապայ 40 օր Բարախութի  
 վասն նստելոյ ՚ի յաթուն հօր իւրոյ . որ պա-  
 տասխանեաց սուրհանդակին և ասաց , զնա ասա-  
 տեառնդ քոյ միամիտ կայ . չտալով զերկիրն՝  
 մինչ ես յետ սգալուցս դամ և խրատեմ դոցա :  
 Եւ մինչ տեսեալ Հերամմնդի խանին և Չըն-  
 դայ սհապին թէ ինքեանք պատերազմելով ոչ

կարեն առնուլ զբերթն Արկաթու վասն պըր-  
կու թեանն՝ որք ոչ ունէին զթօմ , խորհուրդ  
արարեալ ընդ միմեանս՝ յորում Չնդա սհապն  
ասաց Հերթմնդի Խանին , թէ ես ունիմ բա-  
րեկամութիւն Փունթիչերու Պաանգասի մե-  
ծի հետ , թէ տաս ինձ հրաման՝ գնամ խնդրեմ  
զօգնութիւն . և նա ասաց բարի է՝ որպէս զի-  
տես արա կանուխ : Այլ նա գնաց ՚ի Փուն-  
թիչերի հանդերձ Նիզամդի Խան բարեկա-  
մաւն , և յառաջագոյն յղեաց զբարեկամն իւր  
առ քաղաքապետն Պաանսիզաց՝ որոյ անունն է  
Սօնսիօն Աուպլէքս . և խնդրեաց ՚ի նմանէ  
զօգնութիւն : Որ նա հաճեալ ՚ի խնդիրքն սո-  
ցա՝ հտ հրաման Սօնսիօն Աօտէլ հազարապե-  
տին իւրոյ , Հինգ հարիւր զինուորօք , 8 թօ-  
փով և այլ պատերազմական պատրաստութեամբ  
երթալ . որ առեալ Չնդա սհաբին եկին մի-  
ացան հետ զօրացի Հեթաթմնդի Խանին . և ՚ի  
վաղեան աւուրն սկսան աղգն Պաանսիզաց մինչև  
վեց ժամ պատերազմիլ թօփով ՚ի վերայ բեր-  
թին , որոյ իջուցին զամենայն պարիսպն : Յայն-  
ժամ զօրքն՝ որք էին ՚ի բերթին թողին զԱն-  
վարուդի Խանն և փախեան , և Պաանսիզքն  
մտին ՚ի բերթն և սպանին զԱնվարուդի Խանն ,  
և կալան զամենայն ստացուածսն և զերկիրն :

և նստուցին զՀերթմանդի Խանն : Իսկ Հերթմանդի Խան շնորհաց զերկիրն Արկաթու Չնդայ սհապին և ասաց , թէ տուր զնստացեալ դրամն քոյ զի երթիցեմ Օվրանգաբատ , և խնդրիցեմ 'ի վեզիր Մասիրջանկէն զթողութիւն և 'ի նմանէ առաքեմ առ քեզ հրաման զի աներկիս զ կառավարեսցես զերկիրդ : Եւ նա ազաչելով խնդրեաց սպասել փոքր ինչ ժամանակ , զի ասէր երթիցուք 'ի Թանձահուր և առեալ սաջիցն զգանձս հարկացն և տաց քեզ զնոստմունքն իմ , քանզի գեռ ևս վեզիր Մասիրջանկէն է 'ի միջի ուրախութեան :

Եւ յորժամ ազգն Ֆրանսիզաց 'ի Արկաթ սպանին զՄուրուզին Խանն , սորա էին չորս որդիք . անդրանիկն՝ որոյ անունն էր Մահմատալի Խան . 'ի միջոյ զորաց հօրն փախտու և գնաց 'ի բերթն Ռշնապուլի , և գրեաց աղերսանաց գիր և զամենայն պատահածն , և զգործն Ֆրանսիզաց և զչարութիւնն Հերթմանդի Խանին՝ առ վեզիր Մասիրջանկէն . և սա յորժամ լուեալ եղև զամենայն եղեալն յեա աւարտելոյ խրատութեանն ժողովեաց Տրաք զօրս՝ եւ յերկրէ իւրմէ :— Իսկ անտեղակացեալ Հերթմանդի Խանին և Չնդայ սհա-

1004  
1773

պին, որ ստ.քա ժողովեցին զգորս իւրեանց և  
 գրեցին առ Փռնեմիշէրի մեծն, Ս՝օնսիօս  
 Ղաուլպէ.քան, և նա առաքեաց զմի հաղարա-  
 պեա իւր, որ ասին Ս՝իլիտէր Ս՝օնսիօս  
 Լասին՝ հանդերձ 500 զորօ.ք և 8 քերեկօ.ք և  
 ամենայն պատրաստական պատերազմի պատ-  
 րաստութեամբ, և գնացին ՚ի Թաանձահուր և  
 պատերազմեցան ՚ի վերայ բերթին յաւուրս  
 9. և աջա անդւոյն էր Ռամսէր, քանզի աջա  
 Ասամէր հայրն նորա վախճանեալ էր, Սա  
 առաքեաց արս հաւատարմս և խնդրեաց զխա-  
 ղադուութիւն, և ետ 18 լա.ք սուփի. և յորժամ  
 ընկալան զգրամն կրկին տային պատերազմ  
 խնդրելով 50 լա.ք սուփի և զաւարն Հէյդար  
 Խանին. ընդ որ անձարացեալ աջայ Ռամ-  
 սէրն գրեաց զգիր պաղատանաց առ վէզիր Նա-  
 սիրջանին թէ “ արա՛ ոգորմութիւն, երկիրդ  
 աւերակ արարին թշնամի.ք. քոյ. և մինչ գեռ  
 էր ՚ի ճանապարհի վէզիր Նասիրջանին, յոր-  
 ժամ ընկալաւ զգիրն աջային՝ հրամայեաց  
 զօրաց իւրոց, զի որ յառաջ ընթացականք՝  
 յառաջ երթիցեն, մինչ զօր.քն Ֆաանսիսաց  
 հանդերձ զօրօ.քն Հէրաթմեդի Խանին և  
 Չուդայ սհապին պատերազմէին Թաանձահու-  
 րայ բերթի վերայ աւուրս 26. և քաղաքա-

պետն Յրանսիզաց Մ'օնսիու Պուպլէքսն  
 գնաց ՚ի տեսու թիւն զօրացն իւրոց և Հերածմն-  
 դի ի Խանին և Չնդայ սհապին , յանկարծակի  
 յուան թէ զօրքն վէզեր Նասիրջանկի եկեալ  
 հասեալ են ՚ի քաղաքն Արկաթ : Ի գիշե-  
 րին այնմիկ թողին զամենայն պատրաստու-  
 թիւն պատերազմացն գաղա ամենայն զօրքն  
 վաստան , ազգն Յրանսիզաց հանդերձ Չնդայ  
 սհապրմն գնացին ՚ի Փունթիշերի . քանզի աս-  
 աի մինչ Փունթիշերի 7 օրէն ճանապարհ էր ,  
 և մինչ ՚ի Արկաթ 12 օրէն . և Հերածմնդի  
 Խանն անձարացեալ գնաց առ Նասիրջանկ ,  
 որ կայաւ զնա և հո ՚ի բանտի , և չու արար  
 գնաց ՚ի վերոյ Փունթիշերայ բերթին և պա-  
 շարեաց շուրջ զամբոցն և տայր պատերազմ .  
 և ինքն 2 քօսաչափ հեռի ՚ի գիւղն Ալին-  
 դուր էր . ուր եթող զվրան իւր և բնակէր  
 ՚ի միջի նորա :

Գնացեալ Յրանսիզաց բազում ընծայիւք  
 խնդրեցին զներողութիւն և զխաղաղութիւն ,  
 որ վասն անթիւ զօրացն իւրոց հպարտացեալ  
 դուռողութեամբ ոչ էառ ընծայսն և ոչ հաճե-  
 ցաւ առնել զխաղաղութիւն . այլ խրոխտա-  
 նալով ասէր , թէ մինչև զհօղն քաղաքիս ամե-  
 նայնն քահատեալ ոչ ածից ՚ի ծով , ոչ գաղա-

րեցայց 'ի բարկութենէս .- վասն բազմութեան  
 զօրացն՝ զի յաւել քանզ 7 քօս տեղ 'ի դաշտին  
 բանակեալ կային զօրքն . որք ոչ գիտելով  
 զարհեստ պատերազմաց՝ միայն ձխաւորքն նման  
 կապկի աստ և անդ ստաստելով շրջէին . Յիս  
 չորեց աւուրց , մինչ կամէր երթալ Վասիր-  
 ջանկն 'ի վերայ բերթին Փունթիչէրու , արարին  
 ծերակոյտք և մի ծամածքն Յռանսիղաց զխոր-  
 հուրդ , այսինքն՝ կօնսէլ . և ապա 'ի գիշերին  
 ընտրեալ 'ի զօրացն արս վիցհարիւր հանդերձ  
 4 թօփով և պատերազմական պատրաստու-  
 թեամբ՝ և բացեալ զգուռն քաղաքին վաղվա-  
 դակի գնացին 'ի բանակն , և գտին զնոսա ամե-  
 նեսին 'ի քուն , և սպանին զբազումն 'ի նոցանէ  
 մինչ 'ի լուսունալ առաւօտին , թողին և դար-  
 ձան յետս և եկին 'ի բերթն Փունթիչէրայ ,  
 Տեսեալ զայս ամենայն Վասիրջանկին հրա-  
 մայեաց զօրաց՝ խւրոց հեռանալ անտի 5 քօս ,  
 և գոյր 'ի մէջ զօրացն իւրոց զօրապետ մի՝ ազ-  
 գաւ Ադուան 'ի քաղաքէն Ադօնիու՝ այր պա-  
 տերազմօղ և խելացի . և ունէր 900 հեծե-  
 րազօրս , և ինքն էր պետ , որոյ անունն էր  
 Հեմաթ Բհադուր . զոր վասն քաջութեանն  
 սիրէր վեղեր Վասիրջանկն . սա յառաջագոյն  
 յոյժ բարեկամ էր Հերաթմեղի Խանին .

յորժամ նա էր քաղաքապետ Միգոնիու , տե-  
 սանելով սորա զսաստիկ տանջանան ՚ի միջի բան-  
 տին՝ ուր կայր Հերաթմեդի Խանն , գնաց  
 առ վեզիր Նասիրջանկն , աղաչանօք խըն-  
 դրեաց զնորա մեղացն թողութիւն , ասելով  
 թէ՝ « եղբայր կամ ընտանի քոյ է . և Հայրն  
 քոյ նման սրբւոյ սիրէր զնա , և նա անմեղ  
 է , մեք դիտեմք այսմ՝ մասին որ ամենայն  
 մեղքն և չարութիւնն Չիւրայ սՀապինն էր ,  
 որովհետև ինքնին եկեալ է ՚ի ներքոյ քոյոց  
 շնորհաց՝ այսմիկ անգամ ներեան դմա , հան  
 ՚ի բանտէ և արան ողորմութիւն , » Եւ որքան  
 աղաչեաց , ոչ եղև հնար . յետ բազմաց աղաչա-  
 նաց զնաց նախանձու՝ տաաքեաց ՚ի ծածուկ  
 զմի ՚ի ծառայից խրոց առ ազգն Ֆրանսի-  
 զաց և ՚ի ձեռն զրոց երդուաւ թէ՝ « եմ ձեզ  
 բարեկամ , թէ գայք դուք զօրօք ըստ առա-  
 ջին կերպին՝ ես սաց զձեզ զգլուխն վեզիր  
 Նասիրջանկին , » Յորժամ ընկալան զպիրն  
 Հեմաթ Բհադուրին ազգն Ֆրանսիզաց ու-  
 բախացան յոյժ , և ծանուցին , թէ բարի է  
 միաքէ , բայց մեզ ճանապարհ առաջնորդիք  
 որ մեր զօրօք կարողանամք հասանել ՚ի վրանն  
 վեզրին . չլինի սր յառաջագոյն փախնու ցու , »  
 Եւ կրկին նա պատասխանեաց թէ միամիտ

կոցէք ես յառաջագոյն առաքելցից 200 հե-  
ծելագործ վասն պահպանութեան բանակին, և  
այս նոցա զհրաման զի ՚ի դալ զօրաց ձերոց՝ ՚ի  
միասին առաջնորդելով երթան մինչ ՚ի վրանն  
վէզրի. և ես ինքնին սպանից և կտրեալ զզը-  
լուինն տաց ձեզ: Յետ այսք ամենայնի՝ ազգն  
Ֆրանսիաց արարին կօնսէլ, որոնսէլ թէ՛ ուլ  
երթիցէ. յայնժամ՝ հազարապետն Սօնսիօս  
I ասինն՝ որ ՚ի պատերազմին Պահնձահուրայ  
յամբոցէն դիպիալ էր իւրն բօլէկ մի հրա-  
ցանի, և հանեալ զմի ակնն՝ ասաց թէ՛ « ես  
երթամ կրկին առ ՚ի դուանէլ զկորուսեալ ակն  
իմ, կամ թէ՛ միւսն կորուսանել: Ընդ որ  
հաճեալ կօնսլացն հաւանեցան: Յայնմ ժա-  
մանակի կային բոլոր զինուորքն Ֆրանսիաց  
ի մէջ ամբոցին Փունթիշէրու արք երկու հա-  
զարք. ել քաջ սպարապետն Սօնսիօս I ան,  
և առեալ ՚ի զօրացն արս հազար և 8 թօփ հան-  
գերձ պատերազմական պատրաստութեամբ,  
և բացեալ զդուռն ամբոցին ՚ի մէջ գիշերի,  
գնացին մինչ հասեալ ՚ի բանակն՝ փոքր ինչ  
հեռի հանգիստեալ զօրացն Հեմաթ Բահադու-  
րին և մնացեալ գնացին մինչ ՚ի ժամանակն  
ցբանակ Նասիրջանկին՝ զգացան զօրք նորա  
և սկսան հնչել զփողս իւրեանց և տալ պա-

տերազմ : Յայնժամ յանձարանալ զօրացն  
 Ֆրանսիոց ել քաջն սպարապետն Սօնսի-  
 օռ Լանն և Հրաման ետ նոցա Հնչեցուցանել  
 զփողոս և Հարկանելն զթմբուկս և բանալ զգրօ-  
 շակս ըստ կանոնի իւրեանց . տալ պատերազմ  
 յառաջանալով մինչ եհաս մօտ առ վրանն  
 Նասիրջանկին . և ինքն Նասիրջանկին յոր-  
 ժամ ետես զգալուօտ զօրացն Ֆրանսիոց ,  
 ինքնին ելեալ ՚ի փիղն և շքէր ՚ի միջն ջօրացն  
 իւրոց և Հրամայէր թէ սպանեցէք զթ շնամիսն  
 իմ , Հանդիպեալ Հեմաթ Բհադուրին և ա-  
 սաց նմա “ եղբայր ընդէր կաս ՚ի պատրաստի և  
 ոչ պատերազմիս ընդ անօրինացս : ” Յայնժամ  
 պատասխանեաց նմա Հեմաթ Բհադուրն թէ  
 “ դու ես անհաւատ , որ ոչ ընկալար վասն  
 Հէրաթմնդի Խանին զաղաչանս իմ , այժմ  
 առ յինէն զփոխանօրդն աղաչանացս , և կրա-  
 կեաց զհրացանն իւր , յորմէ դիպաւ գուլին  
 ՚ի մէջ սրտին և մեռաւ առ ժամայն վէզիր Նա-  
 սիրջանկին : Բնդ որ զօրացն Ֆրանսիոց հա-  
 աեալ զգլուխն՝ եդին ՚ի վերայ միոյ ՚ի նիզա-  
 կացն , զոր աեսեալ զօրացն փախեան , Իսկ  
 սոցա առեալ զամենայն զղանձն և զամենայն ա-  
 կունս պատուականս՝ և ստացուածս ցուծն բրօբ  
 և ուփիս՝ յղեցին առ ամրոցն Փութիչէրայ :


Յամի Տեառն 1750, Սեպտեմբրի 18 ՚ի լուսանալ աւուրն երեքշաբաթի ազգն Ֆրանսիոց ժողովեալ զամենայն իշխանս և զմեծամեծս նոցա, այսինքն 'Սասիրջանկի' գնացեալ և հանեալ 'ի բանտէ զՀերածմնդի Խանն և նստուցին զնա եպարքոս, այսինքն վեզիր, ՚ի տեղի 'Սասիրջանկին. ընդ որ շարջերով մուկեալիս որ եկեալ ժողովեալ ցրուեալ զօրսն՝ արարին ուրախու թիւն ՚ի Փունթիշերի ազգն Ֆրանսիոց յաւուրս 50 վասն յողթութեան. նա ևս պատիւ Հերածմնդի Խանին: Այլ զօրքն էին ՚ի դուրս ամբոցին, միայն Հերածմնդի Խանն և իշխանքն զօրաց և եղբարքն 'Սասիրջանկին' որք եկեալ էին զհետ եղբօրն իւրեանց, յորս էր Սլաւարջանկն, Սիզամալի Խանն, Բասալ-Ջանկն Մզուլալի Խանն, և այլ երեսելի անձինք, Յետ կատարման խրախուժեանն՝ վեզիր Հերածմնդի Խանն զամենայն աշխարհն Արկաթայ յանձնեաց Չնդա սհապին, և ապա խընդրեաց ՚ի քաղաքապետէն Փունթիշերու զօրս վասն պահպանութեան իւրոյ մինչ ՚ի ժամանեւն ՚ի Հէյդարաբատ և նստիլ յաթոռն. որով ընկալաւ զերկուս հազարապետս. որոց անուն էր միոյն՝ Սուսի Կարժան. և միւսին՝

Մուսի Պ.բուս . հանդերձ 500 զօրօք և ամենայն պատերազմական պատրաստութեամբ ելին ՚ի Փուլնթիշերայ գնայր ՚ի Հէյդարաբատ մինչև հասանել ՚ի գաւառն Ադօնիու , անդ խնդրեաց Հէմաթ Բհադուրն ՚ի վեզիր Հէրաթմնդի խանէն թէ զգաւառս զայս տուր ինձ ՚ի պարզև , զի երթայց և բնակեցայց ՚ի միջնորա . քանզի ես ետու քեզ զամենայն զմեծութիւնդ սպանելով զթշնամին քոյ : Յայնժամ պատասխանեաց ցնա վեզիր Հէրաթմնդի Խանն՝ թէ այժմս ոչ է ժամ , այլ սպասեա՛ մինչև երթայց ՚ի Հէյդարաբատ և նստայց յաթոռն իմ , յայնժամ տաց քեզ զոր ինչ խնդրեսցես , այլ ևս մեծամեծ պարզևս . Բնդոր ոչ հանդուրժելով նորա՝ եղև ասպտամբ . և ել զօրօքն իւրովք ՚ի բանակէն . շրջելով աստ և անդ՝ զոր ինչ գտանէր ՚ի բանակի անդ՝ յափշտակեր , մինչ լուրն հասանէր առ վեզիր Հէրաթմնդի Խանն . և նա միշտ առաքէր արս և խրատէր թէ ոչ է բարւոք բանդ և դործըդ , և նա ոչ լսէր : Յաւուր միում մինչ գնային ՚ի Ճանապարհին՝ զօրքն ամենայն ցրուեալք գնային , և զօրքն Պաանսիսաց յետս կային , կրկին զօրքն Ադուանաց՝ որք էին ՚ի ձեռս Հէմաթ Բհադուրին՝ յափշտակեցին :

Յայնժամ լուեալ վէզիր շէրաթմարի Խոսնին հրամայեաց զօրաց իւրոց թէ կալարուք զամենայն Աղուանս և առէք 'ի նոցանէ զամենայն ստացուածսն իւրեանց . որ զեկուցեալ Աղուանացն վախեան . և ապա անտառային այլ իմն ճանապարհաւ դարձան յեսա , և գտեալ զշէրաթմարի Խոսն վէզիրն միայնակ՝ սպանին զնա : Եւ յորժամ դարձան զօրքն ցրուեալք կալան զամենայն Աղուանսն և սպանին զամենեսեան . որ ոչ թողին զմի 'ի նոցանէ . մինչ եկեալ զօրացն Ֆռանսիսաց ժողովեալ զամենայն իշխանսն և առեալ զմարմին շէրաթմարի Խոսնին՝ տարեալ պատուով թաղիցին . և եկեալ նստուցին 'ի տեղի նորա զվէզիր Ալալթ ջանկն , որ էր երորդ որդի Նիղամըլ Մուլքին , և հարազատ եղբայր Նասիրջանկին , Եւ ապա չու արարեալ 'ի ճանապարհս զնացին մինչ հասին 'ի քաղաքն շէյղարաբատ . և նստաւ յաթոռ հօրն իւրոյ և կառավարէր զամենայն ըզդաւաքանու երկիրն : Ապա գրեաց զգիր 'ի քաղաքն Փունթիշէրի , առ քաղաքապետն Ֆռանսիսաց և յայտնեաց զամենայն եղեալսն և զնստիլ իւր 'ի յաթոռն հօր . և խնդրեաց զմնալ զօրացն Ֆռանսիսաց 'ի մօտ իւր վասն պահպանութեան և կանոնադրութեան և կառա-

վարութեան , և յորժամ ընկալաւ քաղաքա-  
 պեան Ֆռանսիսաց զգիրն վէղիբին՝ հաճեցաւ  
 և ուրախացաւ յոյժ , և առաքեաց ՚ի Փռնթի-  
 շէրայ 200 զինուորս , որք եկեալ ՚ի Հէյդա-  
 բաբատ և միացան ընդ զօրացն իւրոց , և վէ-  
 զիրն Սլավոջանկ ետ ազգացն Ֆռանսիսաց  
 իչխանութիւն կառավարութեան , որ նոքա  
 սակաւ առ սակաւ ժողովեալ զօրս Հնդկաց  
 և տուեալ ՚ի ձեռս նոցա հրացանս , և մարզեալ  
 ըստ կանոնաց իւրեանց՝ անուն եղին Պարզի :  
 Յետ փոքր ինչ միջոցի եղին զօրքն Ֆռան-  
 սիսաց յաւել քան զքսան հազար անձն՝ միայն  
 ՚ի քաղաքին Հէյդաբաբատ , և կալան զա-  
 մենայն ծովեղերսն և զամենայն գաւառսն՝ որք  
 էին մօտ ծովուն՝ յաշխարհին Հէյդաբաբատ ,  
 և զամենայն երկիրն Սիքաքարայ՝ ուր կարգե-  
 ցին կառավարողս յիւրեանց կողմանէ՝ որպէս  
 թէ նախնական էր երկիրն իւրեանց , մինչև  
 ՚ի սահմանս աշխարհին Բանկալու՝ ՚ի գաւառն  
 Բաթակ՝ զամենայնն արարին հնազանդ իւ-  
 րեանց , ՚ի Հէյդաբաբատայ մինչև ՚ի ծովեղըն՝  
 որ կոչի Մուչիբանդար՝ տիրապիտեցին , Եւ  
 ՚ի Մուչիբանդար պահեցին բազում զինուորս ,  
 և բազում քենեակս հանդերձ ամենայն պատե-  
 քազմական պատրաստութեամբ , Լսյապէս ՚ի սա-

կաւ աւուրս եղև տէրութիւն Բրիտանից  
այնպէս հաստատուն՝ որպէս թէ 200 ամօք յա-  
ռաջ ունէին զերկիրս : որ յամենայն տեղ ոչ  
դոյր անուն թագաւորին Հնդկաց : երբ թէ ոչ  
ճանաչէին, — այսքան առ այս :



## ՀԱՏՈՒՆՕՒ Ա.

Որպէ՞հ իմ ո՞ր աշխարհ աշխարհիւն իսկին ի ձեռանէ  
Ֆրանսիսոց շխտան :


ՅԱՌԱՋՆ որպէս պատմեցաք, թէ յետ  
մահուան Համադամի Խանին որպի նորա՝  
Մահմատալի Խանն փոխուցեալ էր և դնա-  
ցեալ ՚ի յամրոցն թշնապուլի, և քաղաքն Ար-  
կաթոյ վեղեր Հերաթմնդի Խանի՝ միջնոր-  
դութեամբն Ֆրանսիսաց՝ էր ՚ի ձեռս Չնդա  
սհարին, և յորժամ եկն վեղեր Նասիրջանկն  
և ըմբռնեաց Հերաթմնդի Խան, և ետ ՚ի  
բանալի, Չնդա սհարն փոխուցեալ դնաց  
՚ի Փունթիշերի, յայնժամ յամրոցէն թշնա-  
պուլու Մահմատալի Խանն եկն ՚ի տեսութիւն  
վեղեր Նասիրջանկին, որ մտիթարեաց նմա  
և խոտացաւ տալ նմա գքաղաքն Արկաթ :  
Բայց յորժամ ազգն Ֆրանսիսաց սպանին ըզ-  
վեղեր Նասիրջանկն, կրկին փոխուցեալ Մահ-

մատալի Խանին և գնաց ՚ի բերթն Թշնապուլի, և բնակէր անդ: Մինչ դեռ ուրախուած իւն առնէին ազգն Ֆրանսիաց ՚ի Փոնթիշէրի, հանդերձ վեզիր շէրաթմնի Խան և Չնդա սհապլին, Մահմատալի Խանն արար խորհուրդ վասն իւրոյ պահպանութեանն առ ՚ի մնալ յիւրում աէրութեան և իշխանութեան ՚ի Թշնապուլի ամրոցն, յորմէ գրեաց զիր ՚ի Մազրաս առ քաղաքապետն Խնկլիզայ՝ որ անուննորա էր Մատր Թոմաս Սանգրիս, և խնդրեաց ՚ի նմանէ օգնականութի ն: Յր հաճելով քաղաքապետին առաքեաց 500 զինուորս հանդերձ ամենայն պատերազմական պատրաստութեամբ: Որով գնացեալ զօրացն ՚ի յամրոցն Թշնապուլի՝ հրամանաւ Մահմատալի Խանին ըստ կանօնի իւրեանց կառավարէին զամրոցն: Եւ թէպէտ լուան ազգն Ֆրանսիաց զհամբաւս զայս, վասն իւրեանց վստահութեանն փոքր ինչ համարելով անփոյթ արարին՝ ոչ կարծելով թէ ՚ի միոյ կայծոյ հրդեհ բազում լինիցի: Յետ խրախուածեանն Ֆրանսիաց վեզիր շէրաթմնի Խանն զամենայն երկիրն Արկաթու յետ յանձնելոյ Չնդա սհապլին, և ինքնին զնալոյ ՚ի շէրաբարաատ, յայնժամ Չնդա սհապլն ժողովեալ զօրս

Հանդերձ զօրօքն Ֆրանսիաց ՚ի Փունթիշերոյ  
 եկն յԱրկաթ, և եղ անդ զաթուռն իւր: Յեա  
 քանի աւուրց մինչ լուաւ թէ ՚ի ճանապարհի  
 մեռաւ Հէրաթմնդի Խան վեղիրն, և նստաւ  
 յաթոռ վեղրու թեան Սլաւարջանկն, որ է եղ-  
 քայր Նասիրջանկի՝ ինքն եղ յԱրկաթ զվե-  
 րակացուս, և առեալ զօրս իւր զամենայն չու-  
 արար զնաց հնազանդ առնել զամենայն գա-  
 ւառսն Արկաթու, մինչ հասեալ յամրոցն  
 Թշնապու լի՝ զօրքն Ինկիլիզաց յամրոցէ անտի  
 ոչ հնազանդեցան՝ այլ ետուն պատերազմ:  
 Բնդ որ ցասուցեալ Չնդա սհապին՝ զօրօքն  
 Ֆրանսիաօք և իւրովք պաշարեաց շուրջ զամ-  
 րոցն, և գրեաց զգիր ՚ի Փունթիշերի, որով եկն  
 կրկին ևս օգնութիւնն ՚ի Ֆրանսիաց: Եւ յոր-  
 ժամ լուան աղբն Ինկիլիզաց, նոքա ևս գրեցին  
 ՚ի Մադրաս, որ եկն և նոցա օգնութիւն.  
 և յերկուց կողմիցն էր պատերազմն. զի զօրք  
 Ինգլիզաց ՚ի կողմանէ Մահմատալի Խանին՝  
 ՚ի ամրոցէ անտի, և Ֆրանսիաքն ՚ի կողմանէ  
 Չնդա սհապին ՚ի դրուցէ՝ մարտեան զբազում  
 աւուրս, այլ կարէին առնել և ոչ ինչ յամ-  
 րոցէն. զի մի և կէս քօսաչափ հեռի ՚ի մեծ քարա-  
 շէն Չրնդան անուամբ կռատանն՝ վասն պահ-  
 պանութեան, բնակէին զօրքն Չնդա սհապին և

Ֆրանսիացին : Քանզի յայնմ առուր էր ՚ի միջի նոյն երկու քրիստոնեայ թագաւորացն խաղաղութիւն : և վասն այնորիկ՝ ոչ գային միմեանց նշանի վերայ՝ տալ պատերազմ : Քանզի պատերազմն էր ՚ի միջի Չնդա սհապին և Մահմատալի խանին : որոց յերկուց կողմանց քրիստոնեկց գային յօգնութիւն : երբեմն նա նմա՝ և երբեմն սա սմա օգնեին : այսպէս՝ միշտ կայր պատերազմ : և ոչ երբէք կարողացան առնուլ զամբոցն թշնապօլի : Յամի Տեառն 1852 եկեալ բազում զօրք Ինգլիզաց յերկրէ իւրեանց յօգնութիւն Մահմատալի խանին՝ յրժամ հասին յամբոցն թշնապօլի : ետուն պատերազմ ընդ Չնդա սհապին : շրջապատելով զբառակ նորա՝ զառուրս քսան և ութն : մինչև յաղթեալ և ցրուեալ զօրացն՝ ըմբռնեցին զՉնդա սհապն և սպանին զնա վասն արեան Համադամի խանի՝ հօր Մահմատալի խանին : զի վասն պակասութեան զօրաց Ֆրանսիաց ոչ ինչ կարացին առնել : Բայց յետոյ եկեալ բազում զօրաց Ֆրանսիաց և առեալ զորդի Չնդա սհապին՝ որոյ անունն Հէյաթխան՝ արարին աշխարհապետ : և պատերազմեցան զհետ Մահմատալի խանին : ուր երբեմն սոքա : և երբեմն նոքա յաղթեին : Այս ամենայն պատերազմ լինէր

# ՅԱՌԱՋԱԲԱՆ ՕՐԻՆԱԿՈՂԻՆ



## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀՆԴՍԱՆԱՅ

ԱՐ ՄԵՆԻ ԸՆԾՅ և աշխարհ-բեամբ հանգոյեալ Թոմաս Խոս-  
թաճախան նոր ընդունելոյ նորազար իւրեայալ, որ և ընկալեալ յաւ-  
րանուսք Տանն, և Տանն առեալ 'ի իւրեայոյ և յախնադէս գրա-  
գրաց, և Տանն ինչ յախնադէս ուննէ լուեալ. ա՛նկեայնն անէր  
Ժողովեալ և Բողբեալ անաւորք՝ և ինչն հանգոյեալ 'ի Տէր. Որ  
ի՛՛մ գրեալ զայս յԱգրաց առ առն Բարեպաշտի պարոն Ծափաւր  
Յարո-Բի-ն ընդեոյն Տօրն. զա՛նկեայնն գրեալ 'ի Չինոս տա-  
լաբի. որ հնայեալ գուրով ոչ լինէր իւրդալն: Անանորոյ պարզ  
վարկաց որ որոնն իւրն ի՛՛մ, օրինակելոյ. Բայց ոչ անկեալով Ժա-  
ճանի ներգործութեան. որպէս որ իւրացայ աւարտելոյ՝ վասն յի-  
շարայնութեան վերն Բարեպաշտ անձանց: Իւրա՛ 'ի նորոսմ ժամա-  
նակի ոչ գրաւի յայպիսի պարճութեան զոր՝ որ անի քեղեկաւ-  
րի-ն ա՛նկեայն Հնրկաց, նճանապէս եղևուր և նորագ ելելոյն.  
և որպէս քեղապանէութեանն լինելն ի՛՛նքի ոչգիին և այլն, որ և  
հայցեմ 'ի Յէնջ վասն վաղվարկի գրելոյն պախառութեան սորա՝  
Բէ Բարիս և Բէ այլ ինչ՝ ներսմն շնորհէ՛ ինչ: Չի էն քառա-  
պեալս յայտան որ իւրացայ առ ի՛՛մն յիշարայնութեան իրին օրինա-  
լելոյ 'ի Վերս. և պարզ և քառ սորբ Իլճան քեղի Սեբաղան  
Պօղոս արհի Էպիսկոպոսին, որ և հայցեմ ոչալնացն ներսմ. ինչ  
Ժամանակի պարապման իւրդաւ. ի՛՛մ ոչ որ իւրդոյ՝ նորապիս  
օրհնելոյ՛ և նճանապէս զաւանայս. որ իլինի՛՛մ Տարապէս շնորհա-  
լալ, 'ի 1821 Օգոստ 21 'ի Լատնահօր տաղարի:

ՍՐԲԱՋԱՆԻՍ

Պիշա իննուերս Ժառաց

ԴԱՐՈՒԼ ԳԵՐ ԱՆԴՐԻԱՍԵԱՆ

յաշխարհին Արկաթու , բայց աշխարհն Հէյ-  
 գարաբատ ամենայն գաւառօքն էր ՚ի ձեռս Ֆլ-  
 բանսխասց մինչև յամի Տեառն 1756 . յոր ե-  
 ղև խառվու թիւն ՚ի մէջ թագաւորացն Ֆրան-  
 սիսաց և Ինգլիզաց : Թագաւորն Ֆրանսի-  
 սաց զմեծ սպարապետն իւր՝ Մօնսիօն Ալի-  
 առաքեաց յաւելլ քան վեց հազար զօրօք . որ  
 եկեալ կալան զքաղաքն Ինգլիզաց . որոյ ա-  
 նուն էր Սէնտ Գաւիթ , հետ ՚ի Փունթիշե-  
 բոյ՝ երեք քօտաչափ , և ապա զնաց զօրօք ՚ի  
 Մագրաս և սղաշարեաց , Եւ հանդերձ մեծ զօ-  
 րօք Հնդկաց ՚ի վերայ ամբոցին պատերազմե-  
 ցաւ յաւելլ քան զերկու ամիս , և ոչ կարացին  
 առնուլ . և անկաւ ՚ի զօրաց Ֆրանսիսաց յաւելլ  
 քան զերկու հազար անձն , Եւ կային յամբոցին  
 զօրք Ինգլիզաց՝ աւելի քան 2500 անձն . բայց  
 ՚ի զօրաց Ֆրանսիսաց կային անդ բազումք , որ  
 վասն նախանձու ապրտամբեալք՝ եկեալ էին ՚ի  
 ծառայու թիւն Ինգլիզաց , Քանզի ՚ի գալ մու-  
 սի Ալին , որ ունէր ինքնակալութիւն թագա-  
 ւորական , նախնի զինուորք սրտով ոչ պատե-  
 բազմէին . ասելով թէ՛ որ այժմս յաղթեմք զօ-  
 րաց Ինգլիզաց և առնումք զբերթն՝ լինի ա-  
 նունն քաջութեան մուսի Ալին և իւր զօրացն .  
 և այնու կօրուսին զամենայն անուն քաջութեան

իւրեանց , թուրացան ամենայն կերպիւ և անկան  
 և մեռանէ ին ՚ի մէջ պատերազմի . և զօրք Ին-  
 գլիզաց օր աւուր յոյս ստանալով քաջութիւն  
 պատերազմէին յամրոցէ անախ , մինչ յա-  
 ւուր միումեկեալ ՚ի Բումբայուոյ Ինգլիզացն  
 զօրք վեց նաւով յօգնու թիւն , յորժամ տե-  
 սին Ֆրանսիսք թողին ինչս պատերազմի ՚ի բա-  
 նակի իւրեանց անդը՝ և փախուցեալ գնացին  
 ՚ի Փունթիշերի , աւելի քան վեց հարիւր զինու-  
 որս իւրեանց , վիրաւորս և հիւանդս՝ թողեալ  
 անճարակ : Օ որս տեսեալ սղորմածացն Ինգ-  
 լիզաց, զամենեսին առաքեցին ՚ի բժշկարանս իւ-  
 բեանց , հրամայեալ բժշկաց դարման տանել  
 նոցա , և ապա կրկին օգնութիւն հասեալ Ինգ-  
 լիզաց չորս նաւով ՚ի Բանկալուց ՚ի Մագրաս՝  
 գնացին ՚ի Ղաքանայ կողմն ՚ի գաւառն Սիքա-  
 քօլ , կրկին պատերազմ ետուն ընդ Ֆրանսի-  
 սաց և յաղթեցին նոցա , Լապա միաբանեալ ընդ  
 ռաջային Սիքաքօլայ՝ որոյ անուն էր Լանդեր-  
 բաջ՝ ազգաւ թալիզա , յորժամ զօրք Ինգլի-  
 զաց էին ճերմակսօլտած՝ 500 . և սև դարդ ՚ի 4000  
 և ռաջէն ունէր 28,000 կռուարարս , ընդ ամե-  
 նայն՝ 52,500 զօրք . և սպարապետն էր Աուու-  
 նէլ Աուտս , Յորժամ տիրապետեցին ՚ի միասին  
 զամենայն գաւառն Սիքաքօլայ , յայնժամ զօր-

քըն Ֆլանսիաց կրկին ժողովեալ ՚ի Հէյդա-  
րաբադայ և ՚ի Մուչիբանդարայ՝ զինուորք  
ձերմակ՝ հազար, և սև՝ քսան հազար. ընդ ա-  
մենայն քսան և մի հազար մարզեալք ՚ի գործ  
պատերազմաց, հանդերձ վաթսուն մեծամեծ  
քհնեկօք և մեծաւ պատրաստութեամբ ընդ մեծ  
սպարապետան՝ որոյ անուն էր Մարքէզ դը  
Վոֆան, չու արարեալ հասին ՚ի գաւառն Ռաջ-  
բանդարու, հեռի ՚ի Պետափորայ գեղէն վեց  
քօս, որոյ անուն կոչի Ալարիւմալարամ, և ՚ի մեծ  
դաշախեղև պատերազմ սաստիկ, ուր պարտե-  
ցան զօրք Ֆլանսիաց, հետիոտս փախչելով  
քօսս յիսուն՝ մինչ հասին ՚ի Մուչիբանդար,  
և մտին յամրոցն, Իսկ քաջ զօրաց Ինդլիզաց  
հանդերձ զօրօք սաջային սակաւ առ սակաւ  
յառաջ գնացու թեամբ տիրապետեցին զամե-  
նայն գաւառսն, մինչ հասին ՚ի Մուչիբան-  
դար, և շրջապատեցին զքաղաք և զամրոցն,  
Ետուն պատերազմ զաւուրս 44. մինչ կալան  
զամրոցն յամի Տեան 1758, Մարտի՝ 4 :

Յետ տիրելոյ զամենայն երկիրն հիւսիսային՝  
զօրացան յոյժ, և այնուհետև ժողովեալ զօր  
բազում յամենայնազգաց Հնդկաց, ելին տիրել  
մնացեալ երկրին ՚ի ձեռաց Ֆլանսիաց, և  
ըմբռնեալ զմնացեալ զօրս նոցա՝ որք եկեալ

կալեալ էին զամբոցն Հէյդարաբատայ՝ հասին մինչ ՚ի Փուլնթիշերի : զորով շուրջ պատեալ նստան , միշտ պատերազմելով ցամիսս հինգ : Այ մնաց կերակուր յամբոցին , և սովամահ կորնչէին զօրք , վասնորոյ անճարացեալ Փլուանսխաց՝ ետուն ՚ի ձեռս Ինգլիզաց զանյաղթիւի , զսայճառ և զգեղեցիկ բերթն Փուլնթիշերայ՝ յամին 1761, Յունվարի՝ 15 :

Յորժամ էառ ազգն Ինգլիզաց զՓուլնթիշերի՝ եզխտ անգր անթիւ պատրաստութիւնս պատերազմի , զոր ամենայնն առեալ տարաւ ՚ի քաղաքն Մադրաս : Եւ զանյաղթիւի բերթն , և զամենայն ապարանս քաղաքին քակեցին ՚ի հիմանց : և զամենայն փայտեղէնս մինչ և ցլքարինսն տարան ՚ի Մադրաս , և եղև Փուլնթիշերի բու աւերակ՝ որոյ ոչ մնաց քար ՚ի վերայ քարի , և ոչ երևէր տեղի բնակութեանն , մինչև յամի Տեառն 1764 եղև խաղաղութիւն ՚ի մէջ երկուց թագաւորացն , և յայնժամ հրաման ընկալեալ գան ՚ի տեղիս իւրեանց բնակիլ , բայց ոչ վարել զիշխանութիւն , այլ զործոյ վաճառականութեան շինել զտեղի , որպէս յամին 1748 գնացեալ և շինեցին ՚ի հիմանց զամբոց մի , որ կայ մինչև ցայսօր :

## ԳՒՈՒՆ ԵՐԿՐՈՐԳ՝

Վասն Ազգան ինգլիզաց՝ Բէ որով իբրիւ Գիւնիսն ի  
Հնդկաստան . և Աւստրալիացի որպէ՛ս զարտան և  
նորաշէնն :



ՅԱՄԻ Տեառն 1751 . ՚ի չորրորդ ամի թագա-  
ւորութեան Մահմատ շահ արքային Հնդկաց՝  
եղև հուսահալ աշխարհին Քանդալու ելխան  
ոմն՝ Մուրշիդ զուլի խան անուամբ . որ էր այր  
յոյժ խելացի , և կառավարող քաջ : Սա խնդ-  
րեաց ՚ի թագաւորէն թէ՛ . ես տաց զերկուց աշ-  
խարհաց զհարկն , այսինքն Քհարայ և Ուրի-  
չայու : Եւ թագաւորն ուրախացեալ ետ նմա  
զհրաման կրից սուբայից , Քանդալայ՝ Քհա-  
րայ և Ուրիչայու . ուստի ելեալ ՚ի Շահջա-  
նապատայ բաղում՝ զօրօք եկն ՚ի Քհար՝ յաշ-  
խարհն Փաթանայ , զոր ՚ի ներքոյ ելխանու-  
թեան իւրում արարեալ՝ եզ անդ զոմն կառա-  
վարիչ , և ինքն զնաց ՚ի սուբայ Քանդալ , ՚ի  
քաղաքն Գաքա , և անտի առաքեալ ՚ի կողմա-  
նէ իւրմէ զոմն աշխարհապետ Ուրիչա՝ ՚ի քա-  
ղաքն Քաթակ , եղև տէր երկց սուբայից ևս :

Եւ ապա յետ երեք ամաց , որ է՝ 1733 , ՚ի  
Պաքա եթող զմն փոխանորդ , և ինքն զնաց  
՚ի կողմն Բանկալու՝ ՚ի դաւառն Վազաոյու  
և ՚ի դեօդն որ կոչի Ստապատ , ՚ի մէջ Հիւսիսի  
և արևելից 5 քօսաչափ մեծութեամբ արար  
ինքեան բնակութիւն , որ շինեաց քաղաք ՚ի  
վերայ Բաղբաթի կամ Վնդայ զեառոյն , ՚ի  
կողմն արևելից , և անուանեաց յերկանուն  
Մախուսարատ , որ է Հարկի բնակութիւն ,  
քանզի քաղաքս այս՝ է ՚ի սիրտ սուբային  
Բանկալու և յաջողակ վասն կառավարութեան  
երկց սուբայիցն յամենայն կողմանց : Բան-  
զի մաստօս ասելն ՚ի Պարսիացւոց բնդ մերս  
բարբառ՝ Հարկ ասել է , և արտոն՝ շինութիւն :  
Յետ շինութեան քաղաքիս , բնակէր անդ  
բարի կենցաղավարութեամբ , և աշխարհաշի-  
նութեամբ կառավարէր զերեսին՝ սուբայու-  
թիւնսն՝ զամենայն աւուրս կենաց իւրոց :  
Եւ կարգեալ էր սա յիւր կողմանէ ՚ի սուբէն  
Բհար աշխարհապետ՝ որոյ անունն էր Ալա-  
վէրդի խան , և ինքն մեռաւ ՚ի 1738 : Եւ նրս-  
տաւ ՚ի անզի Հօրն որդի նորա՝ սրոյ անունն էր  
Շաքաղ խան : Յետ քանի աւուրց Ալա-  
վէրդի խանն ՚ի Փաթանայ չու արարեալ բա-  
ղում զօրօք , ետ լուր թէ “ երթամ ՚ի Մախուս-

տաբատ՝ առ ՚ի տեսութիւնն Շափռազ խանին ,  
 ՚ի շնորհաւորել զիշխանութիւնն , և տալ ըն-  
 ծայ , որով և գտանել կրկին զիշխանու-  
 թիւնս և խալաթ :” Եւ մինչ հասեալ ՚ի Ուաջ-  
 մհալ , ՚ի տեղին անդ , Պարխ անուանեալ ,  
 լուեալ Շափռազ խանին՝ թէ գայ բազում  
 զօրօք , ինքն ևս ել ՚ի Սախտուսաբատայ  
 բազում զօրօք մինչ եհաս ՚ի գաւառն Ուաջ-  
 մհալ . և ՚ի դաշտին Պարխայ եղև երկօցունց  
 բանակն ՚ի վերայ Պանդայ գետոյն՝ երկու քօ-  
 տաչափ հեռի ՚ի միմեանց : Ապա առաքեաց  
 Ալափէրդի խանն զլուր առ Շափռազ խանն՝  
 թէ ՚ի վաղեան աւուրն գալոց եմ ՚ի տեսու-  
 թիւն տեսանդ իմոյ . ընդ որ ուրախացեալ  
 Շափռազ խանին եթող զպատրաստութիւնն  
 ՚ի ձեռս զօրաց իւրոց՝ առ ՚ի զգուշանալ , և ինքն  
 միամտեալ արար պատրաստութիւն ընթրեաց  
 մն ծ յոյժ : Եւ ՚ի վաղեան աւուրն ել գնաց  
 Ալափէրդի խանն զօրօք իւրովք ՚ի բանակն  
 Շափռազ խանին . մինչ հասեալ անդր իսկոյն  
 հրամայեաց զօրաց իւրոց պատերազմել ընդ  
 զօրացն Շափռազ խանի , և յաւարի առնուլ  
 զամենայն բանակն զայն : Յայնժամ պատրաս-  
 տական զօրքն ամենայն՝ հարին զզօրս Շափռազ  
 խանին , քանզի զօրքն նորա բազում ոչ էին ,

մասն ինչ անպատրաստք , և մասն ինչ 'ի ձեռն  
 դաշանց միաբանեալք ընդ նմա՝ վասնորոյ ա-  
 մենեքեան 'ի փախուստ դարձան , և ըմբռ-  
 նեալ նորա զՇ աֆռազ խանն 'ի նոյն տեղւոջն  
 սպան , և ժողովեալ զգորս նորա , եկն 'ի քա-  
 ղաքն Մախսուտաբատ և նստաւ ինքն աշխար-  
 հապետ , և եղև տէր երկից սուբայիցն , և զա-  
 մենեսին արար իւրեան Հնազանդ : Յէկտեաև  
 վասն այոք զուր արեանս բազումք 'ի քաղա-  
 քապետաց կամեցան առնել , և արարին ըզ-  
 վրէժխնդրութիւնս վասն նորա , բայց ամենե-  
 քեան ընդունայն վաստակեցան , զի ոչ ինչ  
 կարացին առնել . յորոց մինն էր յաղպէն Մա-  
 բաթացւոց ռաջա Ղուսթօջի Գօսլէն . առ որ  
 դնացեալ ոմն 'ի հաւատարմաց Միրաբիբ խան  
 ընդդիմանալ :

Յորժամ եկն Ղուսթօջի Գօսլէն վաթսուհ  
 հազար զօրօք , մինչև զամս Հնգերտասան միշտ  
 լինէր պատերազմն . և երբ զօրքն Ալավեր-  
 դի խանին երթային 'ի վերայ զօրաց Մա-  
 բաթացւոց , նոքա 'ի փախուստ լինէին . և  
 մինչ յետս դառնային , դային և կողոպտէին  
 զամենայն երկիրն՝ և աւար հարկանէին , հըր-  
 դեհ տալով ընդ ամենայն գիւղօրէս :

Յետմուանելոյ Միրաբիբ խանին՝ ապա եղև

խաղաղութիւնն , որ Ալալէրդի խանն զսուբէն  
Ուրիշու ետ ազգայն Մարաթացոց , յայնժամ  
'ի ձեռն երդմանց յերկուց կողմանց ևս դաշն  
եղին զի ոչ լիցի սրտանբաղմ 'ի յաւիտեան ,  
Յետ այսր ամենայնի , միայն մնացին 'ի ձեռս իւր  
երկու սուբէն՝ Բհար և Բանկալա . զոր յամե-  
նայն աւուրս իւր մինչ 'ի մահն՝ կառավարէր :

Յամի տեառն 1756 մեռաւ Ալալէրդի խա-  
նըն , և նստաւ 'ի տեղի սրտայն՝ 'ի դստերէ կող-  
մանէ՝ թոռն նորա , որոյ անուն էր Շիրազ-  
դովլայ . քանզի Ալալէրդի խանին ոչ դոյր որ-  
դի , այլ դստերք երկու՝ զորս ամուսնացուցեալ  
էր ընդ որդւոց եղբօր իւրոյ . յորոց 'ի կրտսերը  
դստերէն երկու որդիք էին , միոյն անուն էր  
Իլիջ խան՝ անդրանիկն , որում տուեալ էր 'ի  
կենդանութեան ժամանակի իւրում՝ զերկիկն  
Պուրանխա՝ զոր կառավարէր և ընակէր անդ :  
Եւ մեռն՝ որ էր կրտսեր և անունն էր Շի-  
րազդովլայ՝ վասն առաւել սիրոյն սրահէր իւր  
մօան , Եւ իւր կնոջ քեռայրն՝ որ անունն  
էր Միրջաֆարալի խան՝ վասն կատարելու-  
թեան և սլխտանութեանն , արարեալ էր սպա-  
րապետ , և ոմն կառապաշտ՝ անուամբ Պլակեթ ,  
վասն կատարելութեանն և հարստութեանն՝  
արարեալ էր . մաքսապետ , որ է սառաֆ , և

տուեալ էր 'ի ձեռս սորա՝ զամենայն զգանձս  
 հարկաց երկրի իւրում, և զտէրութեան եկա-  
 մուան, զի ելանէին 'ի ձեռանէ սորա զօրաց  
 ամիսն, և այլ ամենայն ծախքն: Յորժամ սա  
 զփոյն ժողովէր, զմի տեսակ կամ սքայ ռուփոյ  
 16 անանոցէն պակասեցուցանէր երկու անայս  
 և 14 անայ հաշուէր, և յորժամ ինքն փող տայր  
 զօրացն, ընթացակա՛ն սքայն տալով զերկուս  
 անայս 'ի ռուփոյն կտրէր: Այսպէս առնելով  
 բազում գանձս ունէր ժողովեալ, և յորժամ  
 տայր զհամարն, Այավէրդի խանն առնէր 'ի  
 նմանէ աւելիօք՝ 50 կամ 60 հազար ռուփի՝  
 մաքս կամ դունահարարի ասելով, այս դրամն  
 ո՛չ առաքէր 'ի դանձարան իւր, այլ միայն  
 թուղթ՝ որ է ռսիտ յինք առնէր, և դրամն  
 թողոյր 'ի մօտ ջ կտէթին: Այսպէս առնելով,  
 ասեն, թէ եղեալ էր ինն քրօք ռուփի, որոյ  
 փոխարէն առեալ էր 'ի նմանէ ռսիտ՝ և ունէր  
 'ի ծածուկ՝ 'ի ներքոյ կողամարին իւրոյ: Եւ  
 յորժամ հիւանդացաւ Այավէրդի խանն մերձ  
 'ի մահ, արար կտակ և ետ պատուէր Շիրազ-  
 զօվինն՝ թէ առ զգաւթղալամն իմ և նչ որ  
 կայ 'ի ծածուկ՝ բեզ, և նիստ յաթոռս իմ.  
 բայց յետ մահուան իմոյ՝ դու գնա՛ յերկիրն  
 Պուրանիայ, և նիստ անդր յաթոռն, և բեր

զեղբայր քո աստ, զի նա նստիցէ յաթոսս  
 փոխանակ քոյ. քանզի նա խոհեմ է և ունի  
 կառավարութիւն մինչ ՚ի ժամ հասակի քոյ.  
 զի այժմ դեռ ոչ ունիս դու խոհեմութիւն կա-  
 ռավարութեան, Այլա յորժամ մնաւ Ա-  
 լալէրդի խանն և նստաւ ՚ի ակղի նորա Շի-  
 րազդօվէէն՝ փոխանակ պատուիրանացն, ներ-  
 հակն սկսաւ ապելլ, քանզի ունէր սա զվարս  
 բարբարոսական, և էր իգասէր, պունիկ և յոյժ  
 մոլի: Եւ յորժամ առեալ զըսված զալամն  
 և ետես ռսխտան զինն քրօր ռուփեաց, հրա-  
 մայեաց և եկն Չկսէթն և եցոյց նմա զար-  
 սխտան ասելով՝ թէ տուր այս զբամն վաղվա  
 զակի. և Չկսէթն վանն երկխղի բարբարո-  
 սութեան նորա, ասաց «Ողջ զբամն պատրաստ  
 է, հրաման լինի ուղարկիմ ՚ի դանձարանն»  
 ասաց, այժմ՝ ոչ. ապա նախ տուր զմնացեալ  
 համարն քոյ, որպէս տայիր պապուն իմոյ: Եւ  
 նա խոստացեալ ել զնաց ՚ի տուն իւր, և կայր  
 ՚ի միջի կասկածանաց, որ թէ ընդհանուր  
 ստացուածս իմ տաց, ասէր, ոչ ազատիմ ՚ի  
 բարբարոսէն:

Եւ յաւուր միում ՚ի կերպարանս կանանց  
 զպիցեալ ինքն Շիրազդօվէէն, շնութեան  
 աղագաւ գնաց ՚ի ծածուկ ՚ի տուն Չրկ-

սէթին առ 'ի տեսութիւն կանանց նորա .  
 իսկ մօր Ս կսէթայ ծանուցեալ , թէ է նա  
 Շիրազդովլէն՝ խոհեմական կերպիւ պառաւն  
 բազում նախատանօք և խրատելով արտաք-  
 սեաց 'ի տանէն ծածուկ , յորժամ և եկն որբին  
 պատմեաց նմա . յորմէ նա առաւել ևս սկսաւ  
 երկիւ գալից մնալ երևելապէս . բայց 'ի ծա-  
 ծուկ նման լծի խորամանկեալ փոխանակ դան-  
 ձի՝ թոյն պատրաստէր առ ի խայթել և կորու-  
 սանել . որով զսիրոս բազմաց իշխանացն առ  
 ինքն ձգեալ հանապազ ունէր 'ի պատրաստի :

Եւ յորժամ լուաւ եղբայր Շիրազդովլի  
 զմահ պապոյն և զպատուէրն , ևս և զզործս  
 Շիրազդովլին , ել յերկրէ իւրմէ և դայր 'ի  
 կառավարութիւն երկրին . բայց մինչ դեռ  
 'ի ճանապարհի էր նա՝ լուաւ Շիրազդովլէն  
 և վաղվազակի ել բազում զօրօք ընդ յառաջ  
 նորա , և ետ պատերազմ . ուր յանկարծակի  
 դիպեալ բոլիկ մի հրացանի 'ի սիրտ եղբօրն ,  
 և արկեալ զնա 'ի փղոյն յերկիր՝ առ ժամն  
 մնայց :

Եւ առեալ զամենայն զկահս և զգանձս  
 եղբօրն՝ ուրախութեամբ վարձեալ՝ զնաց 'ի  
 Մախսուտաբաա , Յեա մնասնելոյ եղբօրն՝  
 ինքնակալ կարծէր զինքն , ոչ զխտելով՝ թէ

անօգնական մեաց, Աւաթի և ս առաւել կայր ՚ի միջի չարութեան, և դորձէր զդործս անանաց, գայլոց, որով խոցոտեալ զսիրտս մեծամեծացն իւրոց, ոչ ունելով զբարի վարս և խոհեմական կերպիւ զկառավարութիւնն՝ որպէս ըզպապ իւր, զամենեւեան խոցոտեաց սրտիւ. որք երեւելապէս թէ պէտե կային յերկիւղի, բայց ՚ի ներքուստ զգաւ կորստեան պատրաստէին: Վնդի պապ ոտրա խոհեմութեամբ իւրով, յառուրս ծերութեան զամենայն տէրութիւն իւր կառավարեաց զամս 17: Այլ սա բարբարոսութեամբ իւրով ՚ի ժամանակի երկտասարդութեանն՝ ոչ կորաց կառավարել զամենայն զտէրութիւն իւր ցամիսս 17:

Յամի տեառն 1757. զմոհրապեան՝ որ է՝ դաժտարդարն սորա՝ զոր Հնդիկք ասեն զիւան, անուամբ Առաջայ Քլուր, վասն իրիք պատճառի կամ՝ սակաւիկ պակասութեանն, Վարբան Շիրազգովրա կամեցաւ սպանանել. և նա անձարացեալ՝ յերկիւղէ մահուանն փախուցեալ գնաց ՚ի Վալիաթա՝ առ ազքն Ինկիլեզաց, գուցէ միջնորդութեամբ նոցա զանձն իւր ապրեցուցանիցէ: Իսկ նաբարն մինչ էր ՚ի Արաբմհալ, և կամէր գնալ ՚ի սուրէն Քհար, և շրջել ընդ ամենայն երկիր իւր, յորժամ

լուաւ զիսխուսա զիւանին իւրոյ՝ առաքեաց  
 զմի ոմն յեշխանաց իւրոց՝ ՚ի Ապղաթա՝ առ  
 քաղաքապետն Խնկլիկաց՝ որոյ անուն էր մատր  
 Պարէք, և ծանոյց նմա՝ թէ տօւք զճառայն  
 իմ, որ փախուցեալ եկեալ է ՚ի քաղաքի՝ և  
 կայ առ ձեզ: Այս պատասխանեաց, թէ ոչ ու-  
 նիմք հրաման ՚ի մեր թագաւորէն առաքել,  
 քանզի սոյն սրահստանութեան եկեալ իցէ  
 ՚ի ներքոյ նշանի մերոյ և ոչ գնացէ, սչ կարեմք  
 առաքել զնա ընտնութեամբ, եթէ ոչ իւրով  
 կամաւն. բայց խնդրեմք որ մերով միջնորդու-  
 թեամբն ներեսցես սխալութեան նորա: Ընդ  
 որ սչ հաճեցաւ. այլ առաքեալ զպատգամա-  
 բերն իւր, ասաց թէ՝ սչ է ձեզ սրտա սրահել  
 զճառայ իմ, այլ առաքեցէք զնա կապանօք առ  
 էս: Առ որ կրկին պատասխանեցին ազգն Խնկ-  
 լիկաց. թէ սչ է կանոն թագաւորաց քրիս-  
 տոնէից յետս տալ զմահապարտ ոք՝ որ փա-  
 խուցեալ եկեալ իցէ վասն կրեաց իւրոց ՚ի  
 ներքոյ նշանի մերոյ. վասն որոյ սչ կարեմք  
 տալ զնա. և առաքեցին յաբեանց կողմանէ  
 արս իմաստունս և խաղաղարբս, որ արասցնն  
 զխաղաղութիւն՝ որպէս որ կարելին է:

Դեռ չև ևս հասեալ զեստանացն, ՚ի Ռաջ-  
 մհալոյ յետս դարձաւ Շիրազուօլէն իւրովք

բանակօքն և եկն 'ի Մախոուտարատ , Եւ կայր մօտ քաղաքին փոքրիկ ամրոց մի՝ ազգացն Ենկլիզաց՝ զոր Ասուամբազար ասէին , և վասն վաճառականութեանն ունէր փոքրիկ դիւղիկ մի , առաքեաց կոչեաց զամրոցաստան և սրահեաց զնա 'ի բանտի , և կալեալ զամրոցն տիրեաց ամենայն հարստութեան և վաճառացն , և չու արարեալ ամենայն զօրօք՝ զնաց , որ թէպէտ բազում կերպ խաղաղութիւն խնդրեցին , բայց ոչ եղև հնար , զի և սչ իսկ կարծէին՝ թէ զերկիրն տիրելոց էր :

Յետ այսորիկ յանկարծակի զօրքն Շիրազ դովլին ելին 'ի վերայ քաղաքին Ապիլաթայ , և քանզի սչ գոյր 'ի նմա պատերազմական ամրոց , այլ փոքրիկ դղեակ մի՝ որ շրջապատեալ էր պարսպաւ , և անդ էին տուն քաղաքապետին և ամենայն ինչք վաճառականաց , զոր զօրքն Շիրազդովլի պաշարեցին , և զի ոչ գոյր բաւական զօր քրիստոնէից առաւել քան զչորս հարիւր զինուորս , և ամենայն վաճառականք ազգացն քրիստոնէից , և մերս Հայոց յազգէն չէին առաւել քան զմի հարիւր և յիսուն անձինք՝ որք էին վաճառականք մեծք և հարուստք , և բազումք յայլազգեաց , այսինքն , Յունաց , Ասորոց , Փլթքէշաց , և

այլոց բաղմաց, որք վասն յանկարծակի դարստեան Շիրազդուլին, ոչ կարողացան ունել կամ թագուցանել զինչս իւրեանց, այլ թողեալ զտունս իւրեանց լի վաճառօք, միայն ինքեանք փախեալ մտին յամրոցն յայն: Իսկ զօրք թշնամեաց սկսան յաւար արկանել զամենայն զքաղաքն Ալիկաթա: Բայց տեսեալ Քրիստոնէիցն ՚ի միջոյ ամրոցին՝ թէ ոչ գոյր օգնութիւն ինքեանց, և ոչ լինի ազատութիւն՝ անձաբացան, և ապա բացեալ զփոքրիկ դուռն ամրոցին՝ որ էր ՚ի վերայ Գնդայ գետոյն, ամենքեան փախուցեալ ելին ՚ի վերայ նաւաց, և կտրեալ զմալուխս խարսխացն, և բացեալ զառագաստս գնացին ՚ի կողմն հարաւոյ: Իսկ ամրոցիկն այն լի հարսաութեամբ յաւարի էառ Շիրազդուլա, և զբազումս ՚ի զօրաց Քրիստոնէից՝ որք ոչ կարացին փախչել՝ ըմբռնեալ եդ ՚ի փոքրիկ բանտի միոջ, ուր ոչ լինելով նոցա բաւական տեղի, անօրէն զօրք Շիրազդուլին նորին հրամանաւն՝ ածէին մինն ՚ի վերայ միւսոյն, յորոց մեռան աւելի քան տասն և հինգ զինուորք ՚ի միում գիշերի: Յետ տիրելոյ ամենայն քաղաքին և աւար առնելոյ զամենայն ինչս նորա, նստաւ անդ զաւուրս քսան և հինգ, և կոչեաց զանուն

բաղաբին Ալինազար . և թողեալ անդ ը զզօրս  
յանձնեաց զբաղաբն ՚ի ձեռս Ասաշա Մնիկ-  
չանդին , և ինքն մնացեալ զօրօք իւրովք . և  
ամենայն աւարօքն , հանդերձ քաննի մի կա-  
նամբք իշխանաց եւրոպացւոց՝ չու արարեալ  
գնաց ՚ի Մախսու տաքսա :

Յայտմիկ ժամանակի էր անդ ՚ի դրունս իշ-  
խանացն և յԱղբէս մերմէ երեկի ի իշխան մի՝  
Աղա Պետրոս Տէր Անկողայոսեան անուն ,  
Տուղայեցի , վաճառական անուանի յոյժ . որ  
վասն իւրոյ հաւատարմութեան , խոհմութեան  
և ճշմարտութեանն սիրելի էր լիալ յաչս Ա-  
լաիւէրդի խանին և բազմաց . մինչև կկենն Ալա-  
վէրդի խանին՝ զսա եղբայր ինքեան էր անուա-  
նեալ . և առանց վարտակի կամ հրամանի  
արձակօրէն ելանէր ՚ի տեսութեան քեռն իւ-  
րոյ , և իշխանքն ամենայն պաշտէին զնա որ-  
պէս զսուրբ , վասն բարեպաշտութեանն : Սա  
դնացեալ ՚ի ձեռն բազում գանձուց և ընծայից  
բաշխելոց ամենեցունց , ազատեաց զկանայսն  
Եւրոպացւոց . և բերեալ ՚ի սուն իւր՝ մսի-  
թարելով պահէր զաւուր ինչ . որոց և լցուցա-  
նելով զամենայն զպակասութիւնս՝ առաքեաց  
՚ի տեղին Ալանդզի , և անախ ՚ի Ապիկաթա .  
տալով ամենեցունն բազում ինչս . յորոց մի էր

և կինն Գօզէրնազօրին Մալկաթայ՝ որ այժմս  
Բիրի Սանսէն անուանեն :

Եւ ապա Շիրազոզլէն հրաման արար յիւ-  
րում տէրութեան՝ թէ սէր ու բիժն իցեն Ինգ-  
լիզացն տունք կամ վաճառք , կալցեն և հան-  
դերձ վաճառօքն առաքեսցեն առ ինքն . որոց  
և զոյր ՚ի բազում տեղիս . թէ ՚ի սուբէն Բահար .  
և թէ ՚ի սուբէն Բանկալայ՝ ՚ի Պաքա և  
՚ի Մալդէ : Եւ թէպէտ բազումք ՚ի Քրիստո-  
նէից ևս փաթուցեալք գնացին ՚ի Փալթա՝  
բայց ամենայն հարստութիւնք և վաճառք  
նոցա յաւար եղեն :—

Իսկ ազգն Ինկլիզաց և քրիստոնէից՝ որք  
փախուցեալ նաւօք , գնացեալ էին հեռի ՚ի  
Մալկաթայ քսան և հիւզ քօս , ՚ի դեղն Փալ-  
թա բրասի , որ էր տեղի Աղգացն Հօլանդա-  
ցւոց՝ ուրանօր շինեալ էին ՚ի փքրիկ գեօղի՝ բնա-  
կարան մի՝ և զտեղի վասն պիտոյից մեծամեծ  
նաւաց իւրեանց . Քանզի վասն պակասութեան  
ջրոյ՝ Ինգայ գետոյն և վնասակարութեան նո-  
րա՝ մեծամեծք ՚ի նաւաց անդր միային և դար-  
ման դամակէին օգնականութեամբ գեղն Փալ-  
թայ բրասայ : Ի ժամանակիս յայսմիկ եղեալք  
տեղւոյս բազում նեղութիւնս կրէին , վասն  
կերակրոց և ապրելիւոց , քանզի ամենայն քա-

ղաքքն և դաւառք եղեալ էին թշնամիք նոցա , և յաՀէ բարբարոսին ոչ ոք իշխէր տանել նոցա զկերակուր . թէպէտ ազգն Ինկլիզաց և այլ Բրիտանիայի թագստեան ժողովէին զզօրս , և մերթ յանկարծակի գնային ՚ի ցամաք , աստ և անդ շրջելով ՚ի մօտակայ գիւղօրէս վասն կերակրոց , և զոր ինչ որ գտանէին յաւարի առնէին , բայց այնքիկ ամենայն ոչ լինէին բաւական զօրաց և նաւաւարաց նոցա . վասն այնորիկ նեղութիւն բազում լինէր նոցա հասարակաց . մանաւանդ՝ ազնիւ և մեծամեծ իշխանաց , որոց ոչ գոյր կերակուր համեմատ կամոց նոցա , վասն այնորիկ առաւել լինէր նեղութիւնն :—

Յայտ՝ ժամանակի կայր ՚ի Բանկալայ՝ վաճառական ոմն ՚ի մերս Հայոց ազգէ , անուն նորա Ազոյ Պետրոս որդի Բալանթար Յարութիւնին երևանցի նոր Մուղայու . սոյն այս Պարոն եկեալ էր յերկրէն Պարսից վաճառականութեան աղադաւ , և կեցեալ էր յերկրին Բանկալայ՝ յաւել քան զամս քսան , որ և էր տեղեակ ամենայն կանոնաց երկրին : Սա վասն ժամանակաւոր յիշատակի ինքեան , և վասն ազգին իւրոյ սլայծառութեան և երախտաւորութեան , առ ոչ ինչ համարեցաւ զսոս

տիկ հրամանն բարբարոսին կամ զկորուստ ան-  
 ձին իւրոյ . որով և ոչ սակաւ բարերարու-  
 թիւնս արար Վնկլիզոց . ոչ զխտելով՝ թէ գայ  
 ժամանակ՝ որ փոխանակ երախտաւորութեան  
 իւրոյ՝ ապիրախտ առձայնէին զնա . քան զամե-  
 նայն ազգս : Քանզի սա ՚ի ծածուկ զնաց առ  
 Ոսաջա Մեկէչանդ՝ թէ ընտանիք իմ՝ փոխու-  
 ցեալ կան ՚ի Փալթա բրասի՝ ՚ի վերայ նաւաց .  
 և վասն ուտելեաց կրեն զբազում վիշտս . եթէ  
 տաս հրաման ուղարկեմ վասն նոցա զկերա-  
 կուրս : Իսկ նա վաղեմի ծանօթ և բարեկամ  
 գոլով նորա , ետ հրաման զի գաղտ առաքեսցէ,  
 և մի ոք լուիցէ :

Յայնժամ եկեալ սլաւորաստեաց զամենայն  
 զկերակուրս և զբարելիս , և լցեալ ՚ի չորե-  
 սին նաւակս՝ գաղտ առաքեաց ՚ի Փալթա առ  
 ազգն Վնկլիզոց՝ որք յորժամ ընկալան , մեծ  
 շնորհակալութիւնս մատուցին նմա , և խոս-  
 տացան փոխանակ այնոցիկ . մեծամեծ բարերա-  
 րութեամբ ծառայել յազգէ յազգ : Յետ սա-  
 կաւ աւուրց կրկին ևս սլաւորաստեաց վասն  
 նոցա զամենայն բարելի կերակուրս և առա-  
 քեաց բազում նաւօք , որք ընկալեալ բազում  
 ևս շնորհակալութիւնս մատուցանէին . հան-  
 դերձ բազում խոստմամբք , թէ փոխանակ մի-

օյն՝ բխրապատիկ յիտս վաճարելոց են յազ-  
 դաց յազգս . և ցանկացան տեսանել զբարեկամն  
 իւրեանց , որ և յետ քանի աւուրց՝ դարձեալ  
 սլաութաստեաց այլ ևս առաւել կերակուրս ,  
 և լցեալ ՚ի կուրս բազումս՝ գնաց և ինքն ընդ  
 նոսա ՚ի Փալթա՝ ՚ի վերայ նաւին Խնկիկզաց .  
 և եցոյց ամենեցուն զսէր իւր՝ ՚ի ձեռն յուսա-  
 դրական մխիթարութեանց , ընդ որ ոքանչա-  
 ցեալ զահի հարեալ կային ամենայն իշխանքն ,  
 վասն հաւատարմութեան նորա : Ապա ամենե-  
 քեան միաբերան՝ թէ ՚ի կողմանէ Թաղաւորին ,  
 թէ Արամիանեոյն , և թէ ինքեանց , տային  
 բազում շնորհակալութիւնս . և խոստանային  
 փոխարէն հատուցանել բազում բարերարու-  
 թեանցն յազգաց յազգս : Եւ կացեալ Ազայ  
 Պետրոսի զգիշեր մի ՚ի վերայ նաւին՝ ՚ի վա-  
 դիւն դարձաւ յիտս ՚ի Արիւթա : Այսպէս  
 մինչև ցամիսս վեց՝ մշտապէս առաքէր նոցա  
 զկերակուրս յամենայն բարելիաց , և յորժամ  
 կրկին անգամ գնաց Ազայ Պետրոսն ՚ի Փալ-  
 թա՝ առ ՚ի տեսութիւն Խնկիկիկ իշխանացն , և  
 մինչ դեռ էր անդր՝ եկեալ հասին ութն նաւք  
 Խնկիկիկաց բազում զօրօք և օգնականութիւն .  
 հինգ նաւք ՚ի Բումբայուց երկու սպարապե-  
 տօք՝ յորոց անուն միոյն էր Աօկակ՝ և էր իշ-

խան ծովային պատերազմաց , որում ասէին Ադ-  
 միրալ Կօկակ : Եւ անունմիւսոյն՝ էր Ալէվիս ,  
 որ էր սպարապետ և կողմնակալ . որոյ ասէին  
 Չնդբալ Կօլօնէլ Ալէվիս՝ որ և էր սպարա-  
 պետ և իշխան ցամաքային զօրաց : Եւ երեք  
 նաւք եկեալ էին 'ի Մազրասայ , որոց սպա-  
 րապետ ծովային զօրացն էր՝ Ադմիրալ Աթ-  
 սէն , որոց կային զինուորք 'ի վերայ նաւացն , 'ի  
 Հնդկաց յազգէն . որք Վարդէք կամ Սփայիք  
 ասեն , երեք հազարք . և զինուորք Քրիստոս-  
 նէիցն մն ծ և փոքր առ հասարակ՝ թէ 'ի վերայ  
 նաւաց , և թէ 'ի Փալթա , երեք հազար և  
 հինգ հարիւր . և բերեալ էին զբազում պատ-  
 րաստութիւնս պատերազմաց : Իսկ Պետրոս  
 Ազայն կամէր յետս դասնալ 'ի Ալիաթա ,  
 և ոչ թողին զնա , վասն իրիք խորհրդոյ և  
 հարկաւորութեան պահեալ ընդ ինքեանս :  
 Եւ ապա 'ի Փալթուց չու արարեալ նաւօք  
 եկին հասին 'ի գիւղն Բուջբուջեա . որ և դոյր  
 անդր ամբոց մի . և լուան՝ թէ կան 'ի միջի  
 ամբոցին զօրք Շիրազդովլի՝ իբրև երկու հա-  
 զար արք . և բազում պատրաստութիւնք ,  
 այլ և թէ Առաջա Մնիկչանդն բազում պատ-  
 րաստութեամբ , և երկու հազար հեծելազօրօք  
 եկեալ 'ի Բուջբուջեա՝ արարեալ էր զբանակ

իւր հանդէպ դրան ամբողջին , հեռի 'ի նմանէ մի քօս . զի 'ի Բուջբուջիայ մինչև 'ի Ասլ-կաթա՝ է եօթն քօս 'ի կողմանէ արևելից : Յորժամ հասին աստ ազգքն Քրիստոնէից , սկսան նախ պատերազմիլ ընդ ամբողջին զաւուրս հինգ . բայց սչ ինչ կարացին առնել , ասլա խորհուրդ արարեալ առ աքեցին արս չորեսինս յազգէ իւրեանց առ Մ'նիկչանդ , բայց ոչ եղև հնարաւոր , որք յիտոյ անձարոցեալ Աղայ Պետրոսին ազաչեցին , որ նա 'ի Տաճուկ գնացեալ առ Ռաջա Մ'նիկչանդն 'ի ձեռն բազում խոստմանց և կաշառաց՝ միաբանեցոյց ընդ ազգին Խնկիկաց : Որ և ընկալաւ զսրատուէր ,՝ թէ դուք եկայք պատերազմաւ 'ի վերայ բանակի իմոյ , և ես իմայնոցն պատուէր տամ զի 'ի միջոյ պատերազմին 'ի փախուստ դառնայցեն :՝ —

Յորժամ յիտս եկեալ Աղայ Պետրոսի 'ի նաւն՝ պատմեաց Խնկիկացն , նոքա կրկին պատրաստեցան , և բազում զօրօք գնացին 'ի ցամաք , և արարին սլաննէչ շուրջ զզամբոցաւն , և զմասն ինչ 'ի զօրաց իւրեանց առ աքեցին 'ի վերայ բանակի Ռաջա Մ'նիկչանդին և ետուն պատերազմ , յորմէ փախեաւ Մ'նիկչանդն զօրօք իւրովք , բայց ամբոցն դեռ և ս պատերազմէր

ընդ նոսա, ոչ գիտելով զվատուստ Սնիկչան-  
 դին մինչև զառուրս չորս, Եւ յորժամ լուան  
 դօրքն յամբողջ անախ՝ թէ վատեաւ Սաջա  
 Սնիկչանդն, ամենեքեան մնացին ՚ի մեջ տա-  
 րակուսանոց և կասկածանոց, Եւ յառուր  
 յայնմիկ նաւապետք նաւաց Ինկլիզաց՝ զը-  
 նացին ՚ի մօտ Ագմիրալ Աօկակին՝ և ասին,  
 “Թէ տուր մեզ հրաման, զի մեք յայսմ գիշերի  
 գնդաւ մերով առնուամք զամբողջ զայս, բայց ոչ  
 կամմաք՝ զի զինուորքն միաւորեցին ընդ մեզ,“  
 Յայնժամ ծիծաղեալ Ագմիրալին յոյժ, ետ  
 նոցա հրաման, ասելով՝ թէ միայն յայսմ  
 գիշերի՝ արարէք զոր ինչ և կամիք, և նոքա  
 գնացեալ ՚ի նաւն ընտրեցին զքանի մի արս  
 կորովակիրս և զերկու հարիւր ՚ի նաւաստեաց՝  
 մտրինր անուանեալս, և ՚ի գիշերին յայնմիկ  
 իջին ՚ի նաւացն ՚ի ցամաք, ոչ ունենալով  
 զզէնս առաւել քան զգոյգ մի պշտօլաց՝ և զգա-  
 նակ մի՝ առանձն, Եւ թաքթաքուր գնացու-  
 թեամբ գնալով հասին մինչ ՚ի սլաքիսսլ ամրո-  
 ցին, և սկսան նման գաղտ գողոց պարան առ  
 պարան մի սլրկեալ լինելով, և մինն ՚ի վերայ  
 միւսին՝ ՚ի վեր լինելով մինչ հասին ամենեքեան  
 ՚ի վերայ պարսպաց ամրոցին, Բայց ժամն էր  
 գիշեր և մթին յոյժ, և բազումք ՚ի զօրաց

ամբողջին էին դեռ արթուենք . խոհ ոչ գիտէին զայս հնարս և ոչ ևս ձայն ինչ լսէին , մինչ ամենեքեան նոքա միաձայնեալ՝ դռնէլով . ուսհան , և կրակելով զպշփօլս և առեալ զգանակս 'ի ձեռս իւրեանց՝ վազէին 'ի մէջ ամբողջին : Յայնժամ ամենայն արք և զօրքն՝ որք էին 'ի մէջ ամբողջին , թողին զզէնս իւրեանց . և 'ի կողմանէ արևելից բացեալ զգուռն՝ փախեան ամենեքեան , մինչև չմնալ 'ի նոցանէ և ոչ մի :

Իսկ 'ի լուսանալ առաւօտին եկին զօրքն Ինկիլիզաց և տիրապետեցին զԼուջբուջիս , և թողեալ անդ զգուռնդ մի Պարզի զօրաց , և մնացելոցն մտեալ 'ի նաւ եկին 'ի քաղաքն Սալկաթա , և ամենայն զօրքն Շիրազդօլլին՝ որք կայն 'ի մէջ Սալկաթոյ , թողին առանց պատերազմի և փախեան , մինչև ոչ մնաց մի 'ի նոցանէ : Ապա իջին խաղաղութեամբ ազն Քրիտանացւոց և տիրեցին քաղաքին իւրեանց՝ որպէս նախ : Ալ յետ քանի մի աւուրց պատրաստեցին զզօրս և առաքեցին 'ի քաղաքն Հուգլի՝ որ նախ էր տեղեազգին Փրթբիշայ , որում Ազգն Հնդկաց տիրեալ էին՝ որպէս յառաջն պատմեցի . և գոյր աստ զօր Հնդկաց բազում , մինչ հասեալ զօրացն Ինկիլիզաց պատե-

բողոքս ցան, և նոցա թողեալ զքաղաքն փախեան: Իսկ Ինկլիզաց հրկիզելով և յաւար առնելով զքաղաքն՝ դարձան յետս ՚ի Վալիաթա:

Ի ուեալ Շիրազդովլայի զանցելոյն եղելոց, և զօրաժողով եղեալ հրկին եկն, մինչ հասեալ մօտ ՚ի քաղաքն Վալիաթա ՚ի կողմն հիւսիսային ելեր քաղաքին, որ ասեն Քաղբազար, որ էր մարմանդ աեղ, և գոյր այգի, և էր դաշտ մի գեղեցիկ, արար աստ զբանակ իւր: Եւ ՚ի գիշերի միում քաջացն Ինկլիզաց առեալ զմի հազար և զերկուս հարիւր զինուորս, յանկարծակի հասին, և անկեալ ՚ի վերայ բանակին Շիրազդովլայ՝ արարին սրտերազմ անսպասմելի քաջութեամբ, ուր ՚ի զօրացն Շիրազդովլայ բազումք մեռան, և բազումք ՚ի փախուստ դարձան: Իսկ զօրքն Քրիստոնէից դարձան յետս ՚ի Վալիաթա, և ՚ի լուսանալ առաւօտուն իշխանք Շիրազդովլայի եկեալ ՚ի քաղաքն Վալիաթա՝ արարին խաղաղութի, և Շիրազդովլէն խոստացաւ տալ զգին աւարին Քանկալայ:

Յետ հաշտութեանն չուարարեալ Շիրազդովլայ զնաց ՚ի քաղաքն իւր ՚ի Սախսուտաբատ:

Եւ յետ աւուրց ինչ անցելոց, եղև խոսովութիւն Պաանսղին ընդ Ինկլիզաց, և մինչ

լուան 'ի թագաւորէն իւրեանց զհաստատու-  
 թիւն սլաաերազմին՝ ազգն Ինկլիզաց ելին 'ի  
 Վալիաթա ցամաքային ճանապարհաւ, և գնա-  
 ցեալ սլաշարեցին զՉանդնազար՝ զամրոցն  
 Ֆրանսիզաց, և ետուն սլատերազմ՝ զաւուրս  
 մետասան: Եւ յորժամ ոչ կարացին առնուլ,  
 անճարացեալ գնացին 'ի Վալիաթա, ուստի  
 եկին երեք նաւք սլատերազմականք Պնդա  
 գետովն, և հասեալ յանդիման ամրոցին,  
 սկսան քենեկահար առնել մինչև ցժամս վեց,  
 և ջնջեցին զամենայն սլարխալս ամրոցին քա-  
 կելով զամենայն: Քանզի ազգն Ինկլիզաց ոչ  
 ցանկային այնպիսի անյաղթելի ամրոցի մնալ  
 'ի ձեռս այլոց: Յետ տիրելոյ Ինկլիզացն ըզ-  
 Չանդնազար, թողին զսակաւս 'ի զօրաց իւ-  
 րեանց անդր, և աւին զամենայն աւարս քա-  
 ղաքին, և ըմբռնեալ զամենայն զզօրս նորա,  
 բերին 'ի Վալիաթա, և ըստ կանոնի իւրեանց՝  
 ետուն նոցա երդումն և թողին 'ի միջի ար-  
 գելանաց, տալով նոցա զզարմանս կերակրոց:  
 Եւ զօրքն Ֆրանսիզաց էին առաւել քան զեր-  
 կու հարիւր և յիսուն, իսկ յիշխանաց նոցա  
 մասն ինչ 'ի Վալիաթա թողին, և զմասն առա-  
 քեցին 'ի Չիչրա բնակել: Եւ յետ այսր ամե-  
 նայնի՝ ապա ազգն Ինկլիզաց առաքեցին 'ի Վալ-

կաթայ՝ զհազարապետ մի՝ Մատր Աջան-  
ուամբ հանգերձ Աղայ Պետրոսիւ ՚ի Մախ-  
սուտարատ առ Շիրազդովլին , զի առցին ՚ի  
նմանէ զգինս աւարաց եղելոցն ՚ի Աալիաթա :  
Եւ յորժամ նա ետես զսոսա , սկսաւ սնտի  
սիրով խաբելն . երբեմն այսօր կամ վաղուեան  
ձգելով , և երբեմն բարկանալով ասէր , “ թէ  
ոչ տամ . կամ թէ կրկին զօրաժողով լինիմ և  
վարեմ զդոսա մինչև յերկիրն իւրեանց ,” և  
մերթ ասէր , “ թէ խնով լեզուան խոստացեալ  
եմ , ապա հարկէ ինձ տալ նոցա ,” Այդ նոսա  
այսպէս տանէր , և ՚ի դադտ առաքէր զմի յիշ-  
խանաց իւրոց յերկիրն Պաքան՝ առ ազգն  
Ֆռանսիզաց , ՚ի ձեռն գրոց ծանուցանելով ,  
“ թէ դուք եկայք առիս , և ես ձեզ բազում  
զանձս և երկիրս ընծայեմ . զի միաբանեսցուք  
և սրատերազմեսցուք ընդ Ինկլիզաց , և վա-  
րեսցուք զնոսա յաշխարհէ իմմէ . զի ոչ թողից  
զնոսա վերստին դալ յաշխարհս իմ :

Յորժամ ազգն Ֆռանսիզաց ընկալան զգիրն  
Շիրազդովլին , տեղեկացան խորամանկութեց  
նորա . վասն այնորիկ անփոյթ տրարին զգալս-  
տենէ իւրեանց : Իսկ Սպարապետ Շիրազով-  
լին՝ որոյ անունն էր Միր Պաքարալի Իսան ,  
ուներ ծանօթիւ թիւն ընդ Աղայ Պետրոսին ,

և էին բարեկամք . առ որ քանիցս անգամ  
 Աղայ Պետրոսն զաղտ զնացեալ էր 'ի տուն  
 նորա , և նա խօսեցեալ և եղեալ էր դաշինս  
 ընդ նմա , « թէ կրկին անգամ յորժամ Ինկ-  
 լիզքն զօրօք զան պատերազմիլ ընդ Շիրազ-  
 դօվլին , ես զօրօք խմովք ընդ ձեզ եղէց 'ի պա-  
 տերազմին և լմբունեմք զնա . յոյնժամ յեր-  
 կիրն տուք ինձ , և ես տայ ձեզ զչորս քրօր  
 սուփիս՝ վասն գնոց աւարաց երկրին ձերոյ : »  
 Ընդ որ յոյժ հաճեցեալ ազգացն Ինկլիզաց ,  
 յերկոցունց կողմանց՝ երդմամբ եղև կատարումն  
 դաշանց . և յաւուր միում թարց գիտութեան  
 ուրուք , փախեան դեռսպանքն Ինկլիզաց մտար  
 Ալաշն և Աղայ Պետրոսն 'ի Սախսուտաբատայ ,  
 և եկին 'ի Ասիլաթա :

Ապա ազգքն Ինկլիզաց պատրաստեցին ըզ-  
 զօրս իւրեանց , ելանել 'ի քաղաքէն Ասիլա-  
 թայ , զոր լուեալ Շիրազդօվլայի՝ ինքն ևս  
 զօրաժողով լեալ՝ ել 'ի Սախսուտաբատայ  
 ութնևտասն քօս ճանապարհաւ , մին չ հասեալ  
 'ի գաւառն Քաթուայ՝ 'ի գեօղն՝ որ ասին Պա-  
 լասի , հանգիպեցան երկուց ազգաց զօրքն դէմ  
 յանդիման միմեանց 'ի դաշտին , և էր Ինկլի-  
 զաց սպարապետ՝ մտար Ալէվիսն , և Հնդկաց՝  
 ինքն Շիրազդօվլէն :

Բայց Շիրազդուօլլէն զբանակ իւր երեք  
բաժին արարեալ՝ զմինն սլահեաց ընդ իւր, և  
զմիւսն հա Միր Ջաֆարալի խանին, զոր  
առաքեաց ՚ի կողմն արևելից, և զմինն ետ  
Միր Մադանին և առաքեաց ՚ի կողմն հիւ-  
սիսի, և սկսան պատերազմիլ: Եւ ազգն Ինկիլե-  
զաց տեսեալ՝ թէ Ջաֆարալի խանն պատե-  
րազմի ընդ ինքեանց, ասացին ցԼճայ Պեա-  
րոսն, ՚՛ թէ մեք խօսից քոց հաւատացաք և  
եկաք պատերազմիլ, և ահա տեսանեմք զի  
զօրք Ջաֆարալի խանին պատերազմին ընդ  
մեզ: ՚՛ Ասնտրոյ գնացեալ Լճայ Պեարոսին  
դադտ և յայտնեաց նմա, թէ դու երդմամբ  
եղեր դաշինս ընդ մեզ, և այժմ՝ ներհակն գոր-  
ծես: Ջաֆարալի խանն պատասխանեաց՝ թէ  
«մի երկն չիր յինէն, թէպէտև ես պատերազմիմ  
բայց միայն հրափոշոյ ձայնք եր գորս լէքդ,  
և ոչ կայ բոլիկ ՚ի մէջ հրացանաց կամ քենե-  
կացն, և ոչ մնասեն ինչ զօրաց ձերոց, դուք  
միայն որքան որ կարողանայք զօրք ձերովք  
պատերազմեցէք ընդ զնդ ի զօրաց Միր Մա-  
դանին, որ նա ՚ի սրտէ և քաջութեամբ պա-  
տերազմի ընդ ձեզ, յորժամ զնա սպանէք կամ  
՚ի փախուստ դարձուցանէք, յայնժամ մեք ա-  
մենեքեան ընդ ձեզ եմք:»

Գարձաւ Աղայ Պիարոսն և պատմաց իշխանացն Ինկիլզաց , և նոքա ՚ի ձեռն քննուե ծանեան զճշմարտութիւն ասացելոց Սաֆարալի խանին , Ալա թողեալ զգունդս նորա , գնացին ՚ի վերայ գնդի Սիր Սաղանին , որ հեծեալ էր ՚ի վերայ փղի , և սչ ճանաչէին զնա զորքն Ինկիլզաց , վասնորոյ սպանանէին զբազումս ՚ի փղաց հեծելոցն , մինչև առաքեաց Սաֆարալի խանն զմի ոմն ՚ի զօրաց իւրոց և ծացոյց նոցա զփիղ նորա , զոր քեներկահար արարեալ սպանին , և զՍիր Սաղանն , Օր տեսեալ զօրաց նորա , սկսան ՚ի փախուստ դառնալ : Տեսեալ զայն Շիրազդուլոյ , գնաց առ Սաֆարալի խանն , և ասաց . “Պատ՛ սյս ինչ եղև . զի զօրք իմ փախչին , այժմ՛ զի՛նչ խրատ տաս ինձ :” Եւ պատասխանեաց , “Թէ դու վասն էր մնաս աստ , փու թո՛ գնա՛ ՚ի քաղաքն և ժողովեա՛ զօրս և առաքես ջիր աստ կանուխ . և մինչ ցհասանել զօրացն յօգնութիւն ինձ , ես ընդ թշնամեաց պատերազմեցայց , վասն որոյ՝ թող աստ առիս զգունդս զօրաց քոց :”

Ենգէտ չարն Շիրազդուլա՛ հաւանեալ բանիցս , հթող զզօրս իւր ՚ի ձեռս նորա , և ինքն ՚ի միջօրէի գնացեալ՝ չորս ժամու միջոցաւ եհաս ՚ի քաղաքն Մախսուտբաս , և

խսկոյն հրաման արար զանճապետին իւրում  
բուժանել զբամս զօրաց , և ետ լուր “Թէ ո՞վ  
ոք կամիցի պատերազմել ընդ Թշնամեաց իմոց ,  
եկեալ աւցէ զգրամս , և ՚ի մէջ վեց ժամուց  
առաւել .քան զմի քրօր ռուփիս” (որ է հարիւր  
լաք , ) ետ զօրաց նորոց :

Օ կնի գնալոյն Շ իրազդօվլայ ՚ի քաղաքն՝  
առ ՚ի ժողովել զզօրս՝ Ս աՓարալի խանն գնա-  
ցեալ միաբանեցաւ ընդ Ինկիլիզայ՝ զօրօք իւ-  
րովք , և ետուն պատերազմ ընդ մնացեալ  
զօրացն Մ իր Մալանի : Յորժամ լուան զայս  
զօրքն նորաժողով՝ որք առեալ էին զգրամս ,  
ոչ գնացին ՚ի պատերազմ , այլ փախուցեալք  
Թագեան ՚ի տունս իւրեանց :

Անճարացեալ Շ իրազդօվլայ , լսելով ևս  
զգուժկան եղելոցն՝ խուճապեալ յերկիւղէ  
էառ ինքեան զերիս ՚ի հաւատարիմ ծառայից  
իւրոց , և մտեալ ծածուկ ՚ի նաւակ մի , փա-  
խեալ ՚ի կողմն սուբային Բհարայ , և երեք  
աւուր ճանապարհ գնալով եհաս ՚ի քաղաքն  
Ուաջմհալ , և վասն պակասութեան կերակրոյ ,  
առաքեաց զմի սմն ՚ի ծառայից իւրոց զնես-  
ցէ և բերցէ կերակուրս , և ինքն սակաւ ինչ  
հեռի ՚ի քաղաքէն Թագուցեալ կայր :

Արք քաղաքին յորժամ տեսին զծառայն ,

ասին ցմիմնանս թէ սա է մի 'ի հաւատարիմ՝  
 ծառայիցն Շիրազդուզլայի, բայց թէ ընդէր  
 եկեալ իցէ այսր՝ ոչ գիտեմք :” Այս լուեալ  
 դատաւորի տեղւոյն, զոր ասին Ղազին՝ առա-  
 քեաց զմի ոմն 'ի ծառայից իւրոց և բերեալ  
 զնա առ ինքն, ասէ ցնա թէ՝ “ուստի դաս, քան-  
 զի գիտեմք մեք զբեզ ծառայ հաւատարիմ՝  
 Շիրազդուզլին և զամենայն ինչ նորա կան 'ի  
 ձեռ ինքում. արդ մի գուցէ թէ՝ առեալ զինչս  
 նորա փախուցեալ ես աստ, մինչ զճշմարիտն  
 ոչ խոստովանիս ասէ, ես ոչ թողից զբեզ.” և  
 հրամայեաց զնել զնա 'ի բանալի :

Յայնժամ խոստովանեցաւ ծառայն՝ թէ  
 տէրն իմ ինքնին եկեալ է աստ, և է մերձ քա-  
 ղաքիդ, յայանելով նմա և զպատճառ փա-  
 խստեանն

'Ի լսել զայս ուրախացու Ղազինն. քանզի  
 յիսերիմ թշնամի նորա էր. զի իբրև չորս ամօք  
 յառաջ ըմբռնեալ զնա Շիրազդուզլայ վասն  
 պակասութեան իրիք, առեալ էր 'ի նմանէ ըզ-  
 բազում դանձս և գերծիալ իսկ զմօրուսն :

Սա վաղվազակի ելեալ հանդերձ ծառայիք  
 իւրովք՝ գնաց առ Շիրազդուզլան, և յոյժ խո-  
 նարհարար ողջունեալ նմա, ասէ՝ “Տէր իմ  
 զինչ պատճառի աղադաւ կաս աստ, շնորհ արան

եկ ՚ի տուն ծառայիդ քո՞ որ աստ պատրաստի է, և ես ծառայ քոյ եմ. և ամենայն կերպ ծառայելոյ պատրաստ կամ, փոքր ինչ հանդ իր ՚ի տան իմում, և յերտ այնորիկ՝ եղիցին կամք տեսանդ իմոյ : Այսպէս և բազում կերպ ծառայական զբուցիւք յորդորեաց զնա, մինչ տեսալ՝ տարաւ ՚ի տուն իւր :

Իւր ապա առ ժամն առաքեաց ՚ի ծածուկ՝ զմի ոմն ՚ի ծառայից իւրոց՝ առ Սաֆարալի խանն, ծանուցանել նմա : Իւր մինչ դեռ ՚ի ճանապարհի էր ծառայ Ղազարոյն, եկեալ ինդրակքն ՚ի զօրաց Սաֆարալի խանին, կալան զՇիրազդովլա ՚ի տան Ղազարոյն և եղին ՚ի բանտի :

Իսկ ազգքն Ինդլիզաց հանդերձ Սաֆարալի խանիւ, մինչ լուան՝ թէ փախեաւ Շիրազդովլայ ՚ի գիշերն, ինքեանք ևս ելին զօրօք և եկեալ կալան զբազաքն Մախսուտաբատ : Այդա հրաման արարեալ ընդ ամենայն տեղիս՝ թէ ուր և իցէ զՇիրազդովլա բժշկանսցեն և բերցեն ՚ի Մախսուտաբատ : Յայնմ ժամանակի եկեալ ծառային Ղազարոյ, պատմաց՝ թէ ՚ի Ռաշմհալ կայ ՚ի տան Ղազարոյն :

Առ որ ուրախացեալ յոյժ՝ Ինդլիզաց և Սաֆարալի խանին, առժամն առաքեցին զոր-

դի Չափարալի խանին որոյ անուն էր Միրէն, հանդերձ հեծելազօրօք, քանզի ՚ի Մախսուսաբատայ մինչ ՚ի Ռաշմ հալ է քառասուն քօս: Եւ հրամայեալ էր նոցա, զի ՚ի միջոյ քսան և չորս ժամուց հասեալ՝ ըմբռնեսցեն զնա և բերցեն, և նոքա մինչ ՚ի լուսանալ առաւօտին հասեալ ՚ի Ռաշմ հալ լուսն թէ՛ յառաջագոյն խնդրակքն հասեալ ըմբռնեալ են զնա՝ և եղեալ ՚ի բանախ: Բայց ազգքն Խնկլիզաց հրամայեալ էին Չափարալի խանին թէ՛ յորժամ գայ Շիրազուլլա, թող զնա ՚ի բանախ, մինչև մեք բնեկացուք զնա:

Իսկ Չափարալի խանն էր ՚ի միջի կասկածանաց, ասելով ՚ի միտս իւր թէ՛ եթէ ոչ սպանից զնա, գուցէ առցեն ՚ի նմանէ զղաշնազիրս, և կրկին տայցեն ինքեան զերկիրն, վասպնորիկ հրամայեալ էր ՚ի ծածուկ որդւոյ իւրում, զի սպանցէ զՇիրազուլլա: Յայնժամ հրամայեաց Միրէն ծառայից իւրոց զի բերցեն զՇիրազուլլա կապեալ, առ որ եկեալ ընդ առաջ նորա. սկսաւ լալ և աղերսել Միրէնայ թէ՛ “ո՛վ եղբայր մի սպանէնք զիս, այլ տուք ինձ զպարէն կերակրոց զամենայն աւուրս կենաց իմոց, և զամենայն երկիրս իմ՝ ձեզ լինիցի, և ուր որ կամիք պահեցէք զիս:”

Պատասխանեաց անօրէնն՝ թէ “ ընդէր ամսօք  
ինչ յառաջ ոչ ետուր մեզ զերկիրդ . որ մեք  
կառավարեաք և ոչ թողուաք տիրել այլազ-  
գեաց , իսկ այժմ՝ որ նոքա եկեալ տիրապետե-  
ցին զերկիրդ , այժմ՝ խոստանաս . կարծեմ , եթէ  
մեք լինեաք այժմ՝ նման քոյ , ոչ թող տայիր  
մեզ մնալ կենդանի . վասն որոյ և ես ոչ թողից  
դքեզ կենդանի : Օ այս ասացեալ , էառ զսուրն  
և եհար ընդ ուս նորա . որով անկառ Շիրազ-  
դօվլա յերկիր . և լոյր աղերսանօք , մինչ  
կրկին առեալ ՚ի Միրենայ զերեօին զվէրս ՚ի  
սիրտ , առժամն մնաաւ :

Ապա կտրեալ զգլուխն , և զդին բարձեալ ՚ի  
վերայ փղի , և դլուխն ցցեալ ՚ի վերայ փայ-  
տի՝ տանէին առաջեաւ նորա . և ինքն զօրօք  
իւրովք դարձաւ յետս ՚ի քաղաքն Սախսու-  
տաբատ . և որք լուանն և տեսին զայս ան-  
օրէն տիրասպանութիւն , տխրեցան յոյժ ՚ի  
վերայ զործոյն , և կամէին զփոխանորդն յետս  
վճարել Միրենայ : Ասանորոյ գնացեալ Սա-  
ֆարալի խանին խնդրեաց զթողութիւն մեղաց  
որդւոյ իւրում . և տուեալ զբաղում՝ գանձս  
արար խաղաղութիւն , և ինքն եղև աշխարհա-  
պետ երկուց սուբայիցն՝ Բանկալայ և Բհա-  
րայ : Իսկ զդէշ Շիրազդօվլին զերկուս ա-

և ուրս շրջեցուցին 'ի մէջ քաղաքին մինչև նե-  
խեցաւ , և ապա տարեալ թաղեցին 'ի Մու-  
րատ այգւոջն՝ մօտ 'ի գերեզմանն Ալալէրդի  
խանին :

Յամի Տերուն 1757 հոկտեմբերի 12, յա-  
ւուր երկուշաբաթի՝ աշխարհապետն Պաֆա-  
րալի խան նստաւ յաթու իւր , և բացեալ  
զգանձն Ալալէրդի խանի և Շիրազդուլի , ետ  
զչորս քրօր ռուփիսն ազգացն Ինկիլիզաց , և բա-  
զում ականս պատուականս՝ փոխանակ զնոյ ա-  
ւարին Բանկալայ :

Ազգքն Ինկիլիզաց ետուն Ալայ Պետրոսին  
զմի լաք . (որ է հարիւր հազար ,) փոխանակ  
զնոյ աւարիցն յազգէս Հայոց , և ամենայն ազ-  
գաց վաճառականաց եղելոց անդր վասն կորս-  
տեան սպրանաց իւրեանց , առաւել քան զմի  
և կէս քրօր ռուփիս , զորս թէպէտ ամենայն  
ազգք ուրախութեամբ ստացան , բայց հա-  
րուստ Ազգն Հայոց սակս փարթամութեան  
իւրեանց ոչ առին զայն , այլ զուարճութեամբ  
ասեն՝ թէ 'ի պատիւ պատերազմաց յաղթու-  
թեան և Քրիստոնէեցս մեք զբաժին մեր ըն-  
ծայեմք Աումպանեղն , վասն յաւիտեան յի-  
շատակի մերում :

Օ այսր ամենայնէ և զմահուանէ Շիրազ-

դ օվլայ համբաւեցաւ ընդ ամենայն երկիրն ,  
 մինչև յաշխարհն Ալօտ , զոր լուեալ քաղա-  
 քապետի տեղւոյն , որ էր վէղեր թագաւորին  
 Հնդկաց , և անուանէր Շուջալդօլա վասն  
 եղբայրացեալ լինելոյն ընդ Շիրազդօվլայի  
 մեծապէս տխրեցաւ , և բարկացեալ յոյժ , պա-  
 տրաստեաց զզօրս բազումս և ետ 'ի ձեռս Ահմատ  
 զուլի խան սպարապետին իւրոյ . հանդերձ  
 Ալամգիր թագաւորացին՝ որբուովն Ալիգուհար  
 թագաւորին , որ 'ի Շահանարատայ դերծեալ  
 'ի ձեռանէ Պաղդի խան Ալզրին՝ եկեալ էր  
 յԱլօտ քաղաք :—Եւ առաքեաց զսոսա 'ի  
 վերայ երկրին Բհարայ և Բանկալայ պատե-  
 րազմէլ : Եւ յորժամ հասին սոքա 'ի Փաթա-  
 նայ , պաշարեցին շուրջ զքաղաքան , և սկսան  
 պատերազմիլ ընդ քաղաքապետին՝ որ 'ի կող-  
 մանէ Պաթարալի խանին եկեալ էր անդր :

Լուեալ զայս Ինկիլզացն և Պաթարալի  
 խանին , պատրաստեցին զզօրս իւրեանց և ա-  
 ռաքեցին 'ի քաղաքն Փաթանա : յօգնութիւն  
 ամբոցի տեղւոյն , որոց զօրագուխ էր Միրէն  
 որդի Պաթարալի խանին : Հասեալ սորա 'ի  
 Փաթանա , ետ պատերազմ՝ ընդ զօրացն Շու-  
 ջալդօվլայ , զոր տեսեալ Ալիգուհարայ՝ թէ  
 ոչ լինի հնար առնուլ զամբոցն , եթող զքա-

դաքն Փաթանայ , և խոյս տուեալ զօրօք իւ-  
 բոլք : գնաց անտառային ճանապարհաւ ՚ի քա-  
 ղաքն Բիրբուն : Բայց մինչ դեռ ՚ի ճանապար-  
 հին Փաթանայ էր և պատերազմէր , եհաս հրա-  
 ման ՚ի Շուջավդօլայ , որ թողեալ զզօրս իւր  
 ընդ Թագաւորագին , ինքն Ահմատղուլի խանն  
 գնացէ յԱլօտ առ Սէզիրն՝ վասն իրիք պատ-  
 ճառի : Իսկ թագաւորագին գնացեալ ՚ի Բիր-  
 բուն պատերազմէր անդ , զորմէ լուեալ ջա-  
 Փարալի խանին հանդերձ Ինկիլիզօքն , առա-  
 քեցին զզօրս իւրեանց , որք եկեալ մօտ ՚ի  
 Բիրբուն՝ մերձ ՚ի դաւառն Թաշիտայ՝ ՚ի  
 գիւղն Ալամըզար կոչեցեալ , ետուն պատե-  
 ազմ՝ , յորում պարտեցաւ Ալամըիրն և փա-  
 խեաւ :

Եւ յորժամ ջաՓարալի խանն զօրօք  
 յետս դարձաւ ՚ի քաղաքն Մախսուտարատ ,  
 կրկին Ալամըիրն յետս դարձաւ ՚ի պատե-  
 րազմի : Յամի Տեառն 1759, մինչ դեռ պա-  
 տերազմէր սա ՚ի Փաթանա , եւ Միրէն որդի  
 ջաՓարալի խանին զօրօք իւրոլք և գոյր  
 պատերազմիլ ընդ Թագաւորագին , որոյ հա-  
 սեալ ՚ի Մունկէր , ՚ի դաւառն Սմալօլի՝ արար  
 զբանակ իւր ՚ի դաշտի մերձ ՚ի գետի Ալթի , և  
 յայնմիկ գիշերի մինչ ննջէրն , յանկարծակի

կայծակնահար եղև 'ի թընդմանէ փոքր ինչ ամ  
պոյ՝ որ այրեաց զամենայն մարմին նորա միայ-  
նոյ . և վասն տիրասպանութեանն՝ տիրական  
սրօք մեռաւ անօրէնն : —

Սայս տեսեալ զօրացն՝ գնացին 'ի Փա-  
թանա , և մտեալ յամբողջ կային 'ի սպասու աշ-  
խարհապետի տեղւոյն , որոյ անուն էր Ռամ-  
նարայն . որ ել զօրօք իւրովք պատերազմիլ ընդ  
թագաւորազին , և յորժամ զօրք Սաֆարալի  
խանի 'ի կողմն Հիւսիս հարկանէին , Ալամ-  
զիրն փախչէր 'ի հարաւ . և յորժամ նոքա  
աստ գային , սա գնայր անդր , և այսպէս ոչ  
տայր հանգստութիւն զօրաց Սաֆարալի խա-  
նին , մինչև զամս երիս :

Սաֆարալի խանին ոչ գոյր այլ որդի՝ որ  
կառավարէր զերկիրն . զի թէպէտև կային նո-  
րա որդիք հինգք , բայց ամենեքեան երեսայք  
էին և անտարեւորք : Այս և Սաֆարալի խանն  
ստացեալ էր զցաւ անիծեց , զոր անուանեն  
պիտակ՝ որ է (կօր ,) և միշտ հիւանդ լինելով և  
'ի միջի գեղօրէից՝ վասն այսորիկ ազնի  
Ինկ-  
լիզաց զաշխարհապետութիւն երկուց սուրա-  
յիցն ետուն փեսայի նորա , որոյ անուն էր Ա-  
սուամալի խան : Արոյ պատճառն եղև այսպէս :

ՔԱՆՁԻ Պետրոս Աղայի երկու եղբարք  
 էին, որք առնէին զգործս վաճառականութեան  
 ՚ի քաղաքին Բանկալայ, երկրորդի անուն էր  
 Գրեգոր, որ յետոյ Գօրգինիսան կոչեցաւ, և  
 երորդին Աղայ Բարսեղ. և Գրեգոր Աղայն  
 էր ՚ի քաղաքին Մախսուտարատ, և էր բա-  
 րեկամ Կասուժալի խանին. և երթե եկութիւնս  
 պահէր ընդ նմա, Յաւուր միում Կասուժա-  
 լիխանն ասէ ցնա թէ՛ «Աղայ Պետրոս եղբայր  
 քոյ կարէ խօսել ընդ ազգացն Ինկիլզաց զի միջ-  
 նորդութամբ նորա եղէց ես աշխարհապետ, և  
 տաց նմա զգաւառն Բարդուան՝ որ ըստ դիւա-  
 նագրոց թողաւորաց մերոց հարկէ ինձ մերձ յի-  
 սուն և երկուս լաքս ռուփեաց, տաց նաև ըզ-  
 սարքարն Խալամբատ՝ որ է Չաթիպամ. որոյ  
 հարկն է քսան և հինգ լաքս ռուփի. որոց ՚ի  
 միասին առեալ հարկն է այժմ առաւել քան  
 զքրօք մի ռուփեաց՝ զայս ամենայն տաց նմա  
 հանդերձ ծախիւքն՝ որ լինիցի ՚ի դրունս իշխա-  
 նաց նոցա,» Յայնժամ պատասխանեաց նմա  
 Գօրգին խանն թէ՛ «բարւոք, է ես անձամբ  
 անձին երթայց ՚ի Կալկաթա և ազաչեցից զեղ-  
 բայր իմ, և որպէս որ կարևոր լիցի ՚ի մէնջ, կա-  
 տարեսցուք զփափակ սրտի քոյ Աստուծով,»

Յետ քանի աւուրց գնաց Պորդին խանն ՚ի  
 Կալիաթա և պատմեաց զամենայն եղբօր իւրում:

Յետ որոյ գնացեալ Ալայ Պետրոսին առ  
 քալաքապետն՝ որոյ անուն էր Ալէնցէտէր՝ և  
 յայտնեաց նմա, ցուցանելով և զճանապարհս  
 քաղում շահաւետութեան ազգին Ինկլիզաց,  
 որոյ հաւանեալ մեծամեծաց նոցա, ուրախա-  
 ցան յոյժ և սրտասխանեցին՝ թէ բարևք է,  
 եթէ գոյ նախ առ մեզ Կասուճալի խան, առ  
 յերգնուլ և հաստատել ընդ մեզ դաշինս,  
 թարց գիտելոյ Չաֆարալի խանին: Յայն-  
 ժամ դարձաւ ՚ի տուն իւր Ալայ Պետրոսն և  
 յղեաց զեղբայր իւր ՚ի Մախսուտաբատ, որոյ  
 հասեալ պատմեաց Կասուճալի խանին: Ապա  
 նա յետ քանի մի աւուրց առեալ զհրաման  
 յաներէ իւրմէ՝ պատճառաւ զբօսանաց ել ՚ի  
 Մախսուտաբատայ մեծաւ պատրաստութեամբ  
 և ընծայիւք՝ և եկն ՚ի Կալիաթա, և Պետրոս  
 Ալայ կատարեաց զամենայն զխնդիր նորա՝ որ-  
 պէս պատմեցաքն:

Յետ աւարտման դաշնագրութեանցն Կա-  
 սուճալիխանն ետ զամենայն զգործս իւր ՚ի  
 ձեռս Ալայ Պետրոսին և կարգեաց զնա փոխա-  
 նորդ ինքեան, և ընկալեալ զսակաւ ինչ հրա-  
 ման ՚ի վերայ ազգաց Ինկլիզաց եղելոցն ՚ի Մա

խսուտաբատ՝ ինքն հանդերձ Ազայ Գրի-  
դորովն և քանի մի մեծամեծօք գնաց ՚ի Մախ-  
սուտաբատ, բայց ՚ի հասանել նորա անդր՝ այլ  
ոչ ևս գնաց ՚ի տեսութիւն աներոջն, միայն մե-  
ծամեծացն Ինկիլիզաց եկեալ առ Չափարալի  
խան, ասէն, «Թէ այսուհետ ոչ գոյ քեզ հրա-  
ման մնալոյ աստ, այլ եկ բնակեաց հանդէպ  
մեզ ՚ի Ալկաթա, քանդի և հիւանդ իսկ ևս .  
և մեք արասցուք քեզ դեզ ՚ի ձեռն ճարտար  
և քաջ բժշկաց մերոց, և նստցի յաթոռ վասն  
քոյ Ասուճալի խանն, որ է փեսայ և իբր  
որդի քոյ :»

Իբրև լուազոյս Չափարալի խան՝ տըխ-  
րեցաւ յոյժ, և ահամայ կամօք յանձն էառ  
գնալ ՚ի Ալկաթա, զոր թէպէտև մեծամեծքն  
՚ի զօրաց իւրոց չկամէին թողուլ, բայց Աս-  
սուճալիխան առաքեալ ՚ի ծածուկ զովանս ՚ի  
հաւատարմաց իւրոց՝ ծանոյց նոցա՝ թէ ես  
հաճեցուցից զձեզ, և զվարձս ծառայութեանց  
ձերոց տաց, այսուհետև ինձ ծառայեցէք : Սո-  
վին թոյլ ետուն նմա գնալ :

Յամի Տեանն 1760 Յուլիոսի 20, յաւուր  
հինգշաբաթու նստաւ Ասսուճալիխան յա-  
թոռ աշխարհապետութեան, և ժողովեաց ըզ-  
բազում զօրս, և հանդերձ զօրօքն Բրիտանա-

ցւոց՝ գնաց ՚ի սուբա Բհար վասն օգնականու-  
 թեան . քանզի դեռ անդ էր թագաւորացն Ալի-  
 գուհարայ և պատերազմէր ընդ ամրոցին : Եւ  
 յայնմ ժամանակի եղեալ ինքնին թագաւոր ,  
 և կոչեցաւ Շահալէմ . որպէս և պատմեցի ՚ի  
 տեղւոջն , բայց երկու սուբէքն , այսինքն՝  
 Բանկալա և Բհար , դեռ զանուն նորա ոչ դրոշ-  
 մէին ՚ի վերայ դրամոց , որպէս և կանոն էր :

Յորժամ Աստուծայի խանն հաս անդր՝ արար  
 խաղաղութիւն ընդ Շահալէմ թագաւորին ,  
 գնաց ՚ի սպաս նորա , տալով նմա և զբազում  
 դանձս . որով և ընկալաւ ՚ի նմանէ հրաման՝  
 լինիլ ՚ի կողմանէ նորա աշխարհապետ երկուց  
 սուբայիցն , նա և ընկալաւ ՚ի թագաւորէն  
 վասն Գրիգոր Աղային զմեծութեան պատիւ՝  
 որ Փանջ հաղարի Մանսուբ ասեն , և այնու-  
 յետ կոչեցաւ Գօրղին Խան : Եւ վասն Աղայ  
 Պետրոսին ընկալաւ զպատիւ զգերապանձ իշ-  
 խանութեան Ասպետութեան , զոր փորագրեալ  
 ՚ի մեծագին մտտանուջ , հանդերձ եօթն խան-  
 օք լիովք պարզեօք ըստ աստիճանի իւրոց  
 արժանաւորութեան , որպէս և կանոն էր Հնդ-  
 կաց թագաւորաց , հրամայեաց առաքել ՚ի Ալ-  
 կաթա . և գրեալ Աղայ Պետրոսին հրովար-  
 տակ շքեղական փառօք պայծառացոյց և հըս-

չակեաց զանուն նորա ընդ ամենայն տեղիս :  
**Ա**դա **Ա**ստուծալիխանն ետ հրաման զանուն **Ա**ր-  
 քայի 'ի դրամս դրոշմել :

Յետ այնորիկ **Ա**լիգուհարն չու արար զնալ  
 'ի **Շ**ահնաբաա , զի նսացի յաթու թագա-  
 ւորութեան իւրոյ , և հասեալ յերկիրն **Է**լա-  
 բաղ , չի շնեաց զնալ անդր . քանզի և 'ի տեղն  
 էր պատերազմ՝ սաստիկ յոյժ : **Օ** և **Ա**հմադ  
 շահ **Ա**լդալին կրկին եկեալ էր անդր յերկրէն  
 'ի անդահարայ՝ առ 'ի պատերազմել ընդ ազդին  
**Մ**արաթացոց . որք յոյժ զօրացեալք էին , և  
 տիրապետեալք զբազումս 'ի քաղաքաց շնդ-  
 կաց , որոց սպարապետի անուն էր **Բ**ալու :

Յորժամ՝ եկն **Ա**հմատ շահ **Ա**լդալին և պա-  
 տերազմեցաւ 'ի դաշին **Ա**նալայ , մնռան բա-  
 զումք 'ի զօրաց մարաթացոց , առաւել քան  
 զմի հարիւր հազար անձինք . և ձերբակալ  
 եղին դերիք իբրև քառասուն հազարք , և մնու-  
 ցեալքն փախուցեալ զնացին 'ի **Ս**տարադար՝  
 յերկիրն ի բեանց , քանզի զօրք **Մ**արաթա-  
 ցոց էին երկու հարիւր յիսուն հազարք , և  
 զօրք **Ա**հմատ շահին էին ամենեքեան մի հա-  
 րիւր և վաթսուն հազարք . որում **Ա**մենակա-  
 րողն **Ա**ստուած ետ զյաղթութիւնն :

**Բ**այց զխոացիւր , զի յաշխարհին 'ի քաղաքայ

բազում ազգք Մտրաթացւոց գոն : որոց երկիրք են Ստարագար և այլ անդիք , որք ունին զյատուկ յատուկ իշխանութիւնս : Եւ սոցա գլխաւորք գոն երկուք՝ որք ունին զբազում զօրս բաժանեալս ՚ի միջի իւրեանց : Առաջինն է՝ Նանաջի՝ որ բնակի յաշխարհին Խանդէս՝ Բերամփուռ՝ ՚ի կողմն Հիւսիս . մասն ինչ՝ յաշխարհին Բիջափուռ , և մասն ինչ՝ յաշխարհին Բափանբրար Ֆթէփուռ . որք ՚ի մէջ այս երեք աշխարհացս բնակեալ են :

Իսկ բնական քաղաք նոցա է՝ Բերամփուռ՝ որ կոչի Ստարագար , քայց այժմ ՚ի նորոյ շինեցաւ ՚ի Ստարագարայ երեսուն քօս Հեռաւորութեամբ՝ ՚ի կողմն Հարաւային ՚ի գաւառին Մօթէ՝ քաղաք մեծ՝ որ կոչին Պօնա : Սոյն այս Նանաջիս ունի զսահման իւր ՚ի կողմն Հնդ կաստանայ , և յիշեալ Բափուռն՝ որպէս վերն պատմեցի , եկեալ էր ՚ի կողմանէ Նանաջեայ : Իսկ անուն երկրորդին է՝ Սոքօղօղի գօսլէն , որ ունի զքաղաքն Նագփուռ : Սա ունի զսահմանս աշխարհացն՝ Հէյտարապատայ , Արկաթայ և Բանկալայ , որք ոչ կազոպտեն զմիմեանս , և ոչ ելանեն մին ՚ի վերայ միւսոյ տէրութեան և վիճակի . այլ գործ սոցա է ժողովել զչօրս և գնալ ՚ի վերայ այ-

լոց տէրութեանց և խնդրել զհարկս աշխարհաց . որք եթէ ոչ տայցեն սոցա զքառորդ մասն 'ի հարկաց , յայնժամ աւերեն զբազաքըն զայն՝ կողոպտելով և հրդեհ տալով : Սորքա յառաջագոյն ոչ էին , այլ յետ նահանջելոյ թագաւորութեան Հնդկաց՝ 'ի նորոյ զօրացան և եղին ազգք մեծ , և ունին զզօրս բազումըս , որք և սիրով և միաբանութեամբ լինելով ընդ միմեանս մշտապէս՝ օր աւուր բազմանան յոյժ :

Յետ յաղթելոյ Ահմատ շահին սալգալոյ զօրացն Սարաթացոյ՝ իբրև հաես թէ ոչ զայր Շահալէմ զի նատուցանիցէ զնա յաթոռ թագաւորութեան , քանզի փախուցեալ էր նա 'ի ձեռանէ Պաղլի խան վէզրին , կայր յիշխանութեան Շուջալգօլայ . և բնակէր յԱլաբաղ քաղաքի . և 'ի ժամուն փախուցեալ էր և Պաղլի խան Սէզեր յԱկպարապատ , վանս որոյ անճարացեալ նորա եմուտ 'ի բանան յորում էին բազումք 'ի թագաւորազանց բանտարկեալք . և առեալ 'ի նոցանէ զմի ոմն՝ որ էր որդի յիշեալ Ալիգուհար թագաւորին և անուանէր Սամաբախշ Սահանգրշահ՝ կացոյց զնա թագաւոր և նստոյց 'ի վերայ գահի : Ապա ինքն չուարարեալ գնաց յերկիր իւր :

Բայց անուն Տ՛հանգար Շահայ ո՛չ դրոշ-  
 ցաւ ՚ի վերայ դրամի , քանզի սա երեսայ էր  
 հասակաւ և բեռի նորա կառավարէր զաթո-  
 սըն , որում ո՛չ հնազանդէին ժողովուրդքն :  
 Տեսեալ զայս մօր մանկանն ` որ էր թագուհ-  
 ւն Ալիգուհարայ , ծանոյց վաղվաղակի առն  
 իւրում Ալիգուհարայ՝ որ դեռ կայր առ Շու-  
 ջավդօվլայի , քանզի ամենայն իշխանք և սա-  
 ստամբեայք էին , և ո՛չ տային զհարկս աշ-  
 խարհայն : Այլ զսա լսի թագաւոր ընդունէ-  
 ին և զանունն դրոշմէին ՚ի վերայ դրամոց : Բայց  
 միայն Նարաբն Շուջավդօվայ օգնէր նմա  
 միշտ , քանզի ՚ի նմանէ ընկալեալ էր զպաշտօն  
 վեզրու թեան : —

Թողեալ զսոսա դառնամք այժմ առ Սաս-  
 ումայի խանն : Սա յետ հաշտութեան ընդ  
 Ալիգուհարայ , շրջեցաւ ընդ ամենայն կողմն  
 սուբային Բհարայ , և զամենեսին հնազանդ  
 արար ՚ի ներքոյ ձեռաց իւրոց , մինչ հա-  
 սեալ ՚ի սարքարն ութներրորդ՝ որ անուանէր  
 Ֆարղաբաա՝ զոր ասեն Սուհէր՝ որ է ՚ի  
 վերայ Գնդայ դետոյն ՚ի մէջ հարաւ և արե-  
 ել , հեռի ՚ի Փաթանայ քառասուն քօս , ար-  
 ար անդ զընակութիւն , և եդ զաթոս աշխար-  
 հասլետութեան իւրոյ : Բանզի ՚ի վաղուց ՚ի

հռասարչախից անտի հետէ շինեալ կայր անգր  
 ամրոց մի մեծ և պիրիկ, ունելով և զարմանալի  
 ապարանս և ինքնաբուխ աղբիւր մի ջերմ ջրոյ  
 որով ասէին լինիլ բազում ցաւոց բժշկութիւն  
 լուանալով կամ ըմպելով, Աւորք ինչ և քան-  
 դեալք էին, կրկին հրամանաւ Աստուծալի խա-  
 նին նորոգեցան, պայծառացան, և լցաւ երկիրն  
 ՚ի մէջ սակաւ ժամանակի բազում բնակչօք,  
 և ինքն Աստուծալի խան միշտ նստաւ ՚ի քա-  
 դաքին Սաւեկերայ, և այլ ոչ գնաց ՚ի Մախ-  
 սուտաբաա կամ Վաքա, և զամենայն կալու-  
 ածս տէրութեան իւրոյ էա ՚ի ձեռս Վարդին  
 խանին, որնա սկսաւ ժողովել զօրս բազումս,  
 և կարգեաց յազգէս Հայոց և այլոց՝ զհար-  
 իւրապետս և զհազարապետս առաւել քան  
 զհարիւր անձինս՝ ըստ կանոնի Քրիստոնէից  
 եւրոպացւոց, և ինքնին հնարեաց, թափեաց  
 և պատրաստեաց զամենայն հրագէնս պատերազ-  
 մաց՝ աւելիօք և ոչ պակաս քան զերոսպացւոցն,  
 և էին զօրք նորա յոյժ, թէ հեծեալք և թէ  
 հեռեակք, օրք Վարդիք անուանին, դաս դաս  
 ամենեցուն նոցա տալով սուսերս, բնեալս,  
 հրացանս և հրացանիկս չախմախեայս : —

ԱՆՈՒԱՆԻ ԶՕՐԱԳԼԻԽԱՑՆ ԵՆ ԱՅՍՈՒԲԻԿ :

Ա : ՍՄԻՐՈՒ՝ ազգաւ Ալաման . որ եկեալ 'ի Ալեկենայ քաղաքէ 'ի Քաշմիր՝ ծառայէր միում 'ի վաճառականայ Հայոց . և անտի եկեալ 'ի Փաթանա՝ ազգն Հայոց ողորմելով նմա առաքեցին զնա առ Գօրղին խան . զոր առ և արար հաղարապետ :

Բ : ՄԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ՝ ՆՐԸ ՋՆԱՊԱՅԵԵԻ :

Գ : ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐ՝ նՐԸ ՋՆԱՊԱՅԵԻ :

Դ : ԳՐԻԳՈՐ ՆԱՀԱԳԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ՝ Չարսուեցի ՆՐԸ ՋՆԱՊԱՅ :

Ե : ՊԵՏՐՈՍ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ՝ Հայաստանցի Աղճնիկ (Առնիկ) 'ի գեղջէն Էնեասու :

Զ : ՂԱԶԱՐ ՅԱԿՈԲԵԱՆ՝ յերկրէն Ատրպատականի 'ի գաւառէն Մարաղոյ և 'ի գեղջէն Պօրայոս :

Է : ՄԱՐՏԻՐՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ՝ 'ի գաւառէն Մարաղու :

Ը : ՍՈՒՔԻԱՍ ԱՒԵՏԻՍԵԱՆ՝ յաշխարհէն Ատրպատականի և 'ի քաղաքէն Գալսիժոյ :

Թ : ՅՈՎՀԱՆՆԷՍ ՂԱԶԱՐԵԹԵԱՆ՝ 'ի Գաւրիժոյ . զորս հանդերձ զնոք զօրաց իւրեանց պահէր միշտ պատրաստի առ ինքն :

Ի Հազարապետացս յայսցանէ առաքեաց  
Պօրգին խան զչորեսինս ՚ի չորեսին կողմունս  
աւերութեան իւրոյ :

Նախ՝ զՀազարապետն Պրիգոր Այվազեան  
առաքեաց զօրօք իւրովք ՚ի կողմն Հիւսիսային  
ընդդէմ ազգին Հնդկաց . որ նստաւ ՚ի սար-  
քարն Ռօտաս գաւառի՝ ՚ի քաղաքն Քաքսար,  
զոր և կառավարէր և զամն նայն զանդինն՝ որք  
էին ՚ի Ռօտաս գաւառի . առնելով ՚ի նոցանէ  
զամենայն զհարկ աշխարհին : Սա արար բազում  
քաջութիւնս յերկրիս յայսմիկ . քանզի ամ-  
բոցն Ռօտասայ ունէր զբազում վայրս անտա-  
ռայինս, զորոց Ռաջայս ոչ ոք յաշխարհապե-  
տացն առաջնոց կարացեալ էր Հնազանդեցու-  
ցանել . զորս Հազարապետս այս Հնազանդս  
արար ինքեան , առաքելով զչորս Հարիւր զի-  
նուորս երկօքումք քենեկօք . ընդ հարիւրապե-  
տան Յակորաւ Պրիգորեան , որ պատերազ-  
մեցաւ ընդ Ռաջայ Պաւրբատսինկին որ ու-  
նէր զերկօտասան Հազար զօրս , որում յաղ-  
թեաց՝ Յակոր Պրիգորեան և Հնազանդ ին-  
քեան արարեալ՝ դաշինս եդ և էառ ՚ի նմանէ  
զհարկն : —

Երկրորդ՝ Հազարապետն Յարութի Մար-  
գարեան իւրովք զնյովք առաքեաց ՚ի կողմն

Հարաւոյ ընդդէմ զօրացն Քրիտանացւոց , որ  
գնացեալ նստաւ 'ի քաղաքն Մուրատաբատ' և  
կառավարութեամբ և պահպանութեամբ պատ-  
րաստի կայր միշտ : —

Երրորդ՝ զհազարապետն Մարգար Յով-  
հաննիսեան և զՎազար Յակոբեան՝ առաքե-  
աց հանդերձ գնդովք իւրեանց 'ի կողմանս ար-  
ևմոսից՝ առ 'ի հնազանդ առնել ինքեանց՝ զա-  
մենայն լեռնային և անտառային գաւառսն՝  
որք էին ապստամբք 'ի վաղնջուց ժամանակաց ,  
վասն դժուարոյաղթ և սիրի տեղեացն : Բայց  
հազարապետք մեր գնացեալ պատերազմեցան  
մեծաւ քաջութեամբ ընդ Ռամգարայ ընդ  
Չոթայ 'Սազփուռայ , և ընդ շրջակայս նոցին ,  
զորս հնազանդս ինքեանց արարեալ՝ եդին անդ  
զկառավարիչս , և առեալ զհարկն ապա դար-  
ձան յետս և եկին 'ի Մուռնիէր : —

Չորրորդ՝ զհազարապետն Յովհաննէս 'Սա-  
զարէթեան՝ առաքեաց 'ի կողմն արեւելեան ընդ  
ձանապահ անտառային և լեռնային 'ի վերայ  
երկրին Փոքուն Տիբէթայ՝ որ կոչն 'Սէպալ ,  
որ 'ի թագաւորացն Հնդկաց առաջնոց ոչ  
ոք կարաց հնազանդեցուցանել վասն չունենա-  
լոյ զուղիղ ձանապահս : Ուր գնացեալ Հա-  
զարապետիս իւրովք գնդովք , կալաւ զբազում

տեղիս նոցա , մինչև երեսուն քօս մնալ տի-  
բիլոյ բաղաքին Մէպալայ : Բայց աստի այլ ոչ  
կարացաւ յառաջանալ , քանզի դժուարագը-  
նաց էր ճանապարհն յոյժ . մինչև ոչ լինել  
շարժել քենեկացն և արշաւել զօրացն . զի գոյր  
անդ լեառն մի մեծ և երեքին կողմունք նորա  
ունէին զերիս ամրոցս , և սակս ասպառած իցն  
ոչ գոյր հնար ելանելոյ ՚ի վերայ լերանն , որոյ  
վասն անճարացեալ անդ ՚ի ստորոտէ լերինն ե-  
տուն պատերազմ ընդ նոսա . ուր մեռան ՚ի զօրաց  
Հաղարասեալիս արք իբրև վեց հարիւրք ,  
և ՚ի պակասել զօրաց իւրոց չկարողացաւ առ-  
նել ինչ : —

Յորժամ լուաւ զայս Սպարապետն Պօր-  
գին խան բարկացաւ յոյժ , և առաքեաց կու-  
չեաց զնա յետս վաղվաղակի : Եւ ասլա ինքն  
առեալ զզօրս բազումս գնաց պատերազմել  
ընդ նոսա . մինչ հասեալ անդր ետես ասլա  
աչօք իւրովք թէ անհնարին էր առնուլ  
զքաղաքն Մէպալ . քանզի չգտանէր անդ  
ճանապարհ և տեղի յարմար պատերազմի :  
Եւ սկսան զօրք նորանեղիլ վասն ուտելեաց և  
ըմպելեաց . սակս ոչ գտանելոյ անդ զկերակուր  
և զջուր ըմպելոյ : Ասլա ընդունայն յետս դար-  
ձեալ եկն ՚ի Մունկեր : Հեռաւորու թիւն

Մունկէրայ մինչ ՚ի Վեպալ՝ է մի հարիւր և քսան քօս ՚ի կողմն արևելից ։ —

Հինգերորդ՝ հազարապետն Պետրոս Աստուածատրեան՝ իւրովք գնդովք պահապան էր Վասուժալի խանին , քանզի թարց հրամանի Պօրգին խանին ոչ ոք իշխէր արձակօրէն գնալ առ Վասուժալի խան , զի ամենայն հրամանատրութիւնս տուեալ էր Վասուժալի խանն ՚ի ձեռս Պօրգին խանին , որ զամենայն զբան նորա տեսանէր ըստ կանոնադրութեանց և սահմանադրութեանց կամօց իւրոց անպակաս . և օր աւուր պայծառանայր անուն նորա ընդ ամենայն տեղիս , առանց ակնկալութեան ընչից ուրուք , սրով Վասուժալի խանն կայր միշտ ՚ի տան իւրում , և ուրախ լինէր ։ —

Բայց ազդն Հայոց ճոխանալով , քաջանալով և ամենեցուն բարութիւնս առնելով՝ ՚ի շինութիւն աշխարհին լինէին զամս երեք , մինչև ոչ ոք ՚ի շարաց կամ ՚ի թշնամեաց անտի գլուխ ՚ի վեր ամբառնալ իշխէր . քանզի լսելով զանուն ազդին Հայոց միայն՝ բիրք ՚ի թշնամեացն սարսեալք դողային և անխօս լեալք հնազանդութիւն խոստովանէին . —

Տեսեալ զայս արիութիւն , քաղաքավարութիւն և աշխարհաշինութիւնս Հայոց՝ մեծա-

միձք յայլազգեայ քրիստոնէիցն՝ զարմանային .  
 և 'ի սրտէ նախանձակիր լինէին յոյժ : Քան-  
 զի վասն առաւել աշխարհաշինութեան Պօր-  
 դին խան և Վասու մալի խանն ետուն հրաման .  
 որով բարձան ամենայն հարկք վաճառացն ,  
 այսինքն՝ Պրմիթ կամ՝ Սուրբն՝ թէ 'ի ջրոյ և  
 թէ 'ի ցամաքային ճանապարհէ եկող վաճա-  
 ռացն 'ի տէրութիւն իւրեանց . ասելով՝ թէ ոչք  
 ունէք Մարտապալոց և իցեն , թող բառանայ-  
 ցեն զայս շնորհս՝ և եկեալ գնեսցեն և վաճա-  
 ռեսցեն 'ի քաղաքիս մերում՝ ձրիապէս , զի շի-  
 նութիւն և առատութիւն լիցի յաշխարհիս :

Տեսեալ զայս ազգացն Լնկիկոց , Փռանսի-  
 զոց , Հօլանդացոց , Փրթբիշոց , Գինա-  
 մարբաց , և այլոց ազգացն առնէին զմիձ վա-  
 ճառականութիւնս յաշխարհի նոցա : Բայց  
 յետ ժամանակի ինչ , դարձեալ ինքեանք 'ի  
 նախանձ շարժեալ գնացին առ Վասու մալի  
 խան և ասեն՝ թէ ընդէր զայսքան շահաւտու-  
 թիւնս թողուս ելանել 'ի ձեռաց քոց . և ոչ բա-  
 տանաս զհարկ վաճառացն : Պատասխանի ետ  
 նոցա՝ թէ վասն շինութեան և հարստութեան  
 աշխարհի իմում արարի զոյդ . և այժմ չէ ինձ  
 իրաւունս դառնալ յետս յիմոց սահմանա-  
 դրութեանց . մանաւանդ զի՝ և 'ի ժամանակի

գաշնադրու թեան մե բուժմ' այսպէս վերջաւորե-  
ցաւ՝ « թէ զերկիրս իմ՝ ըստ հաճոյից իմոց կա-  
ռավարեցից . » և արդ իմ է երկիրս՝ և որպէս  
կամիմ' այնպէս կառավարեմ' : Բայց ե այս ինչ  
ուսմանեալ ունիմ' ՚ի գաշնադրութեան իմում  
ինդ ձեզ , զի ազգն ձեր որքան որ վաճառս մու-  
ծանին ՚ի տէրութիւն իմ' , տայցեն ինձ զհար-  
կըս . միայն թէ Կումպանին ս'չ սայ , Եւ որով-  
հետեւ դուք սկսեալ էիք առնուլ զհարկս վա-  
ճառաց , որով բազումք ՚ի սլաածառս վնասու-  
ս'չ գային յերկրի իմում վաճառականութիւն  
առնել , այսու աղաքաւ ես բարձի զամենայն  
հարկն , զի եկեոցեն ՚ի գնել և ՚ի վաճառել .  
որով լիցի շինու թիւն յաշխարհի իմում , Եւ  
արդ՝ որովհետեւ կամք ձեր այլպէս է , ուրիմն  
հաստատուի կայէք ՚ի վերայ զաշխոյն ձերոց ,  
և առք ինձ զհարկս վաճառաց ձերոց՝ որպէս  
և կանոն է :

Չհաճեցեալ բանիցս ազգացն Կնկիկոաց՝  
գրեցին առ Կայիաթա . և նոցա խորհուրդ  
արարեալ անդ , ել կառավարող Կայիաթայ  
Մասր Ալէնցէաէն հանդերձ Բղայ Պերսո-  
սաւ և քանի մի մեծամեծօք՝ և գնաց ՚ի Մուե-  
կէր , զորս ընկալեալ Կասու մայի խան՝ մեծա-  
բեաց բազում քաղաքավարութեամբ . և արար

խրախուժիւն մեծ . աալով նոցա զսլարգե ս  
բազումս . ուր և նորոգեաց զանբակտիի դա-  
շինս զնախկինս : Բայց Ինկլիզաց տեսեալ ըզ-  
քաղաքավարութիւնս և զքաջութիւն Լազգիս  
Հայոց , մանաւանդ զսահմանադրութիւն և  
զզինուորութիւնս երկրին՝ որ ՚ի միջոյ փոքր ժա-  
մանակի՝ քան զինքեանս առաւել յառաջագէմ  
ցուցեալ էին , սքանչանային և նախանձա-  
բեկ սրտիւ ուրախ լինէին , և ապա մնացեալ  
անդ զաւուրս քսան և եօթն դարձան յետս ՚ի  
Ասիակաթա :

Իսկ յորժամ վաճառականք Ինկլիզաց լու-  
ան զվերանորոգութենէ դաշանցն , ոչ ընդու-  
նեցին զարարս Սար Աէնցէտէրայ , և միա-  
ձայնեալք ասեմ , թէ մեք կալաք զաշխարհս  
զայս , և զնամք կացուցաք իշխան . վասնորոյ  
և ոչ տամք զհարկս վաճառաց մերոց . և եթէ  
ոչ հաճեսցի ընդ այս՝ կրկին պարտաստեսցուք  
՚ի պատերազմ : Եւ խորհուրդս ՚ի մէջ առեալ ,  
բնարեցին զճեր ոմն յազգէ իւրեանց՝ որ է  
Աօնսէլ , այբ խեյացի , սրոյ անուն էր Սար  
Լչմինէթ . և կրկին սասքեցին զնա ՚ի Սուն-  
կէր առ Ասսումալիխան : ասել նմա թէ՝ « զոր  
ինչ դաշնադրութիւնս արար Սար Աէնց-  
էտէր՝ մեզ ոչ է ընդունելի . և եթէ կամիս

ընդ մեզ բարեկամ լինիլ, ուրեմն հրամայեալ  
զի բարձցին հարկք վաճառաց մե ըոց : ”

Եւ յորժամ գնաց Ափսէյն 'ի Մ'ուռնկէր և  
խօսեցաւ զքանս զայս բազում անգամ, ոչ հա-  
ճեցաւ Վասու մալի խանն զիջանել և կտտարել  
զխնդիք նոցա, պատասխանելով՝ թէ այս եր-  
կրորդ անգամ գաշնադրու թեան է՝ զորս ե-  
ղիք ընդ իս, և դարձեալ ոչ ընդունիք : Ես  
արդէն ամենայն վաճառաց հարկն բարձեալ  
էի և դուք ոչ ընդունեցիք, արդ՝ եթէ դուք  
ոչ կամիք տալ զհարկ, ուրեմն և դուք մի առ-  
նուցուք յայլոց, արդ ընդունեցէք 'ի սոցանէ  
զոր և հաճոյ թուի ձեզ :

Եւ ամենայն աւուր զոր ինչ խօսակցութիւն  
լինէր գրէր Ափսէյն 'ի Ալիկաթա, և առա-  
քեալ յայտներ զամենայնն ազգացն Ինկիլիզաց .  
բայց 'ի վերջոյ անտեալ՝ թէ ոչ լինի միաբանու-  
թիւն՝ անձարացեալ գարձաւ յետս 'ի Ալի-  
կաթա, խոստանալով, թէ երթայց ես և ջա-  
նացայց առնել զխաղաղութիւն : Մ'ինչ չե ե-  
լեալ 'ի Մ'ուռնկերայ 'ի ճանապարհ, և դեռ չե  
հասեալ 'ի Մախսու տաբատ՝ ազգքն Ինկիլի-  
զոց յուան 'ի Ալիկաթա՝ թէ յետս գայ Ափս-  
սէլ իւրեանց, և ոչ է կատարեալ զխնդիր իւ-  
րեանց : Յայնժամ գաղտ գրեցին յաշխարհն

Բնար՝ որ է Փաթանա առ սոգս ի բեանց՝ որք  
 էին անդր վասն կառավարութեան : և էին դար-  
 դեք զինուորք իբրև չորս հազարք : և ճեր-  
 մակք սոյլեաաք վեց հարիւրք : որոց անուն զօ-  
 րապետին էր Սասր Լյիւն . « թէ 'ի հասանել  
 գրոյս : առէք զզօրսդ և յանկարծակի ելէք  
 'ի վերայ ամրոցին Փաթանայ և կախուրւք : »  
 Քանզի ամրոցն այն ոչ էր յոյժ հեռի 'ի անդ-  
 ւսջէն յորում կային Ինգլիզքն : և էր 'ի  
 ձեռս Ասուամայի խանին : Եւ զբեանցն բա-  
 զում օրինակս արարեալ վասն պատահմանց ,  
 որ եթէ մին 'ի ճանապարհի ըմբռնեցի , միւսն  
 հասցէ 'նոցա՝ առաքեցին : Եւ յորժամ գնայր  
 'ի Մուսկերայ Լյմինէթ Աօնսէին դէպ 'ի Այալ-  
 կաթա՝ պահապանք Վօրգին խանին՝ որք  
 կային 'ի վերայ ճանապարհաց՝ առ 'ի որոնել  
 զերթն եկողան , զաին ընդ նմա զբազում գը-  
 բանս : բայց ոչ կարացին խմանալ զզօրութիւնս  
 'նոցա : բանզի էին ամենայն զբեալքն թո՛ւ արա-  
 նու թեամբ զբեալ : ըստ կանոնի պատերազմաց  
 'նոցա : Եւ յորժամ ըմբռնեցան զբեանքն , ա-  
 պա յղեաց Վօրգին խան զսուրհանդակ մի հը-  
 րովարտակառ 'ի քաղաքն Մախոուտաբաա՝ առ  
 քաղաքապետն Մահամմատ խան և ծանոյց  
 նմա գուշանալ ճանապարհացն , և 'ի գալ Լյ-

մինեթ Աօնսէլին ըմբռնել զնա և արգելուլ զի  
մի երթիցէ 'ի Կալկաթա :

Իսկ Հաղարապիան Յարութիւն Մարգար  
քանի մի առուրբք յառաջ քան զայս՝ ըմբռ-  
նեալ զՊլակեթ Հանդերձ եղբարք նորա՝ սա-  
նէր Մունկէր , զի բնակեացեն անդ . երկնչե-  
լով՝ թէ մի գուցէ և սոքա միտքանեացին բնդ-  
ազգին Ինկիղաց : Բանդի Պլակեթս այս էր  
մեծատուն , փար յամ և գանձիւք անուանի  
յոյժ . որ կարող էր փոփոխել զաշխարհա-  
պետան , քանզի և Ալավերդի խանն սորա կա-  
մօք և դրամովք եկն , և սպանեալ զՇաֆրազ  
խան՝ տիրեաց երկրի նորա , Սորա և խորհր-  
դեամբն սպանաւ Շիրազգօվյա , որպէս յա-  
ռաջագոյն պատմեցաք : Այսն զի սա 'ի ձեռն  
մեծի գանձուց իւրոց ունէր բնդ ամենայն անդիս  
զվճառատունս և զլոմայափոխս , և սապեալ  
էր 'ի թագաւորացն Հնդկաց՝ անունդ Պլակ-  
սէթ՝ որ 'ի ինչու Պարսից թարգմանի , Ամիր  
մէլիք ուլ թուղար : Այն , թէպէտև յերկիրս  
Հնդկաց՝ գոն այսպիսի բազու մ՛վաճառականք  
լոմայափոխք , ( սառաֆք , ) բայց Համեմատ  
Պլակեթայ ոչ ոք եղև անուանի Հարստու-  
թեամբ , զի սուէին թէ ունէր նա զզուտ դրամ  
առաւել քան զտասն և չինգ կամ քսան բրօր

առուփիս՝ թողեալ գ. քարեղէնս : որ և ունէր մշտապէս սլատրաստի 'ի դրան իւրում զգօրս իբրև չորս հազար, և վասն այսորիկ սիրէին զնա յոյժ ազգն ինկլիզաց :

Իսկ յորժամ լուան Ինկլիզք՝ թէ ըմբռնեցաւ Չ. կսէթ, և տանելոց են զնա 'ի Մունկէր՝ վազվազակի գրեցին 'ի Մախսուտաբատ՝ առ ազգս իւրեանց՝ որք էին 'ի Ղասուժբազար, զի կայցեն զնոսա 'ի ձեռաց զօրացն Աստուժալի խանի : բայց որքան որ ջանացան ոչ եղև հնար : Բանզի քաջացն Հայոց ընդդէմ կացեալ մեծաւ արուժեամբ ոչ թողին զնոսա 'ի ձեռաց, այլ առեալ տարան զնոսա 'ի Մունկէր և թողին անդ ազատս : հրամայելով, զի մի իշխեսցին ելանել անտի : —

'Ի ժամանակիս յայսմիկ Լշմիսէթ կօնսէին էր 'ի Մունկէր և խօսէր վասն բառնայոյ հարկի վաճառացն իւրեանց՝ ընդ Աստուժալի խանին : որ և 'ի կողմն Չ. կսէթայ բերելով, խնդրէր զի թողցէ զնա գնալ յետս 'ի Մախսուտաբատ՝ 'ի տուն իւր :

Արում պատասխանեաց Աստուժալի խան՝ թէ ես աճի զդոսա աստ վասն վաճառականութեան ասաֆութի և շինութեան երկրիս, և ոչ թէ 'ի փակի ունեմ ես զդոսա կամ զգանձս դոցա :

Իսկ յորժամ դարձ արար անտի Լյմինէթ կօնսէլն և կամէր դնալ ՚ի Սախտուտաբատոյ յամբոցն Ինկլիզաց՝ որ ՚ի Ղասուժբազար, յայժամ զօրք Սէխտ Սահամադ խանին՝ որք էին անդր՝ արգելին զնա. այլ Լյմինէթ կօնսէլ շիամեցեալ ունկնդիր լինել նոցա՝ Հրամայեաց ծառայից իւրոց՝ որք էին ՚ի նաւակի, իւրում առանց ինչ փոյթ տանելոյ զայնցանէ՝ դնալ դէպ ուղիղ ընդ գետն ՚ի խոնարհ. Օայն տեսեալ զօրաց Սէխտ Սահամադ խանին՝ թէ ոչ լսին ինքեանց և ոչ խոնարհին գալ ՚ի ցամաք անդր՝ անճարացան և սկսան կրակել ՚ի վերայ նոցա զհրացանս՝ առ ՚ի տալ նոցա զերկիւզ. յորմէ զիպեալ բոլիկ մի ի սիրտ Լյմինէթ կօնսէլին, անկաւ և մնաւ առժամն. —

Եւ յորժամ ազգն Ինկլիզաց լուան դբանս զայս և ընկալան զհրաման ՚ի Ապիլաթա, ապա առ ժամ յն առեալ զզօրս իւրեանց մէջ գիշերի դնացեալ պաշարիցին զարե ելեան գուռն քաղաքին Փաթանայ, և պատերազմեցան ընդ Սէնդիզուլի խան քաղաքապետի տեղոյն, ժամն երկուս և կտարառեալ զամենայն զգրուես՝ մտին ՚ի ներքս և կալան զամբոցն. Տեսեալ զայս զօրաց Սէնդիզուլի խանին՝ փախեան ամենեքին. որք էին արք իբրև տասն հազարք :

Իսկ Պօրգին խան բմբռնեալ 'ի ճանապարհի զգրենի Ինկլիզաց , գերկուս 'ի հազարասիտաց իւրոց զՄարգար և զՎազար՝ տուեալ կրկին ի րաքան չիւրոց զՀինգ հարիւր հեծելազօրս և առաքեաց զնոսա 'ի սահսլանութիւն Փաթանայ , տալով նոցա սատուէր թէ՛ «ի թէ ազգն Ինկլիզաց սրատերազմեսցեն ընդ ձեզ , դուք և ս սրատերազմեցէք . իսկ եթէ ոչ՝ նրստարուք դուք անդ ի սողաղութեամբ : Յայնժամ երկու հազարասիտքն ելին զօրօք իւրեանց դէպ 'ի Փաթանա , և մինչ հեռի էին 'ի քաղաքէն քօսս իրբն վիշտասան , լուան՝ թէ ազգքն Ինկլիզաց կախալ ունին զամլացն , Յայնժամ քաջ զօրասիան Մարգար արեաբար հրաման եա զօրաց իւրոց , զի վաղվազակի և 'ի նմին իսկ առուր հատուցեն զինքեանս 'ի քաղաքն Փաթանա : Իսկ զօրքն Ինկլիզաց տեսեալ զայս՝ եկեալ կարան զդրունս արե ելից և սկսան սրատերազմիլ ընդ քաջացս Հայոց , բայց զօրացեալ քաջացն Հայոց՝ մահն 'ի քաղաք անդր : ( քանզի Փաթանա է երկիր մեծ առաւել քան զքսան քօս շրջապատեալ պարսպօք , և զսն անդ բազում բրգաձև տեղիք վտանքենեկոց շուրջ զամրոցաւն : ) ասա 'ի ձեռս առեալ քաջին Մարգարայ զսա ըն՝ մա-

չեսց 'ի զօրաց անտի Ինկիլիզաց՝ արս երիք  
 Հարիւր և եօթանասուն յԱյլ բուպացւոց՝ և ըզ-  
 Հազարս 'ի Վարդի զօրոց նոցա . ընդ որ ան-  
 ճարացեալ մնացելոցն սկսան փախչել և գնալ  
 ամբանալ յամբոցի իւրեանց՝ որ էր 'ի մէջ  
 հիւսիս և արեւմուտ :

Եւ այսպէս կրկին կալան զօրք Հայոց զքա-  
 ղաքն Փաթանայ , և ժողովեալ զմեռեալսն՝  
 թաղեցին 'ի գերեզմանի , և զվերաւորս թուով  
 յխուն՝ ետուն 'ի ձեռս բժշկաց աննել նոցա  
 սպեղանիս . և ապա գնացեալ սրատերազմեցան  
 'ի վերայ ամբոցին Քրիտանացւոց , ուր 'ի նմին  
 գիշերի դարձաւ փախուցեալն Մենկիզուլի  
 խան զօրօք իւրովք . այլ Հազարապետն Մար-  
 գար Հրամայեաց նմա շմրձենալ 'ի բանակ  
 իւր , այլ գնալ և պահպանել զքաղաք իւր  
 զՓաթանա , և ինքն զառուրս երկուս պատե-  
 րազմէք ընդ Ինկիլիզաց բամբովք և հրացանիք  
 մինչև յիս երորդ գիշերոյն ելեալ Հազարա-  
 պետն Մարգար իւրովք գնդովք և եկեալ  
 պաշարեաց զբնակութիւնսն՝ որք էին մերձ  
 ամբոցին Ինկիլիզաց . ուր և կային քանի մի վա-  
 ճառականք յազդէ նոցա . որոց զանդիսն հրք-  
 դեհ տարով հրամայեաց զօրաց իւրոց գնալ 'ի  
 վերայ ամբոցին , և հասեալ նոցա 'ի գուռն

արեմատեան, սկսան կոտորել զզբոսնսն, յորմէ  
 երկուցեալ զօրացն Ինկլիզաց, բացին զմիւս  
 դուռն՝ որ էր ՚ի վերայ գետոյն, անցին ՚ի միւս  
 կողմն. ուր թողեալ զնաւսն՝ ելին ՚ի ցամաք և  
 դէպ չիւսիս գնալին ՚ի կողմն տէրութեան  
 Շուջաղօվլային՝ որ հեռի էր ՚ի Փաթանայ  
 քառասուն և չիւղ բօս : —

Յայնժամ հազարատեան Մարգար կալաւ  
 զամբոցն, և մտեալ ՚ի ներքս էազամենայն  
 հարստութիւնն՝ որք էին անգր՝ թէ Ինկլիզաց  
 և թէ վաճառականաց նոցա հանդերձ կահիւք  
 սեղանոյ մեծամեծացն Ինկլիզաց : Քանզի ժամն  
 յերեկոյեան էր, և մեծամեծք նոցա բազմեալ  
 կային ՚ի վերայ սեղանոյ ընթերաց, որոց ոչ  
 գտեալ զժամանակ՝ թողեալ էին զսեղանս իւր-  
 եանց այնպէս, և ինքեանք փախուցեալք : —

Յորժամ լուաւ Սասումալի խան զոյսգու-  
 նակ բաջութիւնէ և զյաղթութեանէն Հայոց՝  
 առաքեաց Մարգարայ Հազարապետին՝ ՚ի  
 պարզե զփիլ մի՝ հանդերձ բազում ընծայիւք.  
 և յաւել և ստալ նմա զտիրոջսական անունդ  
 ՇԱՄՍԳԵՐԽԵՆ՝ որ է Մաղիստրոսական իշխա-  
 նութիւն. և զամենայն աւար յամբոցին Ինկլի-  
 զաց, զորոց ոչ առեալ գէթ զմի կնչ՝ բաշխեաց  
 զամենայն զօրաց իւրոց : Այս և ընկալեալէր չը-

բաման 'ի Աստուճալի խանէն , զի ըմբռնեացէ զփախուցեալ զօրսն Ինկլիզաց , որոց վասն գրեաց հազարապետն Մարգար 'ի սարքարն Հաջիփուռ՝ առ Ռաջա 'Ալնդրամ' Շօքրին՝ որ ունէր զօրս երկոտասան հազար , զի նա ըմբռնեսցէ զնոսա : Ըն որ գնացեալ նորա պատերազմեցաւ զաւուրս չորս , բայց ոչ ինչ կարաց առնել . քանզի պատերամն լով վախչէին 'ի բաց զօրքն Ինկլիզաց :

Ի յուեալ զայս Հազարապետին Գրիգորի Ընթացեան՝ որ կայր 'ի Բաքսար՝ վաղվաղակի առաքեաց զհարիւրապետս իւր՝ չորս հարիւր Գարդի զինուորօք և երկու քենեկօք՝ յայնկոյս գետոյն Գնգայ՝ վասն օգնականութեան 'Ալնդրամ' Շօքրուոյ , յորոց անուանք գնացողաց հարիւրապետացն Հայոց՝ են Մկրտիչ Սաքարիայ՝ նոր Սուգայեցի 'ի Չարսուկոչեցեալ թաղէն . Մէլքում Հաչտարխանեցի , և Սիկողայոս երևանցի նոր Չուղայոյ : Սաքա իւրաքանչիւր գնդօք իւրեանց անցեալ յայն կոյս գետոյն՝ պնդեցին զհետ Ինկլիզաց՝ և յետ երկուց աւուրց գտին զզօրս նոցա 'ի վերայ ձանապարհին . անդ օթեցան զգիշերն զոյն և 'ի լուսանալ առաւօտուն՝ ետուն պատերազմ ընդ նոսա ժամս չորս , մինչև 'ի նեղի անկեալ

գորացն Ինկլիզաց՝ ընկեցին զգէնս իւրեանց և  
խոնարհեցան :

Յայնժամ հարիւրապետքն այնոքիկ առեալ  
գամենայն զգէնս նացա : միայն զՎարդի զորս  
նոցա թողին ազատս : և կալեալ յԻնկլիզաց  
արս մի հարիւր և վաթսուն՝ հանդերձ քանի  
մի մեծամեծօք : տարան ի Քաբար առ Հա-  
ղարապիան իւրեանց : զորս ընկալեալ նորա պա-  
տուեաց և ետ ամենեցուն նոցա զգետտս ըստ ար-  
ժանեաց : և առաջեաց գամենեսին ի Մուշկէր՝  
առ Վօրգին խանն զորս առեալ ետ ի բանտի :

Եւ յորժամ առին զքաղաքն Փաթանայ ի  
ծեռաց Ինկլիզաց : յայնժամ հրովարտակե-  
հան Աստուճալի խան յամենայն տէրու թիւնս  
իւր : զի ուր և գտցեն ի տէրութեան իւրում  
յազգէն Ինկլիզաց : կալցեն հանդերձ ամենայն  
ընչիւք իւրեանց և բերցեն առ ինքն : զորոց կա-  
լեալ զորս գտին յամենայն տեղեաց : հանդերձ  
վաճառականօք նոցա : տարան առ Աստուճալի  
խան : և մնացին ի նոցանէ միայն ի Աալիա-  
թա : ի գաւառն Քարգվան և ի Չաթիզամ :  
քանզի յայտոսիկ կալմանս ոչ գոյին ի զօրաց  
Աստուճալի խանին : այլ ազգքն Ինկլիզաց  
միայն կառավարէին և առնէին զհարկն ըստ  
կանոնի դաշնագրութեան իւրեանց :

Յետ այսք ամենայնի՝ մինչ լուսն ազգքն  
 Ինկկիզոց ՚ի Սաղիաթա՝ թէ մեռաւ Սոնսէլ իւ-  
 բեանց, և զօրք ի բեանց սրք էին ՚ի կողմն Փա-  
 թանայ յաղթեցան ՚ի ձեռանէ քաջացն Հայոց՝  
 մասն ինչ ՚ի նոցանէ մեռան, և մասն ինչ կան  
 ՚ի բանախ՝ սրամտեցան յոյժ : —

Ապա խորհուրդ արարեալ առաքեցին բան  
 առ Վօրդին խան դի և նա միաբանեացի ընդ  
 ինքեանց՝ և ըմբռնեացին զՍասունալի խան,  
 խոստանալով նմա բազում ինչս՝ որքան որ  
 Հաճեացի նա : Յայնժամ պատասխանի արար  
 նոցա Վօրդին խան և ասէ, «Քան լիցի ինձ  
 յայդ պիտի դործ ձեռն արկանել, ոչ կարեմ հո  
 դոսանիլ ազերախտ, և անուանիլ աիրամատ-  
 նող : Հեռի է ասէ, յազդէս Հայոց այդ պի-  
 սի գարշելի դործ չարութեան և սնիրաւու-  
 թեան, քանզի ազդս Հայոց որոց և ծառայեա-  
 ցին՝ միամտութեամբ սրախ և Հաւատարմու-  
 թեամբ ծառայեն մինչև ՚ի մահ իւրեանց, ոչ  
 երկմտեն, և ոչ ասնեհն զչարութիւն ինչ տե-  
 բանց իւրեանց, որպէս ահա Ազոյ Պետրոս  
 եղբայր իմ Հաւատարմութեամբ և միամիտ սրբ-  
 ախ կայ ՚ի ծառայութեան ձերում, նմին նման  
 և ես ծառայեմ աստ մինչև ՚ի մահ իմ :»

Ապա անձարացեալ Ինկկիզոց՝ կրկին յա-

բուցին զՊաքարալի խան յաթոռ աշխարհապետութեան իւրոյ, և յամենայն կուսէ ժողովեալ զգորս՝ որք եղեն յազգէ իւրեանց՝ արք երկու հազարք, և ՚ի Պարզի զօրաց՝ արք չորք հազարք, հանդերձ պատերազմական պատրաստութեամբ ետուն ՚ի ձեռս Մէջէր Աղամ սպարապետին իւրեանց և առաքեցին:

Ելեալ Մէջէր Աղամայ զօրօք իւրովք ՚ի Այլկաթայ՝ եկն եհաս ՚ի գաւառի Քաթուայ, ել ՚ի քաղաքէն Սախսուտաբատայ զօրօք իւրովք՝ Սէրդ Սահամազ խանն և սկսաւ պատերազմիլ ընդ նոսա, և մինչ պատերազմէր եհաս անդր և քաղաքապետն Քիրքունայ երկոտասան հազար զօրօք՝ որոյ անուն էր Սահամազ Թարղի խան, որ ռազմամուտ մտեալ ՚ի մէջ պատերազմին՝ էառ ՚ի զօրաց Ինկիլիզաց զամենայն զքենհակքս նոցա և դարձոյց զնոսա ՚ի փախուստ, և ինքն առեալ զգորս իւր պրնդէր զհետ նոցա, մինչև պատահեցան զօրք նորա ազմուտի միում մեծի՝ որ որքան որ ջանացին երանել՝ առաւել և սաղմաթաղ լինէին սըմբակ ձիոց նոցա և չկարէին երանել, յորոց երեք հարիւր հեծելազօրք միայն ազատեալք անտի, պնդէին զհետ Ինկիլիզաց, Իսկ մի սմն ՚ի հազարապետաց Ինկիլիզաց յորժամ դարձաւ

և ետես թէ՛ Մահամար թաղի խան մնացեալ է  
 փոքր զօրօք՝ արիացաւ և քաջալերելով զիւր-  
 սըն՝ դարձաւ յետս ի վերայ նորա, և պատերազ-  
 մեալ սպան զՄահամար թաղի խան՝ քանի մի  
 զօրօք իւրովք և զմնացեալն դարձուցեալ ՚ի վա-  
 խուստ, եկեալ կալան զամենայն զքենեակս  
 իւրեանց՝ և նոցա միանգամայն,

Եւ ապա գնացեալ ՚ի վերայ Սէիդ Մահա-  
 մար խանին և պատերազմեալ ընդ նմա դար-  
 ձուցին և զնա ՚ի վախուստ զօրօքն հանդերձ՝ մինչ  
 ՚ի Մախսուտաբատ, բայց ՚ի ժամանել նորա ան-  
 դըր՝ սչ յապաղեաց, այլ ել գնաց վաղվաղա-  
 կի գտանել զօգնութիւն ՚ի զօրաց Ասուումա-  
 լի խանին՝ որքոյն ՚ի Մուսկերայ, Իսկ զօրքն  
 Ինկիլզաց անդէն ՚ի վերայ հասեալ Թիբեցին  
 քաղաքին Մախսուտաբատայ

Յորժամ լուան Ասուումալի խան և Վօր-  
 դին խան՝ թէ ազգքն Ինկիլզաց պատրաստեալ  
 զօրօք գան ՚ի վերայ իւրեանց ՚ի պատերազմել,  
 վաղվաղակի ինքեանք և ս ժողովեցին զզօրս իւ-  
 րեանց յամենայն կողմանց, և գրեցին ՚ի  
 Փաթանա՝ որ եկին հաղարատեաքն Մարգար  
 և Ղազար հանդերձ գնդօք իւրեանց, և  
 Քաց անդր միայն հաղարատեան Վրիգոր՝ ՚ի  
 պահպանութիւն կողմանցն հիւսիսոյ, զի մի

ազգքն Ինկլիզաց անդէն զօգնութիւն ինքեանց  
կոչեսցեն զգօրս Հնդկաց :

Բայց աշխարհապետն Մատումալի խան ,  
վասն տարաբաղդութեան իւրոյ , ոչ ինքն  
գնաց ՚ի պատերազմ , և ոչ Պօրդին խանին ե-  
թող ելանել , Այս և Պօրդին խանն խոցոտեաց  
զսիրտս քաջ զօրապետաց իւրոց , քանզի յայսմ  
պատերազմի ոչ կացոյց զմի ոմն ՚ի նոցանէ հը-  
րամանատար ՚ի վերայ զօրաց . ոչ ժողովեաց  
զնոսա առնել խորհուրդ ՚ի միջն՝ որպէս հարկ էր  
իշխանաց . այլ արհամարհելով զնոսա ոչ հա-  
ւատաց քաջաց ազգին իւրոյ , հաւատաց ան-  
տեղեկին և երկչոտին Սմբուայ , զոր արար սպա-  
րապետ յիւր կողմանէ , և ետ հրաման հազա-  
րապետաց ազգիս իննիւ հպատակ հրամանաց  
նորա , և այնպէս առաքեաց զնոսա : Իսկ հա-  
զարապետաց մերոց քաջ գիտելով զփոքրասը-  
տութիւնն Սմբուայ՝ նախանձակիր լինէին  
յոյժ՝ վասն հրամանին . այլ խորշ անկեալք ոչ  
ինչ ասացին ցՊօրդին խան , միայն կիսասիրտ  
և տխրութեամբ գնացին զնոք իւրեանց ՚ի  
պատերազմն , որոց զօրք ամենեցուն էին՝  
Պարգի զինուորք՝ վեցհազարք , քենեակք՝  
քսան և հինգք , հեծելազօրք՝ տասն և հինգ  
հազարք , և հետիք՝ տասն հազարք , որոց միայն

էր ամենայն կազմութիւն զինուց և գումար Հասանէր 921,000. Ելին ՚ի Մունկէրայ և եկեալ Հասին ՚ի բերան գետոյն (Բագրաթեայ) ՚ի Սօնթի . ուտի բաժանի ՚ի գետոյն Վնգայ՝ և անկանի Հեռի ՚ի Մախսուտաբատայ՝ քօսս տան և ութն : ՚Ի Հասանել սոցա անդր՝ եհաս և Սէիդ Մահամադ խան զօրօք իւրովք և միացաւ ընդ նոսա :

Ազգքն Ինկիլիզայ յորժամ լուան թէ՛ զօրք Ասոււմալի խան ին եկեալ անցին ՚ի Ուաջմհալ, ինքեանք և ս վաղվաղակի, որչափ որ կարողացան կալան զզօրս նորս, և ելեալ ՚ի Մախսուտաբատայ եկին և յանդիմանեցան միմեանց երկու քօսաչափ հեռաւորութեամբ . և երկուքին գունդքն արարին զբանակս իւրեանց ՚ի դաշտին Սօնթի . ուր էր տեղի տափարակ մծ յոյժ, անցանելով ՚ի միջոյ նորա հեղեղատին բազմաջուրց՝ անձրևոց ժողովելոց, որ գնայր մտանէր ՚ի գեան Վնգայ : Եւ յայսկոյս ջրոյն ՚ի կողմն հիւսիսի՝ էր բանակն Ասոււմալի խանին . և յայնկոյս հեղեղատին՝ ՚ի կողմն հարաւ՝ էր բանակն Ինկիլիզայ, մինչ զի՛ զօրք յերկուց կողմանց տեսանէին զմիմեանս :

Իսկ Սէիդ Մահամատ խան շինեալ էր անդանօր զփայտեայ կամուրջ մի ՚ի վերայ հեղե-

զատին , վասն անցանելոյ զօրաց իւրեանց :

Յայսմ ժամանակի հրաման ետ Սպարապետն Սմբու բաժանել զբանակ իւրեանց յերիս անկիւնս , հեռի ՚ի կամրջէն իբրև զկէս քօսաչափ : և բնակեցոյց յարեմոտեան կողմն հեղեղատին զբանակ հազարապետին Յարութիւնի՝ չորս քենեկօք , Իւ ՚ի մէջ հարաւ և արև մուտ սակաւ ինչ հեռի ՚ի նմանէ՝ բնակեցոյց զբանակ հազարապետին Մարգարայ՝ ու թն քենեկօք . և ՚ի մէջ հարաւ և արև մուտ՝ բնակեցոյց զբանակն Ղազարայ չորս քենեկօք . և ինքն առեալ զքենեանկս ինն և զբանակ իւր , եթող զգօրս Հնդկաց հեռի ՚ի բանակէ իւրմէ , և եկն եկաց յանդ իման թշնամեաց կէս քօսաչափ հեռաւորութեամբ :

Օ աւուրս երիս կշռեալ զօրացն Ինկիլիզաց զամենայն սահմանադրութիւնս և քաջութիս սպարապետին Աստուճալի խանի , յաւուր չորրորդի սկսան պատրաստել և գալ ՚ի վերայ նորա . և եկեալ անցին զկամրջաւն և սկսան պատերազմիլ ընդ գնդին Ղազարայ՝ ժամ մի : Տեսեալ զայս քաջին Մարգարայ փութով առաքեաց զգօրս իւր յողևութիւն նորա . իսկ Ինկիլիզացն՝ քաջութեանց Հայոց փորձառու դարձ իսկ թողին զնասս ՚ի բաց , և չոգան պա-

տերազմել ընդ Սպարապետին Սմբուայ, և  
 իբրև մերձեցան խլել զքենեակս՝ Սմբուայ՝  
 կամեցաւ հազարապետն Սարգար յառաջա-  
 նալ ՚ի վերայ զօրացն Ինկլիզաց, ուր ընդ  
 մէջ անցեալ հազարապետին Յարութիւնի՝ ար-  
 գել զնա ասելով, « Ընդէր շտապաւ թու-  
 զուս զտեղի քոյ, կնոց որպէս և հրամայեալ է  
 քեզ, համբերեանց սակաւ իկ մի՝ զի տեսցուք  
 զքաջութիւն Սպարապետին մերոյ, քանզի  
 զնա ընտրեցին իբրև քաջ՝ հրամանատար ՚ի  
 վերայ մեր: »

Տեսեալ զօրացն Ինկլիզաց զանժու թիւնս  
 գայս, և թէ՛ զի զօրք քաջացն Հայոց կանգնեալ  
 կան և ս՛չ պատերազմին, ինքեանք ևս առաւել  
 սաստիկացան ՚ի վերայ զնոցին Սմբուայ:

Իսկ Սմբու՝ քանի մի քենեկօքն զօրս ունէր  
 ընդ ինքեան՝ շանթահար եղև ընդդէմ զօրացն  
 Ինկլիզաց՝ իբր և գտասն և եօթն բոլիկս, և  
 թողեալ զքանակ իւր հեծաւ ՚ի ձի՝ և թիկունս  
 դարձոյց, զօր տեսեալ զօրաց իւրոց փոխեան  
 և ինքեանք: Աստանօր՝ թէպէտև հարիւրա-  
 պետք Հայոց ջանացան քաջախրել զգունդս  
 Սպարապետին իւրեանց, բայց չեղև հնար:

Յայնժամ՝ Ազգքն Ինկլիզաց տաաքեցին  
 զհեծելազօրս իւրեանց ՚ի բանակն Սմբուայ, և

կալան զամենայն քեներակս և զպարաստու իս պատերազմին : և դարձ արարեալ՝ կրկին եկին ՚ի վերայ բանակին Մարգարայ Հազարապետին :

Իսկ Հազարապետն Յարութիւն յորժամ ետես թէ փախեաւ Սմբու , և Ինկիլզք տիրեալ ամենայն կահից պատերազմին յարձակեցան ՚ի վերայ Մարգարայ՝ ինքն ևս եթող զբանակ իւր և փախեաւ ՚ի բոց :

Բայց արին և նախանձայոյզ Հազարապետն Պազար իւրովք գնդոքն չոգաւ և միացաւ ընդ Հազարապետին Մարգարայ , և արարին պատերազմ՝ սաստիկ ընդ Ինկիլզաց ժամս իբրև վեց , փախուցանելով զնոսա մինչև ՚ի կամուրջ հեղեղատին , յորոց բազումք յԻնկիլզաց և զի Պարզ ի զօրաց՝ ոցա՝ անկան ՚ի հեղեղատն և մնան : Քանզի ծուխ հրափոշեաց պատեալ յերկոսին բանակսն՝ և սչ ակտանէին ինչ ՚ի թանձրութենէ ծխոյն , որ կալեալ գրաւեալ էր զբանակն յերկոցունց կողմանց ևս :

Իսկ Հազարապետքն մնր , որ դէմ եղեալ խաղային դէպ ՚ի բանակն Սմբուայ , տեսեալ զզօրսն Ինկիլզաց՝ որք գնացեալ և առեալ էին զամենայն պարաստա թիւնս նորա , և գային յետս զառաջեաւ իւրեանց բացեալ զգրօշակ Սմբուբայ սպարապետին , որ քախա-

ցան յոյժ՝ կարծելով՝ թէ փախուցեալ զօրք  
 իւրեանց են՝ որք դան յօգնութիւն ինքեանց .  
 ոչ կասկածելով թէ գուցէ զօրք Ինկիլզաց իցնն  
 Ուստի թողին զնստա մինչև մօտ եղեն ինքեանց  
 ըայց ՚ի մօտիւ նոցա խկ և խկ սկսան պատե-  
 րազմիլ : ուր մեռան ՚ի զօրաց Մարգարայ և  
 Պաղարայ՝ արքա առաել քան ութն հարիւրք .  
 որով և անճարացան յոյժ . քանզի ոչ գոյր նո-  
 ցա օգնութիւն ինչ ուստեքէ . և յերկուց կող-  
 մանց սաստկանայր ՚ի վերայ պատերազմն :

Այա հազարապետն Մարգար հրաման ետ  
 զօրաց իւրոց . զի փրկեսցէ իւրաքանչիւր ոք  
 զանձն իւր . որք հեծեալ յերկվարս իւրեանց  
 դարձուցին զթիկունս և եկին գտին զփախու-  
 ցեալ հազարապետ իւրեանց ՚ի Ռաջմհալ .  
 որ է հեռի ՚ի Սօնթէայ քօսս իբրև քօսն .  
 Անդ ժողովեալ կրկին զցրուեալ զօրս իւրեանց՝  
 պատրաստեցան ՚ի պատերազմ . և ընտրեցին ին-  
 քեացն աեղի ՚ի կողմն արևելեան , հեռի ՚ի  
 Ռաջմհալայ՝ մի և կէս քօս : Քանզի ՚ի կողմն  
 հարաւոյ սորա՝ էր լեռան մի մեծ , և ՚ի կողմն  
 հիւսիսի՝ անցանէր գեան Պանգոյ իբրև վեց  
 մղոնաց յայնու թեամբ և ոչ գոյր ճանապարհ  
 անցանելոյ : Ալ յայնկոյս լեռանց գոյր անսառն  
 Իիրբուհայ՝ դար ու փութ , մեծ և մացառա-

խիտ յոյժ , մինչև անհնարին լինել անցանել  
 ընդ այն : Եւ գեան Վանդէս հեռի էր անախ  
 կէս քօս , ուր 'ի միջոյ լերան և գետոյն անցա-  
 նէր հեղեղատ ինչ ջուրց՝ գոր անուանեն Ու-  
 դիսայ Վոլայ : Օտեղիս ընտրեցին և արարին  
 ինքեանց խոյեանս 'ի հողոյ 'ի կացս քենեկաց  
 իւրեանց , և բերին 'ի Մունկէրոյ քենեակս  
 հարիւր և կոցուցին 'ի վերայ՝ ընդդէմ թըշ-  
 նամեաց :

Իսկ հազարապետն Սիրու ետ դրանակ իւր  
 մերձ Վնդոյ գետոյն , և յաջ կոյս թեոյն ետ  
 զհազարապետն Յարութիւն և 'ի ձախն՝ զբա-  
 նակ հազարապետին Վազարայ : Յաջակողմն  
 սորա , որ էր մերձ 'ի լեռան կացոյց զբանակ  
 հազարապետին Մարգարայ , և ամենայն զօրսն  
 Հնդկաց Սէխը Մահամատ խանաւ , և նորոգ  
 եկեալ Վըիբխան սպարապետաւ վեց հազար  
 զօրօք , որոց ամենեքեան էին Չղարեցիք հե-  
 ծիլազօրք , և առաքեաց զնոսա 'ի կողմնս  
 լերանց՝ ինն քենեկօք ամբացուցեալ : Իսոյց  
 գիտացիւ նախ , զի յայ՛կոյս Վնդայ գետոյն  
 'ի կողմն հարաւոյ ոչ գոյ ծանապարհ , քանզի  
 է անտառ մեծ մացառսխիտ , ուր ճախճա-  
 խուտ և տղմային տեղիք . և 'ի կողմն հիւ-  
 սիսի Ռասլմհալայ քաղաքին՝ գոյ լեռան մի

մեծ՝ ՚ի վերայ Պնդայ գետոյն , որոյ՝ Տէլիայ-  
 գրի ասէն անուն , ընդ որով անցանեն ամե-  
 նայն նաւք , զի չիք այլ ուստիքէ ճանապարհ  
 ցամաքային , եթէ ոչ ՚ի վերայ գետոյն՝ որով  
 անցանեն : Եւ սակս լերանն որ տիրապետեալէ  
 գողցես զճանապարհ գետոյն , է յոյժ նեղ և  
 անցուկ : Սեճ գետն Պանգէս՝ որ երկոտառան  
 լտերաց քանակութեամբ ըսիկ քենեկին՝ դժու-  
 արաւ անցանէ ՚ի կուսէ ՚ի կոյս՝ չունի տեղի նեղ-  
 սագոյն քան զայս , որ յայլ ուրեք ունի ըզ-  
 լայնութիւն առաւել քան զվեց քօսաչափս :

Ատանօր կացոցին զքենեակս իւրեանց ,  
 և հազարապետն Պետրոս իւրովք գնդովք ե-  
 կեալ էր ՚ի Սուճկերայ վասն պահպանութեան  
 տեղոյն , զի մի զօրքն Խնդլիզաց անցանիցեն  
 ընդ այն նաւօք իւրեանց , որք ունէին անդ  
 զբազում նաւակս լիս ամենայն պատրաստու-  
 թեամբ պատերամի :

Օօրքն Խնդլիզաց յորժամ արարին զհաչ-  
 տութիւն ՚ի Սոնթի , ազան անդ . և արարին ըս-  
 պիլանիս զօրաց իւրեանց : Եւ յետ հնգետա-  
 սան աւուրց ասլա չու արարեալ զհիւսիսային  
 կողմամբ եկեալ հասին յանդիման զօրացն Աս-  
 սուճալի խանին , և հեռի ՚ի նոցանէ մի քօս՝ ար-  
 արին զբանակ իւրեանց : Եւ յետ չորից աւ-

ուրց սկսան սրտերբազմիլ զաւուրս երեսուն և չորս , և ոչ ինչ կարացին առնել միմեանց ,

Յաւուրն յայնմիկ ել հազարապետն Մարգար իւրովք գնդովք ՚ի վերայ Ինկիկաց , և ետ սրտերբազմ սաստիկ զինն ժամ . մինչև հատան ամենայն բոյեկք և հրափոշիք նորա : Առաքեալ խնդրեաց զայլ ևս , բայց Սպարապետն Սմբու վասն նախանձու սրտին ոչ ետ , այլ հրամայեաց դառնալ ՚ի տեղի իւր , ուր հազարապետն Մարգար ՚ի քաջութենէ սրտին դառնացեալ՝ բարկացաւ յոյժ , և առեալ ըզսուրն՝ որ ածէր ընդ միջ իւր , կտարատեաց ըզկահան և դարձաւ յետս :

Իւր այս քաջ հազարապետ՝ ՚ի սրտերբազմին Փաթանայ ըմբռնեալ էր ՚ի զօրաց Ինկիկաց և եդեալ ՚ի բանտի ՚ի Մուռնիէր : Այսին ՚ի միջի նոցա զինուորք յաղգէն Պերմանացւոց և Ֆռանսիկաց՝ արք իբրև քառասուն . զորս Սպարապետն Սմբու՝ բարեկամք իմասելով , խնդրեաց ՚ի Պօրգին խանէն , և կացոյց ՚ի վերայ ամենայն քենեկաց իւրոց : Օր թէպետ հազարապետք մեք բազմիցս արդելին , ասելով , թէ դոքա ոչ մնան առ մեզ , այլ փախուցեալ գնան առ ազգն Ինկիկաց , ոչ լուու նոցա Պօրգին խանն , այլ հաճեաց զկամս

Մտնուայ . փախեաւ Մտնու , փախեան և ՚ի սո-  
ցանէ երեսուն և չորս անձինք և գնացին առ  
ազգն Ինկլիզաց :

Իսկ զվերցն զայնասիկ , որք մնացին առ  
Մտնուայ , յորժամ իրազեկք եղեն զնախաձու-  
էն որ կայր ՚ի մջ Հազարապետացն Հայոց և  
Մտնուայ , բանդի տեսանէին թէ ՚ի սրահ ժչ  
սլատերազմին Հայք , տեղեկացան ամենայն  
ճանապարհաց և որպիսու թեանցն , և թողեալ  
փախեան ՚ի գիշերի և գնացին ՚ի բանակն Ինկ-  
լիզաց . և ճանուցին նոցա զամենայն որպիսու-  
թիւնս զօրաց Սասունալի խանին : Ընդ որ ու-  
րախացեալ յոյժ Ինկլիզաց : Բնկալան զնոսա  
՚ի սլատուի և սահեցին ընդ ինքեանս :

Եւ յիս քառասուն երկու առուրց անցա-  
նելոյ ՚ի վերայ բանիս՝ ելին զօրքն Ինկլիզաց  
և եկին մերձ ՚ի բանակն զօրաց Սասունալի խա-  
նին . և առաքեցին ընդ առաջ գունդ մի ՚ի զօ-  
րաց ի բնանց՝ թաքթաքուր զնացու թեամբ մինչ  
՚ի լեառն մեծ , զոր տեսեալ սահակաց տեղոյն  
Հարցին ցնոսա թէ ո՞վ էք , կամ ուստի գոյք  
դուք . և նոքա ետուն սլատասխանի , թէ եմք  
մեք ՚ի սահապանաց զօրաց բանակին Սարգա-  
րայ , որք գնացաք շրջել ընդ բանակս Ինկլի-  
զաց առ ՚ի լրատու թիւն սլարագոյից նոցա ,

և այժմ գառնամք ՚ի տեղիս մեր :

Եւ որովհետև երբէք չէր պատահեալ նոցա այսպիսի լրտեսու թիւն Ինկլիզաց : վասն որոյ անգիտացան պահասլանքն անդգոյշք , և թողին զնոսա անցանել , մինչ զնայեալ մտին ՚ի բանակ զօրուն Հնդկաց :

Յորժամ տեսին յառաջնասլահք Մարգարայ , թէ զօրք Ինկլիզաց են՝ որք պատրաստու թեամբ եկեալ են ՚ի վերայ բանակի իւրեանց՝ ազգ արարին հազարասլտին իւրեանց . որ ելեալ վազվազակի , հրամայեաց հնչեցուցանել զփողոն և հականել զթմբուկքս պատերազմին և պատրաստել ՚ի սազմն : Օրք Հնդկաց վեց հազարք՝ որք Չզարեցիք կոչէին , ելին ՚ի թմբացեալ քնոյ և անդգուշու թեամբ կրակեցին զհրացանս իւրեանց ՚ի վերայ զնդին Մարգարայ : Անդ եկեալ և զօրացն Ինկլիզաց կրակեցին զքենեաքս իւրեանց ՚ի վերայ բանակին Չզարեցուց . յորոց մեռան բազումք և միացեալքն աճասլարեցան ՚ի փախուստ մինչև սչ մնալ ՚ի նոցանէ՝ և սչ մի : Յայնժամ կալեալ Ինկլիզաց զքենակքս Չզարեցուցոց՝ դարձուցին զզէնս իւրեանց ՚ի վերայ զնդին Մարգարայ :

Իսկ Ասլարասլտան Սմբու , յորժամ ետես՝

Թէ վախեան զօրք իւր . և Ինկլիզք տիրեցին  
 Հրազնուցն՝ որք էին ՚ի վերայ լեւնացեալ  
 հողոց , երկեաւ յոյժ . և քանզի զիշեր էր ժա-  
 մըն , կարծեաց՝ Թէ զօրք Ինկլիզաց բազումք  
 են . վասնորոյ թողեալ զդրօշակս իւր ըստ  
 առաջնոյն՝ վախեաւ ամենայն զօրօք իւրովք :  
 Օայս տեսեալ Մարգարայ Թէ ինքն միայն  
 մնաց և երեք կուսէ թափին ՚ի վերայ ինքեան  
 և ցրուեն զօրս իւր՝ անճարացաւ և վախեաւ ,  
 Եւ սակս ոչ գոլոյ սոցա սխառաստու թիւն ինչ  
 պատերազմի , ժողովեցան ամենեքեան և ուղ-  
 զակի գնացին ՚ի Մունկէր՝ և յորժամ հասին  
 անդր՝ Պօրզին խան ոչ սփոխեաց զսիրտս հա-  
 զարապետոց Հայոց , տալով նոցա քաջալերս .  
 այլ ընդ հակառակն՝ բարկացեալ ՚ի վերայ նո-  
 ցա՝ ընկէց զնոսա ՚ի սխառուոյ . և հաւատաց  
 ասացելոց բանիցն Մարուայ , որ ասէր՝ Թէ  
 դոքա ոչ ընթացան ըստ հրամանի իմում :

Յայնժամ Պատումալի խան ընդ Պօրզին  
 խանին խորհնուրդ արար , զի երթիցեն յան-  
 յաղթելի ամրոցն Ռատասզարայ , և անտի ժո-  
 ղովեսցեն զօրս ՚ի Մարաթայուց և յայլոց ,  
 և կրկին ելցին տալ պատերազմ ընդ Ինկլի-  
 զացն :

Եւ թողեալ ՚ի Մունկէր վասն պահպանու-

Թեան ամբողջի տեղոցն՝ զհազարապետսն Պիտրոս և զՎազար հանդերձ գնդովք իւրեանց, ինքեանք առին զամենայն հարստութիւնս գանձուց, և չու արարեալ ՚ի Մուշկերայ զօրօք իւրեանց՝ գնացին ՚ի կողմն Փաթանայ և յաւուրն չորրորդի հասեալ ՚ի գեօղն Տէլփուռ անուանեալ, որ հեռի է ՚ի Մուշկերայ քսան և վեց քօս, անդ արարին զբանակ իւրեանց զաւուրս երկուս :

Եւ ինքն Պօրգին խան ունէր զհարաւակողմն բանակին Վասուճայի խանի՝ փքրիկ զօրօք իւրովք, հեռի ՚ի նմանէ մի և կէս քօս չափաւորութեամբ. քանզի զմեծագոյն մասն զօրաց իւրոց կրկին տուեալ էր ՚ի ձեռս Սմբուայ սպարապետին՝ որ յառաջապահ էր ՚ի հիւսիսոյ կողմանէ բանակին Վասուճայի խանի՝ երեք քօս միջոցօք :

ԱՅՅԹ ամաչեմ՝ տատանօր գանդատել զանդգուշութենէ և զտղիտութենէ մերոց Սպարապետաց և Հազարապետացն, քանզի ՚ի ձախորդութեան ժամանակիս յայսմիկ, նա ինքն Պօրգին խան իշխան լինելով, զքաջս Ազգին իւրոյ սչ պատուեաց, տալով նոցա պատիւս նախկին մեծութեան իւրեանց, և սչ յորդոհաց զնոսա ՚ի քաջութիւն, որպէս վայել էր

խոհեմ և քաղաքավար իշխանաց , այլ զնե բ-  
 Հակս սոցին բարբառէր նոցա ասելով , թէ քոք  
 առ իժ եղէք կորուսանելոյ զերկիրս , և արարիք  
 ինձ պախարակ ՚ի մէջ ամենայն աշխարհի , որ  
 ոչ Հնազանդեցայք Հրամանաց Սմբուայ սպա-  
 րասիրտին ձերոյ : Սա տյսպէս : Եւ Հազարա-  
 պետքն մեր վասն նախանձու սրտից իւրեանց ,  
 կորուսին զամենայն անուն քաջութեանց և շքե-  
 դաշութ պատիւս զինուորութեանց իւրեանց . ոչ  
 ՚ի միտ ածելով նոցա զբան Ղաւքելիյն՝ որ ասէ ,  
 առ Հրէայս վասն Քրիստոսի . եթէ նախանձ  
 առնելոյն իւրեանց , կրեսցեն զմա՛ն .՝ որպէս և  
 եղև իսկ : Քանզի Վօրդին խան ՚ի սակս բար-  
 կութեան սրտին իւրոյ , անպատիւ արաք զնո-  
 սա . իսկ նոքա ՚ի նախանձուէ անփոյթք լի-  
 նէին . քանզի վաճառականք գոլով ամենեցուն  
 նոցա՝ զինչ՝ գիտէին զպատուոց և մեծարանաց  
 գործոց պատերազմականաց , վասն զի արք խը-  
 ռովասէրք գոլով , իւրաքանչիւր ոք ՚ի տեղիս  
 իւրեանց կացին անփոյթք ամենայնի : —

Յաւուրն երրորդի և ՚ի ժամ միջօրէի՝ պա-  
 տահեցաւ յանկարծակի պատահումն , որ կա-  
 տարեցաւ ՚ի վերայ Վօրդին խանին . քանզի սա  
 ելեալ ՚ի վրանէ իւրմէ վասն զբօսանաց՝ շրջէք  
 աստ և անդ ՚ի մէջ բանակացն , վասն պարտ-

գայից պատերազմին՝ և գնաց մինչ եհաս 'ի վրանն Մահամազալիխանին՝ զոր կացուցեալ էր սպարապետ 'ի վերայ հինդհազար հեծելազօրաց : Անդր մնացեալ սակաւիկ մի՝ յորժամ անդրէն դառնայր յետս , Մահամազալիխանն հանդերձ այլ մեծամեծօք՝ կամեցան ընկերել նմա 'ի ճանապարհին , այլ նա ոչ կամեցաւ , և հրամայեաց նոցա դնալ յետս և մնալ 'ի տեղիս իւրեանց : Եւ ինքն առանց ինչ զօրաց դարձաւ յետս , ընդ իւր ունելով զերեսին անձինս միայն՝ որոց առաջին էր քեռորդ ին իւր Պարոն Յակոբջան անուանեալ , և երկրորդն՝ Պարոն Նյատուր Առաքելեան , և երրորդն՝ Մօնսիօս Տէնթին , բարեկամն կամ լաւ ևս՝ խորհրդակից իւր՝ յազգէն Փրօանկօիկաց :

Եւ այն ինչ չև հասեալ նորա 'ի վրան իւր , ել ոմն 'ի գնդէ պահապանաց վրանի իւրոյ՝ որք էին հեծելազօրք իբրև երեք հարիւրք՝ որոց Սպարապետի անուն էր՝ Տանմահամազ , Սարրբէկ անուամբ հեծելազօր ելեալ եկաց առաջի Վօրդին խանին և ասէ , « թէ տուր մեզ զվարձս մեր , զի 'ի սովու մեռանիմք . » Պատասխանի ետ նմա Վօրդին խան և ասէ , թէ մոլիս այժմ , զի չև է աւուրս քսան՝ յոր ե-

տու ձեզ զամենայն վարձս ձեր, այժմ զի տաց,՝ Չունեմք դրամ, որով զնեսցուք մեզ զկերակուրս, վասն որոյ պարտիս տալ՝ «ասաց հեծեալն : Պատասխանեաց Ղօրդ ին խան, թէ ոչ գիտես զինչ խօսիս, դնա՛ դու առ զօրապետն քո և խնդրեա՛ ՚ի նմանէ զոր ինչ և կամիս :» Պատասխանեաց ձիաւորն թէ «ես առ նա ոչ երթայց, այլ դու տուր ինձ այժմ» :

Բարկացեալ ընդ այս Ղօրդ ին խանին յոյժ՝ հրամայեաց միում ՚ի Պայեկաց կամ Հարքարս ասացեալ պահապանացն՝ որ անդ էր, զի գնացեալ բերցէ վազվազակի զայլ ևս արս եօթն, և կալեալ զնա գեցէ ՚ի բանտի : Եւ այն ինչ շարունակել կամէր զճանապարհ իւր, յանկարծակի վազեաց ձիաւորն այն, և հանեալ զսուր իւր, բախեաց յաւ Ղօրդ ին խանին : Սոր տեսեալ ընդ նմա եղերոցն ամենեքին փախեան, և մնաց միայն՝ պարոն Սատուր Առաքելեան՝ որ անկաւ ՚ի վերայ Ղօրդ ին խանին առ ՚ի փրկել զնա ՚ի վիրաւորելոյ, բայց ոչ եղև հնար, զի չունէր զսուր ինչ ՚ի ձեռին իւրում : Ի կրկնել անօրինին զսուր իւր, թռեաւ Սատուր զի կալցէ, որ բախեալ եհատ զիէս աջոյ ձեռին իւրոյ, կառկառեաց ապա զձեռն ձախոյ՝ զի տացէ զսուրն՝ այլ հարեալ

եհատ և զայն , վերաւորելով և զգլուխն :

Յայնժամ տեսեալ նոցա թէ ոչ կարէին զեր ծանել . քանզի և եղբարք անօրինին սուսերամիակ գային 'ի վերայ խրեանց , վասնորոյ և Վատուր սկսաւ փոխչել և ջանայր վասն Վօրգին խանին զի փախնուցսւ և նա , արշաւեցուցանելով զերթվար նորա . բայց ոչ կղևհնար . քանզի սլարան մի փաթաթեալ ընդ զոսամբք երթվարի Վօրգին խանին՝ անկաւյերկիր . առ որ հասեալ եղևնաւորին և բաց զհինգ այլ ևս վէրս որոյ թէպէտ ամենեքեան մանուէք էին , բայց կողից նորա մի վէրն էր մեծ յոյժ :

Յէա այսր անօրէնու թեան փոխեաւ տիրասպանն , Եւ յորժամ լուան զօրք բանակացն , եկին համայնգամայն և անկեալ 'ի վերոյ չորեսին հարիւրոց արանցն այնոցիկ՝ մաս մաս արարին զնոսա , և սրախողխող կորուսին զամենեանն : Քայց զաւուրս երկուս որոնեալ՝ ոչ գլխին զեղեռնաւորն զայն , քանզի աներևոյթ եղև մինչև ցայս օր :

Յէա բանկցս այսոցիկ բարձին զՎօրգին խան և տարեալ 'ի վրան իւր , ժողովեցան 'ի վերայ նորա բազում օշարարք և բժիշիք , և արարին բազում հնարս և զսպեղանիս՝ իբրև

ժամս երկուս , և ապա խնդրեաց զքահանայ ,  
խոստովան եղև զմեղս իւր , և առեալ զճաշակ  
Սրբութեան , յեա չորից ժամուց աւանդեաց  
զհոգին՝ յամի Տեառն 1763 . յամսեանն Օգոս-  
տոսի 11 , օրն երկուշաբթի :

Բայց մինչդեռ կենդանի էր լուաւ Աստուծ  
ալի խան զքթալի լուրս՝ և ելեալ ՚ի վրանէ  
իւրմէ հեծաւ ՚ի վիւղ և եկն ՚ի տեսանել զնա .  
և յորժամ ետես արասուալից աչօք , ասաց .  
“ Եղբայր զխնորդ ոչ լուար ինչ , քանիցս պա-  
տու իրեցի . քեզ՝ թէ առանց պահապանաց աստ  
անդ մի շրջեր . ” և ավստստլով բազում մխի-  
թարական բանս ասաց նմա , և ստիպեաց բժշ-  
կացն հոգ տանել նմա . խոստանալով նոցա  
բազում պարգևս : Եւ յորժամ մնաաւ բա-  
զում փառօք և պատուովք տարեալ թաղեցին  
զնա ՚ի գեօղն Բարէի , ուր բանակ հարեալ էր  
Սպարապետն Սմբու :

Այսն սպանման Վ.օրդին խանի , բազումք  
բազում ինչ ասեն , ոմանք ասեն՝ թէ ազգքն  
Ինկլիզաց տեսեալ դարարո Աստուծ լի խա-  
նի , կամէին ըմբռնել զնա և ոչ կարէին ,  
վասն որոյ զրեալ թաքստեամբ առ Վ.օրդին  
խան բազում ինչս խոստացան նմա , զի ըմբռ-  
նեացէ նա զնա և տացէ ՚ի ձեռս իւրեանց , բայց

սլատասխանեալէր՝ թէ «ես խեղճ մարդ գոլով ,  
 Ասու մալի խանն հաւատաց ինձ և մե ծացոյց  
 զիս փառօքս այսու իկ , վասն որոյ սչ կարեմ՝ ,  
 Քաւլիցի ինձ լինիլ տիրադրու ժ . մանաւանդ  
 զի՛հեռի է յԱզգէս մերմէ այդպիսի տիրամատ-  
 նութիւն , զի որոյ որ ծառային Հայք , միամը-  
 տութեամբ սրաի մեան հաստատունք մինչև  
 ՚ի մահն իւրեանց : Ուստի ասեն՝ թէ խորհր-  
 դեամբ նոցա եղև դաւս այս :

Իւ սմանք ևս ասեն՝ թէ սչ . այլ Աշոյ Պիտ-  
 րոս եղբայր Պօրգին խանի բարեկամ գոլով  
 Խնկլիզաց , երկբայեցաւ Ասուալի խանն ,  
 տեսանելով թէ զզօրք Խնկլիզաց որքան որ  
 փոքր են , տակաւին յաղթին զօրաց իւրեանց .  
 վասնորոյ խորհեցաւ ասեն՝ թէ գուցէ ըմբռ-  
 նեսցէ Պօրգին խան զինքն և տացէ ՚ի ձեռս  
 Խնկլիզաց . քանզի ամենայն զօրք նորա ընդ  
 իշխանութեամբ Պօրգին խանի էին , և չկարէր  
 յայնմ ժամանակի ձգել զնա ՚ի սլատուոյ իւր-  
 մէ կամ առնուլ ՚ի ձեռանէ նորա զիշխանու-  
 թիւնն մեծ , վասն այսորիկ սա արար , ասեն  
 զդաւս զայս , զիարդ և իցէ զազունին գիտելն  
 Աստուծոյ է :

Յետ այսր ամենայնի՝ տեսեալ Ասու մալի  
 խանի զայս ամենայն , ապա չու արար զօրօք իւ-

բով.ք դնաց 'ի Փաթանա, ընդ իւր տարեալ  
 և զերկասին եղբարսն զ Ս կսէթ, և յաւուր միում  
 հրամայեաց Սմբուայ դնալ սպանանել զզօրսն  
 Խնկլիզաց՝ որ.ք կային 'ի բանաի իւրում՝ հան-  
 դերձ երկօքին Ս կսէթօք : Թէպէտ յառաջ  
 քան զայս և ս քանիցս կամեցեալ էր սպանա-  
 նել զնոսա, բայց Գօրգին խանն ճէ էր թողեալ,  
 այլ զարդիս այսպէս արարեալ՝ ինքն մնաց 'ի  
 Փաթանա՝ ամիս մի՛. և թողեալ զզօրս ինչ վասն  
 պահպանութեան տեղւոյն՝ յանձնեաց զքաղաքն  
 'ի խնամս Ս Էնդիղուլիխանին, և ինքն յու-  
 սալով յազգ իւր և ճէ յԱստուած, ելիք զամ-  
 բոցն Աստասգար, և չու արարեալ գնաց յաշ-  
 խարհն Լչարաղ՝ առ թագաւոր և վէզիրն  
 Շուշագուլայ՝ զի գտցէ 'ի նոցանէ զօղնակա-  
 նութիւն :

Յետ մահուան Գօրգին խանի հազարա-  
 պետք մեր ճէ կամեցան մնալ առ Կասուամալե  
 խանի, թէպէտ և բազում հաճութեամբ կա-  
 մէր պահել զնոսա առ ինքն, այլ թողեալ  
 զնա ցրուեցան աստ և անդ, մինչև յորժամ տի-  
 բեցին զՓաթանա ազգքն Խնկլիզաց, յայն-  
 ժամ ըմբռնեալ զնոսա զամենեսին՝ առաքե-  
 ցին 'ի Կալիաթա, և անդր թողին զնոսա ա-  
 գատս : Բայց հազարապետքն Գրիգոր և Սու-

քիտո՞ գնացին ընդ Աստուծալի խանին . և յորժամ հասին յամրոցն (Բաբսար՝ Աստուծալի խանն կացոյցանդր զՎերիդոր Այլադեան գընդովք իւրովք կալ ՚ի սրահսլանութեան ինքեան : —

Իսկ զօրքն Ինկլիկաց յորժամ արարին ըդ յադթութիւնն յԱւդիայ-նալայ և կալան զամենայն բենեակքս զօրաց Աստուծալի խանին՝ մնացին անդ զաւուրս երիտ . ապա չու արարեալ սակաւ առ սակաւ յառաջանալ սկսան , և յորժամ տեսին թէ չեք ոք՝ որ ընդդիմանայցէ ինքեանց , գնացին դէպ ուղիզ մինչ և ՚ի դեօղն Չնդիրայ՝ որ անտուստ մինչ ՚ի Մուռնկէր՝ է ութն քօս : Եւ յորժամ լուան անդ՝ թէ Աստուծալի խան չու արարեալ զօրօք իւրովք ՚ի Մուռնկէրայ՝ գնացեալ է ՚ի Փաթանա , ելին առ ժամայն և եկեալ ՚ի Մուռնկէր՝ շրջապատեցին զամրոց տեղոյն , և ծանուցին հազարապետին Պետրոսի՝ զի յանձնեցէ ինքեանց զամրոցն , բայց նա ոչ կամեցաւ . վասնորոյ զերիս աւուրս պատաստեալ նոցա զտեղիս քենեկացն՝ յաւուրն չորրորդի սկսան պատերազմիլ մինչ զաւուրս ինն :

Եւ ապա կրկին առաքեցին Ինկլիկք զՉաֆարալի խան իրրև դեսպանն առ հազարապետ .

տըն Պետրոս և ասեն՝ թէ ընդէր պատերազմիս  
 ընդ մեզ և ո՛չ իջանես յանձնել զամբողջ, որո՞յ  
 յուսով, մի՞ թէ ո՛չ գիտես, կամ ո՞չ լուար տա-  
 կաւին զմահն Պօրգին խանի, եթէ կամիս  
 ճշմարտել, մեք տացուք քեզ զճանապահ զի  
 յղեսցես զմի ոմն ՚ի հաւատարմաց քոց, զի գը-  
 նացեալ ստուգեսցէ և բերցէ քեզ ծանօթս ՚ի  
 պարագայից նորա: Այսպէս երկցս առաքեցին  
 և ճանուցին նմա՝ մինչև խորհուրդ արարեալ  
 հազարապետն՝ առաքեսց զմի ոմն ՚ի Փաթանա՝  
 առ Աստուծալի խան, որ գնաց ստուգեսց զա-  
 մենայն պատահմանցն, և դարձեալ յետս ծա-  
 նոյց հազարապետին իւրոյ: Եւ իբրև լուան  
 զօրք ամբողին զմահն Պօրգին խանի, բարձան  
 ամենուստեքէ յոյս և ակնկալութիւնք նոցա,  
 և սկսան յամենայն գիշերի փախչել ՚ի պարսպէ  
 ամբողին, և զօրքն Ինգիլիզաց տեսեալ՝ թոյլ  
 տային նոցա զի գնացեն անախ:

Տեսանելով զայս հազարապետին Պետրոս  
 սի՝ անճարացաւ, վասնորոյ յղեսց զհարիւ-  
 րապետն իւր զՅովհաննէս՝ առ Մէջէր Աղամն  
 դնել զգաշն խաղաղութեան:

Յորժամ տեսին զգալուստ հարիւրապե-  
 տին, ուրախ սրտիւ ընկալան զնա, և Մէջէր  
 Աղամն ըստ կանոնի իւրեանց եղ գաշենս, թէ

Թողեալ զամենայն հրային զէնս ձեր յամբողջ անդ՝ առէք զամենայն անօթս և զինչս ձեր և գնացէք ուր և հաճեցին սիրաբ ձեր՝ Թարց արգելման :

Յետ քսան և երկուց աւուրց ՚ի լուսանալ առաւօտին բացին զգունն ամբողջին և ելեալ ամենայն զօրացն՝ գնացին ՚ի Ճանապարհըս իւրեանց , անդ մնալով միայն հաղարապետին Պետրոսի հանդերձ վրց հարիւրապետօք յաղգէս մերմէ՝ և ծառայօք իւրեանց :

Ապա եկեալ Ինկլիզաց տիրապետեցին ըզքաղաքն Մունկեր : Յետոյ հաղարապետն մեր հանդերձ հարիւրապետօքն՝ գնացին առ սպարապետն Ինկլիզաց , որոց ստացեալ մեծարեաց յոյժ , և ետ նոցա հրաման զի ուր և կամեսցին գնացին , բայց միայն զհաղարապետն Պետրոս ըստ կանոնի իւրեանց առաքեցին ՚ի Ալալկաթա , զի անդէն գնացէ ուր և կամեսցի : —

Եւ ինքեանք եգեալ ՚ի Մունկեր զգունդ մի ՚ի զօրաց իւրեանց , ապա չու արարեալ զօրօք գնացին ՚ի քաղաքն Փաթանայ , որ յետ երկց աւուրց սխտերազմի՝ կալան և գնա , և զզօրս տեղոյն դարձուցին ՚ի փախուստ , և զորդի քաղաքապետին՝ որում անուն էր Մհնդիզուլի խան՝

ամենայն ընչիւք իւրով թողին անդ ազատ :

Յետ քանի աւուրց թողեալ անդ զհազարապետ մի դեղօք իւրովք վասն պահպանութեան՝ ինքեանք չուարարեալ դեացին ՚ի կողմն Քաքսարայ , և հասեալ անդ՝ կալան զնա թարց պատերազմի , և անցեալ անտի դեացին մինչ և ՚ի վերջին սահմանս սուբային Քհարայ , ուր է դեան փոքրիկ՝ որ կոչի՝ Քրքմնսա : Ի Քաքսարայ մինչ անդ՝ է տասն և հինգ քօս , ուր յայնկոյս դետոյն և ՚ի կողմն հիւսիս՝ է տէրութի և իշխանութի Շուշադօվլային :—

Յնա այս ամենայն տիրապետութեան Ինկիլիզայ , այլ ևս սչ մնաց անուն կամ իշխանութիւն Ասսուճալի խանի ՚ի մէջ երկուց սուբայից , բայց միայն ամբոյն Աօտասզար՝ որ այն ևս առաքեաց Սէջէր Ադամն զհազարապետ մի՝ և դաշամք կալաւ . քանզի սչէր կարևոր պատերազմաւ տիրել նմին : Այսն որոյ դաշն եղեալ ընդ Իսսուֆալի խան ամբոցապետի տեղոյն՝ տիրեցին այնմ . և թողին զնա ազատ . և յազդէ իւրեանց կացուցին անդ իշխան և կառավարող աշխարհին :

Յետ բանիցս այսոցիկ լբեալ Ասսուճալի խանի զտէրութիւն իւր , դնաց ՚ի տէրութիւնն Շուշադօվլային , մինչ եհաս ՚ի քաղաքն Քրք-

Նարիս , և յորժամ լուաւ թէ Շուջադօրայ  
 Հանդերձ Թադաւորուն պատերազմին ՚ի Սար-  
 քարն Բրէթ կամ Բհէթ ընդ Սաջայ Բնդու-  
 պատին՝ որ էր տէր տեղւոյն , Բանդին ՚ի նա-  
 Հանջիլ թադաւորութեան Հնդկաց՝ սա բռնա-  
 ցեալ ոչ տայր զհարկս աշխարհին յանմիկ ,  
 վասնորոյ զի երկոքին սուբայքն Աւօտ և Ալա-  
 բազ ընդ իշխանութեամբ Շուադօվլային  
 էր . յոր սա վասն լեւնային և անտառային ճա-  
 նապարհացն վստահացեալ՝ ոչ հատուցանէր  
 զհարկն :

Սակս որոյ Կասումալի խանն մնաց ՚ի Բնա-  
 բիս և առաքեաց զՍիր Շըմզլին բարեկամ  
 իւր ՚ի Բհէթ առ Շուջադօվլայ վասն խնդ-  
 բելոյ ՚ի նմանէ զերդումն . զի որպէս զհարա-  
 զատ եղբայր միաբանեսցէ ընդ ինքեան , և  
 գնացեալ պատերազմն սցեն ընդ ազգին Ինկ-  
 լիզաց . որով և խոտանայր , յետ գասնելոյ  
 զերկիր իւր , տալ նմա զանձս բազում :

Գնացեալ սա առ Շուջադօվլայ ծանոյց  
 նմա զամենայն . ընդ որ ուրախացեալ յոյժ եր-  
 դուաւ և խոստոցաւ կատարել զփափագ սրաի  
 նորա , և յղեաց առ նա յետս զՇըմզլինն  
 Հանդերձ Բինի Բհադուր զիււանաւ իւրով՝  
 որք եկեալ ետուն նմա յոյս բազում :

Յայնժամ Աստուծալի խան եթող զկանայս  
 և զինչ ա իւր հանդերձ հաղարապետօքն Պարի-  
 գորաւ և Սուքիասաւ զօրօք իւրեանց ՚ի Բնա-  
 ըխ՝ վասն պահպանութեան, և ինքն զօրօք  
 և Սմբուաւն սպարապետաւ չու արարեալ  
 գնաց առ Շուշադովլա: Իւ յորժամ եհաս  
 անդր՝ ընդ առաջ եղև նմա Շուշադովլա և  
 գրկեալ ողջունեաց և պատուեաց զնա բազում  
 քաղաքալարութեամբ:

Իւ յեա քանի աւուրց Աստուծալի խանն  
 միջնորդ եղեալ, արար խաղաղութիւն Ռաջա-  
 թնդուպասին ընդ Շուշադովլայ, և ապա սկսան  
 ժողովիլ զօրս բազում. ուր արտաքոյ զօրաց Ա-  
 ստուծալի խանին և Շահալէմ թագաւորին,  
 միայն զօրք Շուշադովլային էր առաւել քան  
 զմի հարիւր և երկուտասան հազար, յորոց շատք  
 ՚ի նոցանէ էին զօրք Մղուլաց (Պարսիս) զորս  
 յառաջադոյն հայր նորա Մանսուրալի խանն  
 յաւուրս ըդեշխութեան իւրոյ՝ բերեալ էր  
 յերկրն Պարսից, յորոց մնացեալ էին երկու-  
 տասան հազար հեծելազօրք: Օտոսա ՚ի մի  
 գունդ կապեալ ընդ վաթսուն հազար հեծե-  
 լազօրաց Հնդկաց և ընդ այլ ոտնաւոր զօրաց  
 խառնիճադանջից՝ իբրև քառասուն հազարաց՝  
 պատրաստեցան հրազինօք, և չու արարեալ ե-

կին ՚ի սուբէն Բհարայ՝ որ է Փաթանա, տալ  
պատերազմ ընդ ազգին Ինկլիզաց :

Յորժամ լուան Ինկլիզք զպատրաստութիւնս  
նոցա, վազվազակի առաքեցին զդեսպան իւ-  
րեանց խնդրել զխաղաղութիւն, և խոստա-  
նային տալ նոցա բազում դրամն՝ ամի ամի  
յերկուց յաշխարհացն, այսինքն ՚ի սուբայլցն  
Բանկալայ և Բհարայ : —

Այլ Շուջադովլայ հպարտացեալ ՚ի բազ-  
մութիւն զօրաց իւրոց՝ սչ հաւանեցաւ ընդ  
խոստումն այն, մանաւանդ թէ՛ վլաւ ուսող  
Սղուլանին՝ որք մեծաւ ամբարտաւանութեամբ  
բարբառէին՝ թէ մին յինքեանց ըմբռնելոց է  
զհարելը Ինկլիզս, որոյ եղև ներհակն, զի մին  
յԻնկլիզաց զհինգ հարիւրս ՚ի նոցանէ փախոյց,  
Բանգի ՚ի ժամ պատերազմին ՚ի ձայնէ քե-  
նեկացն Ինկլիզաց սարսեալ դողային և հա-  
մարէին թէ յերկնուստ իջանէր ՚ի փերայ ին-  
քեանց հրէհ և մառախուղ մխոյ :

Եւ եղև մինչ աւուրս քսան և հինգ Շահ-  
ալիմ թագաւորն և Աստուճալի խանն ետուն  
պատերազմ սաստիկ յոյժ ընդ ազգին Ինկլի-  
զաց, ուր և ՚ի նմին իսկ աւուր՝ և մերձ յամրո-  
ցն Փաթանայ ՚ի կողմն արեւմտեան՝ զոր կոչ-  
են Փազախարի՝ գնաց Շուջադովլա զօրօք

իւրովք՝ զի տայէ պատերազմ՝ ընդ Ինկլիզս  
տեղւոյն, Այլ ելեալ յամրոցէ անտի հարիւ-  
րապետ մի յԻնկլիզաց գնդովքն՝ տեղաց հուր  
սաստիկ ՚ի վերայ նորա, յորմէ և զիպեալ բո-  
լիկ մի հրացանի ՚ի ձախոյ բարձն մը բճ երաս-  
տանին չկարաց՝ ժուժել ցաւոյն, վասն որոյ  
յետ սուղ միջոցի էառ զզօրս և թիկունս դար-  
ձուցեալ գնաց եմուտ յամրոցն Բաքսարոյ  
առ ՚ի ողջացուցանելոյ զվէրն, Բայց յորժամ  
ողջացաւ սչ կարաց գնալ կրկին, քանզի ժա-  
մանակն էր անձրեային, վասնորոյ զտեղի կա-  
լաւ անդր զամիսս չորս :

Յետ այսորիկ տեսեալ Կասոււմայի խանի  
թէ սպարապետն իւր Սմբու, թարց հրամանի  
իւրոյ պահեալ է զխառնիճաղանճ՝ զօրս, որք  
սչ զզէն և ոչ զհրացանս ունէին, հրամայեաց  
արձակել զնոսս, պատճառս բերերելով՝ թէ  
ինքն չունի, զի տայցէ նոցա զէնս և բաւական  
կերակուր : Բնդ որ խոժսուեալ Սմբուայ, զը-  
նաց լուրայն առ Շուջադովլայ՝ և հաճեցոյց  
զնա՝ գնալ և ծառայել նմա : Որ յետ սիրով  
ընդունելոյ զնա՝ ապա էառ Սմբու զզօրս իւր  
և գնաց եմուտ ՚ի ծառայութիւն Շուջա-  
դովլայի :

Եւ յետ չորից աւուրց առաքեաց Շուջա-

դովլայ զօրս իւր և ըմբռնեալ զՄասուժալի  
խան երեք առ ինքն , և սլահեաց զնա կատա-  
նօք : Եւ առաքեալ տիրեաց ամենայն ընչից  
նորա՝ որք էին ՚ի բանակի անդ իւրում , ասե-  
լով , թէ երկիրս ամենայն և հարստութիւնդ  
թագաւորին է , արդ տո՛ւր զկայսերն կայսեր : Եւ  
այսպէս մտացեալ զերեքիկն երգմունս իւր . յա-  
ւել յիւր և զՍմբու սպարապետ նորա ՚ի Քնա-  
րիս , որ գնացեալ երեք զհազարապետն Գրի-  
գոր և Սուքիաս և առեալ զամենայն գանձս և  
զօրս Մասուժալի խանի էաճ առ ինքն :

Տեսեալ զայս հազարապետաց մերոց՝ անճա-  
րացան և կամէին լքանել զճառայութիւնս  
իւրեանց , այլ Շուշադովլայ քաջ ծանօթ գո-  
լով քաջութեան նոցա՝ սչ եթող , այլ առա-  
քեալ աճ զնոսա առ ինքն և կացոյց ՚ի վերայ  
գործոց հազարապետութեան :

Յետ այսորիկ և ՚ի վճարել անձրեաց ,  
յորժամ պատրաստէին զօրք Շուշադովլայ՝  
յառաջեցին զօրք Ինկիլիզաց , զի սպարապետն  
Սէջէր Ադամ վից հազար Գարդի զօրօք եր-  
կու հազար սօլդաթօք և քսան և չորս քենե-  
կօք հարդերձ կուռ պատրաստութեամբ պա-  
տերազմի՝ եկն ՚ի Փաթանս , և հասեալ մերձ ՚ի  
բանակն Շուշադովլայ , երեք քօս հեռաւո-

յուլթեամբ արար զբանակ իւր :

Յետ չորից աւուրց հրաման ետ Շուջա-  
դօւլլայ զօրաց իւրոց շրջապատել զլորս Խնկ-  
լիզաց , զոր արարեալ նոցա այնպէս , ետուն  
պատերազմ սաստիկ յոյժ՝ մինչև ցժամս եր-  
կուս : Տեսեալ Խնկլիզաց թէ ոչ կարեն յաղ-  
թել զնոսա , խորհեցան դրոհ տալ ՚ի կողմն  
Սմբուայ , քանզի նախածանօթ էին երկչո-  
տութեան նորա . ուստի առաքեցին զհազարա-  
պետ մի՝ ՚ի վերայ նորա , զոր տեսեալ Սմբու-  
այ խկ և խկ եթող զդրօշակս իւր , և ըստ սո-  
վորութեան իւրում՝ դարձաւ ՚ի փախուստ ա-  
մենայն զօրօք իւրովք : Օ այս տեսեալ զօրացն  
Հնդկաց թէ փախչի Ֆռանկ զօրապետ իւ-  
րեանց՝ նոքա ևս սկսան փախչիլ . կողոսպտելով  
զպանծս Շուջադօւլլայի տեառն իւրեանց :

Յորժամ տեսին Խնկլիզք՝ թէ միով գնդա-  
պետաւ իւրեանց՝ փախչին այնքան բազմու-  
թիւնք զօրաց , վստահացան յոյժ և սկսան յա-  
ռաջանալ պատերազմաւ ՚ի վերայ նոցա . մինչ  
թողեալ ամենեցուն զղէն , և զքենեակքս իւ-  
րեանց՝ ՚ի բաց փախեան մերկք . և կալեալ  
Խնկլիզաց զքենեակսն դարձուցին ՚ի վերայ  
թշնամեաց իւրեանց :

Բայց անդանօր գոյր հեղեղատ մի բազմա-

Չուր և խոր յոյժ , ընդ որ և փիղ անգամ ան-  
ցանել ո՛չ կարէր լողալով . ՚ի վերայ Չրոցս այ-  
սոցիկ գոյր կամուրջ մի . բայց ՚ի բազմութենէ  
փախուցելոցն ըոլորովին կոտրատեալ էր , ուս-  
տի բազումք ՚ի փախուցելոցն անկան անդ յեր-  
կիւղէ և մեռան : Իսկ որք զերծան ՚ի Հեղե-  
զատէն թողեալ զինչս իւրեանց փախեանց ջիւր  
և ցան , և Ինկլիզք տիրեցին անթիւ հարլս-  
տութեան նոցա :

Շուջադովլայ չկարողանալով գտանել ին-  
քեան տեղի ապահով՝ վասնորոյ փախուցեալ  
գնաց ՚ի քաղաքն Բնարիս՝ և եկաց անդր . զի  
կրկին տացէ պատերազմ՝ ընդ Ինկլիզս . բայց  
լուեալ Ինկլիզաց առաքեցին զգունդ մի զօ-  
րաց ՚ի վերայ նորա , զոր լուեալ Շուջադով-  
լայ փախեալ յերկիւղէ և գնաց յԵլաբազ և  
անտի ՚ի բնիկ քաղաք իւր Ալուտ :

Իսկ Շահալէմ թագաւորն ո՛չ փախկալ ընդ  
նմա , այլ մնաց ՚ի ճանապարհի . և զօրքն  
Ինկլիզաց յորժամ ՚ի Բաքսարայ դառնային՝  
գտին գնա ՚ի ճանապարհի , և միաբանեալ  
ընդ թագաւորին՝ եկին և կալան զԲնարիս :  
Եւ ապա գնացին ՚ի վերայ Սուբայ Ելաբա-  
զայ և տիրեալ անդ քաղաքին և սահմանաց  
նորա , դարձան ՚ի վերայ Ալուտայ՝ որ է Ելաբ-

նահօռ . և յորժամ սոցա և ս տիրեցին , ան-  
 ճարոցու Շուշադօվլա և փախուցեալ գը-  
 նաց 'ի կողմն սուբային Ակպարարատայ՝ առ  
 աղզն Աղուանից : Բայց ծանիր աստանօր . զի  
 ՚ի ժամանակի առաջնոց Աղուանից բազումք յազ-  
 գէ իւրմէ գնացեալ և բնակեալ էին 'ի տէրու-  
 թեան նոցա , այսինքն 'ի Շահջանապատ և  
 Ակպարաբատ սարբարսն , որք 'ի նահանջիլ  
 թաղաւորացն՝ բազմացեալք յոյժ . և մեծա-  
 մեծաց նոցա բռնացեալ տիրեալ էին մեծագոյն  
 մատին երկուց սուբայից . յորոց առաջինն  
 է եօթներորդ սարբարն Պանօջ , երկրորդ՝  
 գաւառն մեծահարուստ՝ զոր կոչին Ֆարու-  
 ղաբատ , ուր գոյր ոմն իշխան Ահմադխան Բըն-  
 կէշ անուամբ , որ ունէր զբազում զօրս յազ-  
 գէ իւրմէ , և սարբարն Բդաւօն , Հէսսար ,  
 Աամաւօն , և այլ գաւառք էին 'ի ձեռս ուր-  
 ումն յազգէ նոցա՝ որոյ անուն էր Հաֆէզ  
 Ռահմաթխան՝ տէր բազում զօրաց . որ ընդ-  
 իւր նուաճեալ էր մինչև ցութեբրորդ գաւառն  
 'ի կողմն Աամաւօնայ . զՀեթիա , զԱլավան ,  
 զբաղաքն Բրէլի : Իսկ սարբարքն Սիրինա-  
 գար , Սլմբուլ Մուրաաարատ , և վեցերորդ  
 գաւառն Բիւօվօլի էր 'ի ձեռս իշխանին Ղուն-  
 դիախան անուն , որոց ամենեքին բռնացեալ ,

նչ տային զհարկ թագաւորին :

Եւ յորժամ գնաց անդր Շուշադովլա ,  
խնդրեաց ի սոցանէ օգնութիւնս , խոստանա-  
լով նոցա զբազում դրամ . բայց նոքա քով  
գիտելով զերդմնազանցութեանցն ընդ Աս-  
տուճալի խանին՝ նչ օգնեցին նմա : Այլ վասն  
ճանօթութեան նոցա մի զարմանար , զի այս  
ի նախնեաց եկեալ սովորութիւն է թագաւո-  
րաց և իշխանաց յղել զմանս ի լրտեսու-  
թիւն պատերազմաց և աշխարհաց , և գալ  
ճանուցանել տերանց իւրեանց՝ որպէս և սոքս  
արարեալ՝ քով ճանօթք էին բանից Շուշա-  
դովլային , և արհամարհեցին զխնդիր նորա :

Առ որ անճարացեալ Շուշադովլայ մնաց  
անդր . և յլեաց զմի ոմն ի ծառայից իւրոց  
ի Գաբան՝ առ ազգն Մարտիանոց , խոս-  
տանալով տալ նոցա զվաթսուն լաք ու-  
փիս , եթէ օգնեսցին ինքեանս ընդ որ հաճե-  
ցեալ իշխանի տեղոյն , առաքեաց զսպարապետ  
մի Մհար անուն հանդերձ վեց հազար հե-  
ծելագորօք յօգնութիւն նորա : Այլ մինչ ի  
գալ զօրուն ինքն Շուշադովլայն ևս ժողո-  
վեալ էր զբազում զօրս և միաբանեալ ընդ  
նոսս , եկն յաշխարհն Լլարազ՝ ի կողմն  
ութներբորդ Քուռաջնարատ , զի տացէ պա-

տերազմ՝ ընդ ազգին Ինկլիզաց :

Իսկ ազգն Ինկլիզաց յորժամ տեսին զնոսա՝ ելին յամբողջ անտի չորս հազարապետք զօրօք իւրեանց և ելին ՚ի վերայ բանակին Շուշադուլայ : Յորժամ տեսին զնոսա զօրք Սարաթացոց՝ առանց պատերազմի վաստեան ամենեքեան , ընդ որս և Շուշադուլա , որ գնաց անտի ՚ի քաղաքն Պարողարատ և յետ բազում դեղերանաց անդր՝ և չգտանելոյ ուստեքէ օգնութիւն՝ անճարացաւ , առաքեաց դեսպանն ռս առ ազգն Ինկլիզաց և խնդրեաց զխաղաղութիւն . խոստանալով նոցա՝ ( եթէ տայցեն ինքեան յետս զերկիր իւր , ) լինել ծառայ թագաւորին Ինկլիզաց մեծաւ հաւատարմութեամբ :

Եւ յորժամ զնացին դեսպանքն՝ ազգ Ինկլիզաց հաճեցան յոյժ՝ և առեալ ՚ի նմանէ ըզծախս պատերազմին՝ ուստիս վաթսուն լաք՝ երգմենեցուցին զնա և դարձուցին ՚ի նա զքաղաքն :

Իսկ զերեսին սարքարսն , զառաջինն՝ Լաբազ : զերկրորդն՝ Քուրաջանարատ , և զերրորդն Սարայչոյ՝ հառն Շահալեմ թագաւորին առ ՚ի սկտս նորա . բայց զամբոցն Լաբազայ ոչ ետուն ումնք . այլ եդեալ անդ

գորականս՝ պահեցին ընդ կառավարութեամբ  
իւրեանց :

Իսկ ողորմելի Կասումալի խանն՝ փախու-  
ցեալ գնաց ՚ի Սմբուլ Մուրատաբաս՝ առ իշ-  
խանն Պառնդիա խանն՝ և մնաց անդր :

Սոյնպէս և Սմբուն փախուցեալ զօրօք իւ-  
րովք գնաց ՚ի կողմն Ակալարաբատայ ՚ի դաւա-  
սըն Բարըթփուռ՝ առ ազգն Սլաթիաց . որոց  
աաջայի անուն էր Սուհար սինկ՝ այլ բազմա-  
զօր և հարուստ յոյժ . որ կալաւ զնա և եդ ՚ի  
ժառայթեան իւրում : —

Յետ այսորիկ ազգ Ինկիլիզաց դրով կալան ՚ի  
Թադաւորէն զՔանկալա և զՔհար այնպէս՝ զն  
չունիցի այլ ոք մասն յաշխարհացս այսոցիկ .  
և խոստացան զհարկ նոցա ամ ամի երեսուն լաք  
սուփի հատուցանել Շահալէմ Թադաւորի :

Յետ այսորիկ Թադաւորն մնաց ՚ի քաղաքին  
Իլաբաղ և ոչ գնաց ուրեք . և այս՝ վասն եր-  
կուց պատճառաց . նախ՝ զի ազգն Ինկիլիզաց ոչ  
տային թոյլ ելանել յիշխանութենէ իւրեանց .  
և երկրորդ՝ զի իշխանք իւր ամենեքեան ապըս-  
տամբեալք յիւրմէ՝ ոչ տային զհարկ աշխար-  
հացն . այլ միայն անուամբ ընդունէին զնա Թա-  
դաւոր ինքեանց : —

Յայսմիկ ժամանակի տերեալ էր աշխարհին

Եւսոսայ ազգ մի կուսպաշտ՝ որում Միկ զու-  
նունն կոչէին . քանզի յամի Տեառն 1764 ոմն  
յիշխանաց նոցա Չսալալ կոչեցեալ՝ ժողո-  
վեաց զօր բազում և տիրեաց աշխարհին Եւ-  
սոսայ, կիսոյ աշխարհին Աշմերայ և Մուլ-  
թանայ :

Ազգս այս սչ էր յառաջ, այլ յամի Տեա-  
ռն 1545, յաւուրս թագաւորութեան Շահ-  
Չահանայ, յարուցեալ ոմն կուսպաշտ քա-  
րոզատու ՚ի Բաթրի ազգէ, Նանէք պնթի  
անուն, քարոզութեամբ իւրով դարձոյց զբա-  
զումս յազգէն Հնդկաց ՚ի հաւատ իւր . որք  
անուանեցան Միկք : Բանդի սոքա սչ պաշ-  
տեն զկուսս, սչ զձեռակերտ գրօշխալս հնդ-  
կաց, և սչ խտրեն ուտել ընդ միմեանս . զի յո-  
րոյ ազգէ և իցէ ոք՝ Միկք ուտեն ընդ նմա :  
Պահեն ամենեքեան զհերս զլիսոց իւրեանց՝  
առանց դերժելոյ բնաւին, և պաշտին զմի  
Աստուած միայն՝ որ ՚ի լիզուս իւրեանց, Նի-  
բանկը կամ Ներէնջ Նիրակ ասեն . յսինքն  
աննիւթն Աստուած՝ որ ստեղծ զերկինս  
զերկիր, անսկիզբն և անվախճան :

Յամի Տեառն 1709 յաւուրս Բադրչահ  
թագաւորին ոմն ՚ի կուսպաշտից Նանէքայ՝ ա-  
նուամբ Բնդայ, յաշխարհին Եւսոսայ ժո-

զովեաց ՚ի Սիկաց զօր բազում : և աստատմբեալ  
 ՚ի թագաւորէն Հնդկաց՝ սկսաւ ժողովիլ զօրս  
 յայլ և այլ ազգաց և առնել զնոսա Սիկս ,  
 առաւել քան զքոսն հազար այր : և յաւել  
 դրոշմել ՚ի վերայ դրամոյ զանուն իւր՝ որոյ  
 թէպէտ և բազում անգամ գնացին ՚ի վերայ  
 զօրք թագաւորին՝ բայց սչ ինչ կարացին առնել  
 մինչ յետ երկրորդ ամի աստատմբութեան  
 նորա՝ գնաց անդր իշխան ոմն մահմետական  
 Սահամատալի խան անուն : և կացեալ ՚ի ծա-  
 րայութե Քնդայ՝ ապա դաւեաց և սպան զնա :  
 Յետ սպանման նորա գնացին զօրք թագաւո-  
 րին և տիրեալ երկրին՝ բնաջինջ արարին զա-  
 նուն Սիկաց : Բայց այժմ , յետ նահանջիլոյ  
 թագաւորութեան Շահալմէմի , Սիկ ոմն իշ-  
 խան Սկուլ անուամբ տիրեալ էր աշխարհին՝  
 որպէս վերն պատմեցի :


Թէպէտ վասն ընտանութեան և հաւատոյ  
 թագաւորն Քարօլոյ Ահմադ Շահ Գու-  
 րանի կոչեցեալ երեք անգամ եկն յօգնութիւն  
 թագաւորին Շահալիմայ՝ առ ՚ի խրատել  
 զատստամբսն , բայց ոչ ինչ կարաց առնել .  
 քանզի տեսանէր զի թագաւորն Հնդկաց թու-  
 լութեան և անարիութե զհետ էր , և իշխանք  
 նորա ամենեքեան աստատմբեալք ՚ի նմանէ :

մասնորոյ ասրագործ դարձաւ յետս :

Գլխիլի է զի ազգ Սկոց ոչ պատերազմին դէմ՝ յանդիման, այլ քսան հազարք աստի, և քսան հազարք անտի յարձակեալ կողոպտեն զթշնամիս իւրեանց, և ոչ տան թոյլ ումն քտանել զկերակուր, այլ աստ և անդ ասպատակելով անհանդիստ առնեն զթշնամիս իւրեանց: Օօրք նոցա ամենեքին ձիաւորք են, ունին զերկայն հրացանս, զաէգ, դսուր, զնետ, և զայլ տեսակ մի նոր (O) այսպէս՝ որ է սուր ինչ, զոր ազուցեալ ՚ի մասն՝ պտոյաքեն յոյժ, և ապա ընկենուն ՚ի վերայ թշնամեաց, և միշո զբահազգեաց շրջին հետիոտս, օրական իբրև քառասուն քօս: —

Նանեքն՝ որ ծնեալ էր ՚ի Տրմնդի գեղջ, մեռաւ ՚ի գեօղն Սատարիուռ: Անուն հօր նորա էր Սալուէ՝ որ էր յութերբորդ ամի Ս հանդիր թաղաւորին, սորա աշակերտք էին՝ Անկաթ, Ամրդաս, Ռամդաս, Արջանջի, Հարդօվինդ, Հոաչաջի, Հարկիշ, Թէքբահադուր, Գօվինդսինկ, Բալէքամ, որ է Բընդէն: Սա էր՝ որ պատերազմեցաւ ընդ Բադրշահ լմադաւորին, զոր յետ երեսուն ամաց Աբդօլմսէ խանն և Ամդամի խանն ըմբռնեցին ՚ի բերդւոջն Ռօդասդար: —

Իսկ Շուջադօվայն յետ հաշտութեան  
 ընդ ազգին Ինկլեզաց կրկին կալաւ զերկիր  
 իւր ընդ իշխանութեամբ իւրով, և յոյժ սի-  
 րեաց զԱզգս մեր. և բերեալ զպարսն Պրիզոր  
 Այվազեան արար զնա սպարապետ ինքեան,  
 և ետ ՚ի ձեռս նորա զօրս բազումս, որ ողոր-  
 մութեամբ Քրիստոսի սպարապետն Պրիզոր՝  
 արար կրկին զմեծամեծ քաջութիւնս, ջնջեաց  
 զամենայն ապստամբսն յերկրէ նորա, և ժո-  
 ղովեաց յազգէս մերմէ արս իբրև վաթսուն՝  
 որք կան այժմ յաշխարհին Աւօտ. և ունին  
 զանուն քաջութեան սիրեալ ընդ ամենայն Հնդ-  
 կաստան, զօրս աէր Աստուած սաՀեսցէ միշտ  
 սլայծառս ամենեքումք հանդերձ, որ մինչև  
 յաշխարհն Պաքան զանուն Քրիստոնէից  
 միայն լսելով՝ սարսեալ դողան ազգք Հնդ-  
 կաց. և շնորհօքն Քրիստոսի ամենայն ուրիք  
 կանգնեալ կայնչան ամենայողթ Սուրբ Իսաչի  
 նորա, որում երկրպագանօղքն զօրանան միշտ,  
 Այսքանս առ այս: Պատմութիւնս աւարա-  
 եղև: —



## ՏՐԱԿ ԱՌԱՆՁԻՆ :

Ուրեգիւր աստուծոյ թագաւորին շնորհ ընդարձակի զա-  
րն Յօննիսի . որո՞՞մ անուն էր՝ Առաջին :

ԱԿԱՐ Շ ա՛հ Ս ե՛ծն ինքնակալ Հնդկաց ,  
որդի Նասուրդին Հմայունի , թագաւորեաց  
յամի Տեառն 1554: Յաւուրս սորանոր Պու-  
ղոյոյ եկեալ էր Պարոն Յակոբ հանդերձ իւր  
խաթունով՝ և բնակէր ՚ի Քաշմիր վաճառակա-  
նութեամբ . ուր ծնաւ սորա որդի մի : Բայց  
տարաբախտապէս տեղն քահանայ չգտանելով  
որ մկրտին . իւրեանք ըստ հաճոյից անուն կոչե-  
ցին նորա Պ ու լ զ ո ն է լ :

Հօր և մեծագործ ինքնակալն ՚ի սոյն միջո-  
ցի հպատակացն այց անելոյ աղագաւ՝ դայ  
՚ի Քաշմիր և զշորէրն փոխած պատելոյ ժա-  
մանակու՞մ պատահի Պարոն Յակոբն մատաղ  
զաւակին և շատ հաճե՛նայ ընդ գեղ երեսաց  
նորա: Քանի մի իշխանաց հրամայէ կալ անդ  
և ստուգել թէ ո՞ւմ զաւակ իցէ . և հանդերձ  
ծնողօքն առեալ տանել իւր մօտն :

Իշխանքն երբ ստուգեցին զմանկանէն՝  
նորա ծնողօքն տարան Ինքնակալի մօտն .  
Ակբար երբ լսեց որ Հայոց ազգէ է՝ շատ ու-  
րախացաւ՝ շատ սիրեաց զերեսայն . և դարձեալ

առ Հայր նորա՝ ասաց “ անձ պարոն մուսաֆիր,  
այսինքն՝ հիւր . և պատուելի վաճառական .  
տան ինձ զքոյ որդին . որ ես ինձ որդեգիր  
առնեմ , թէ ոչ . քանզի ես որդի չունիմ :”  
Խոնարհեալ Պարոն Յակոբայ պատասխան-  
եաց , “ Տէր իմ Աբբայ յաւիտեան կաց . թե-  
պէտ ես և իմայինքս քո ծառայքն եմք . բայց  
իմ յօժար կամօք ոչ տամ . քանզի ես ազգաւ  
Հայ և Քրիստոնեայ եմ , և դու տաճիկ քուրա-  
եթէ ես մանուկս քեզ տամ” և դու քուրա-  
ցուցանես զդա , ես խոյտառակ լինիմ ՚ի մէջ  
ազգի իմում , և վատամբաւեն նոքա զիս ասե-  
լով . թէ վասն դրամոյ կամ ուժի ետ զորդին  
իւր թագաւորին :”

Թողաւորն շատ ուրախացաւ այս բարե-  
պաշտօն և աներկիւղ պատասխանոյ վերայ , և  
երդուաւ որ ոչ մանկան և ոչ ծնողաց հաւա-  
տոյ քակտումն չառնէ . “ Կուք ձեր հաւա-  
տին հաստատ կացէք , ասէ . հողւովս ուրախ  
եղէց . բայց ես որով հեռե զաւակ չունիմ ,  
սորա ինձ որդեգիր ընկալայց :”

Ապա հրամայեաց որ թագաւորական փա-  
ռօք և պատուօք զարդարած տարցին զնոսա  
յապարանսն իւր . և ամէն կերպ շնորհաբու-  
թեամբ պահեն որպէս իւր որդի , որքան ինքն

ի Քաշմիր Ծնալոց եցէ : Յետ այնորիկ՝ երբ  
 դարձաւ յԱլքարարատ՝ ընդ իւր առ զսոյն  
 որդեգիր Ղուլղանէլն հանդերձ նորա ծնո-  
 ղօքն . ուր ետ պարոն Յակոբայ զտեղի բնա-  
 կութեան մարձ ՚ի Սլախանայ (կամ զինարան)  
 Թաղաւորին : Հրամայեաց յետոյ որ ժամ  
 շինեն , Հայոց քահանայ բերել տան , և իւ-  
 րեանց հայրենի բարեպաշտութեանն հետևեն :  
 Օայս բան լսելով՝ ևկին ՚ի նոր Քուղայոյ վար  
 դապետ , քահանայ , և շատ տուն Հայեր  
 յԱլքարարադ . զորս շատ պատուով ընդու-  
 նելով Թաղաւորին՝ պարգևեաց նոցա հինգ հա-  
 ղար բեգայ գետին յԱլքարարադ . վասն տուն  
 պարտէզ , այգի և այլ պիտանի տեղեր շինե-  
 լոյ : Իսկ Ղուլղանէլ որդեգիր Թաղաւորին  
 միշտ յարբունիսն զարգանալով , թէ Թաղա-  
 ւորին և թէ Թաղուհեացն շատ սիրելի գտաւ .  
 զոր համարեա՛ թէ զրկաց ՚ի գիրկս փոփոխե-  
 լով պահէին :

Գիտէ Մտուած իւր սիրելիքն արգոյ և  
 սխառուական երևեցուցանել օտար ազգաց մօտ .  
 որովհետև Թաղաւորն գթացաւ մին Հայոյ ե-  
 րեսայ իւր անարատ հաւատովն պահել , և նո-  
 րա սիրոյ համար ազգին այսքան պատիւ և  
 սէր ցուցանել , անխափան բարերարն Մտ-

ուած ևս՝ հաճեցաւ նորա սրտին համեմատ  
 վարձ տալ իւրն, Ուստի ՚ի թիւն 1563, Ոսարլ  
 Աւալ 17ու մն թագաւորին արու զաւակ պար-  
 գեւեաց յիւր սիրելի թագուհւոյն, որ կսչե-  
 ցաւ Միւր Սլիմ Սալաթին, այսինքն՝ թա-  
 գաւորազուն, Մեծագոր ինքնակալն անգամ  
 չէր անտեղակ այսր աստուած եղէն շնորհացս .  
 ուստի միշտ ասէր . ասեն . թէ “ վասն գալս-  
 տեան ազգին Հայոց և սիրելի որդւոյն իմոյ  
 Պուլղոնէլի նայեցաւ առ իս Աստուած . և  
 պարգևեաց ինձ զայս երկրորդ զաւակ ,” Եւ  
 այսպէս երկու մանկունքն ՚ի միասին զարգա-  
 նալով խիստ շատ սիրով մնային իրար հետ, և  
 թագաւորն սոցա անմեղ սէրն տեսանելով  
 ուրախանայր հոգւով չափ :

Յորժամ չափուհաս եղև Պուլղոնէլն, Ակ-  
 բար թագաւոր կալուածս, այսինքն Էգեի շը-  
 նորհեաց նմա զՀուգլի բաղաքն՝ ՚ի կողմն Բան-  
 գալու, զՍամար գաւառն կամ փարդանէն՝ ՚ի  
 կողմն Ակբարաբաղայ, ուստի ելանէ աղ աղ-  
 նիւ . և զերկիրն Փանջաբայ ՚ի Մահոռ, Ա-  
 պա սկսաւ Պուլղոնէլն իւր համար հոյակապ  
 պարտանի շինել, և շուրջ զնովաւ կրպականի,  
 այսինքն՝ դուքանանի ձգել տալ, և տեղն ակ-  
 նալաճառ՝ այսինքն ջուվահր չիք նստուցանել :

Քանզի ասի, թէ ինքն ևս շատ սէր ունէր քարեղէն աւնուլ և ծախելոյ: Երբևի՛ որ բընուած թեամբ շատ հեզ և խոնարհ անձն պիտի ելած լինի սա . բայց Ակպար թագաւորն այնքան սիրէր զնա՝ մինչ առանց սորա հրամանն ոչ ոք կարողանայր ինչ առնել: Թէ մեծամեծք և թէ աղքատք: Ուլ և՛ կամէր ասի, սորա մօտ գնալ՝ ամենեկին ազատ և համարձակ թոյլ տայր . և որոք իւր մօտ գնացողի խնդիրքն անկատար ոչ թողոյր . ոչ ուտէր և ոչ ըմպէր, ոչ եթէ հարատու թեամբ զինքն ցոյց տարոյ ազագաւ . այլ զի՛ որ բնութիւն արարեալ էր իւրն զայն: Բայց ասի թէ շատ հաւաքի Մանուէ, այսինքն Եօթնհազարեակ ունէր, և շատ հետեւէր նմին:

Յամի Տեառն 1605 մեռաւ Ակրար Թագաւորն . և Միրզա Սլիմ Սալաթինն յաջորդեաց նմա . որ անուանեցաւ Եւրդին Չըհանգիր, Երբ աշխարհ ամենայն Թագաւորիս նոր աթոռ նստելն շնորհաւորել գնային՝ Վուլղանէն յերկիւղէն զովացեալ ՚ի տանէն գուրս չերանէր . և ոչ թագաւորին աչքալոյս գնայր: Քանիցս անգամ մարդ ուղարկեաց և հրաւիրեաց զնա՝ որ գայ, բայց նորա սուտ երկիւղն պարտաւորեաց զնա՝ որ միայնակ փախ-

չի գնայ 'ի Հուզի յիւր կալուածքն : Այս  
 փախուստ զԹագաւորն տխրացոյց յյյժ յյյժ,  
 ուստի հրամայեաց որ բոլոր Հայոց ազգին զգու-  
 շանան . յետոյ խմանալով որ առաւել յերկիւ-  
 ղէն էր փախչելն , երդմամբ գրեաց թէ “ մի  
 երկնչեր , ես և դու եղբայր եմք , մի թէ՛ սչ  
 գիտես իմ սէրն 'ի մանկութենէ , եկ ինձ մօտ  
 և ինչ որ քո խնդիրքն լցեն ' նոյնն ես կատարե-  
 ցից քեզ : Մի թէ՛ ես սխտի ապերախտ դառ-  
 նամ իմ ճնողաց պատուիրանին՝ որ քեզ վնաս  
 մտարերեմ . եթէ ոչ եկեցես կամաւ , կասրա-  
 նօք կրերեմ : ” Նոյնպէս և մեր ազգն աղաչա-  
 նօք գրեցին , որ դայ :

Յորժամ գնաց ներկայացաւ , սիրեաց զնա  
 Թագաւորն , և ասաց , “ այժմ ընդէր հետի  
 կաս եղբայր . մի թէ ես հօրս պարգևեալ կա-  
 լուածքն 'ի քէն 'ի բոց պահանջեմ . կամ ինչ  
 որ պահաս քեզ և ես սչ լցուցանեմ : Խնդրեան  
 մինչև իմ Թագաւորութեան կէսն և տաց ” ,  
 Երեսի վերայ 'ի դետին անկաւ մեր Թագա-  
 ւորացու ճգնաւորն , և ասաց , “ Տէր , ճըշ-  
 ժարտիւ գիտեմ քո սէրն և շնորհն . բայց ա-  
 ղաչեմ ինձ թոյլ տալ զի աղքատի պէս 'ի  
 տան նստեալ և վասն քո աղօթս արարից . ”  
 Ասաց Թագաւորն , “ Որով հետև սոյդ են կամք

քո, ուրախ եմ. արձ որպէս կամիս, բայց երբեմն դաս ՚ի տեսութիւն ինձ, ”

Այնուհետ և հրաժարեալ նորա յամենայն երևելի գործոց եւս զինքն խաղ կանչելոյ, որ Հնդկաց լեզուով Ռաք ասեն, և այնքան յառաջացաւ որ ՚ի հնոց լաւ կանչողացն պակաս չմնաց. որպէս ՚ի Հնդկաց Արամալայ անուանեալ Պարքոջ անունն հաչակեալէ: Այսպիսի անտեսոց հետևելով անխիթ արար զինքն, իւր զաւակքն, յորոց ասի, թէ գտանին դեռ ոմանք ՚ի Սաննագոր ՚ի կողմն Բանկալու, ևս և իւր կալուածանին և իւր խի Ազդն:

Իբրաւի վերուստ մինչ ՚ի վերջ այս պատմութիւնս ցոյց տայ մեզ, թէ յատուկ Աստուծոյ կամքն իցէ լեալ, սորանով մարդոյս տկարութեան վերայ ծիծաղել: Արեւսաց զերեցիկութեամբ շատնք Ակպար Թագաւորի պէս խաբուած մեծամեծ գուշակութիւնս արարին. բայց վերջն փոշխմանեցան: Պիցուք թէ Աստուած թագաւորին հօրանման բաղցր, և ողորմած զաւակ չպարզեւէր. արե՛ դու մին մտածիր. թէ Հնդստան ի՞նչ լինէր այս մեր եօթնհազարեակի հետ մոլորելոյ ձեռնումն. — Ի՞նչ մեծագործութիւն, ի՞նչ աղբի շինութիւն, և ի՞նչ հզօր հզօր և երևելի գործեր չէր կարող

առնեին՝ այս մեր խաղ կանչող թաղաւորացուն,  
 Աղբար Թաղաւորի Հայր Հմայօնն՝ Պար-  
 սից զօրքով եկաւ իւր երկրին տիրեց ։ և որդին  
 ևս դաշն խաղաղութեան ունէր նոցա հետ , որ  
 Պ ուլղունէին պիտի որ գիտակ լինէր . և եթէ  
 կամենայր՝ իւր Պարսկաստանում բնակած ազ-  
 գայնոց համար որ բարիք չէր կարող առնելն ,  
 բայց չարար ։ Եւ չգիտեմ իւրեանց ազգ-  
 այսպէս անփոյթ առնողանին ե՞նչ կտանեն իւ-  
 րեանց հետ ։









